Աշոտ Մելքոնյան, Արտակ Մովսիսյան, Էդուարդ Դանիելյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

6

ԴԱՍԱԲԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Խմբագիրներ՝ *Արամ Սիմոնյան, Աշոտ Մելքոնյան, Արամ Նազարյան*

Մեթոդիստներ՝ *Արմինե Սարգսյան, Արման Մալոյան*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրագնդի վրա ապրում են բազմաթիվ ժողովուրդներ: Նրանք կազմավորվել ու ասպարեզ են եկել տարբեր ժամանակաշրջաններում: Նրանցից յուրաքանչյուրն իր ներդրումն է ունեցել համաշխարհային պատմության մեջ: Ոչ բոլոր ազգերն են, որ ունեն հազարամյակների պատմություն ու մշակույթ: Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են: Ձևավորվելով շատ վաղ ժամանակներում՝ նրանք բազում դարերի ընթացքում ունեցել են ուժեղ պետություններ, ստեղծել հարուստ մշակութային ժառանգություն: Դրա շնորհիվ հայ ժողովուրդն իր պատվավոր տեղն է զբաղեցրել համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Խիստ կարևորելով Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Արցախում) հայ սերունդներին հայրենիքի մասին գիտելիքներով զինելու, հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում հայոց պատմության բացառիկ նշանակությունը՝ հիմնական դպրոցի ծրագրում ներառվել է այդ առարկայի ուսուցումը: Առարկան դասավանդվում է 6–ից 9–րդ դասարաններում:

Հայոց պատմության սույն դասընթացը նպատակ ունի աշակերտներին ծանոթացնելու հայ ժողովրդի հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի, նրա տարածքում գոյություն ունեցած պետական կազմավորումների, հայկական արքայական ու իշխանական տոհմերի, պետականության պահպանման համար հայության մղած հերոսական պայքարի, հայ մարդու ստեղծած մշակութային կոթողների պատմությանը և բազում հետաքրքրական այլ դեպքերի ու երևույթների: Աշակերտները հնարավորություն կունենան Հայաստանի պատմության վերաբերյալ ընթերցելու հայ ու օտար հեղինակների հաղորդած հետաքրքրական տեղեկություններ:

Համոզված ենք, որ ծանոթանալով հայոց պատմության հերոսական էջերին՝ յուրաքանչյուր հայ պատանի անսահման սիրով կլցվի դեպի Հայոց աշխարհը, նրան կհամակի հպարտության զգացումը, և ներկա աճող սերնդի ներկայացուցիչները վաղը կդառնան մեր երկրի իսկական քաղաքացիներ ու արժանիորեն կփոխարինեն իրենց ծնողներին:

Հիմնական (միջին) դպրոցում ծրագիրն ընդգրկում է հայոց ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այն դասավանդվելու է ըստ չորս ժամանակաշրջանների՝ հին, միջին, նոր և նորագույն

պատմության փուլերի: Վերոհիշյալ յուրաքանչյուր դարաշրջան ընդգրկված է մեկ ուսումնական տարվա ծրագրում:

6–րդ դասարանի դասագրքի նյութը վերաբերում է հայոց հին պատմությանը՝ Հայաստանի տարածքում նախնադարյան հասարակությունից, Հայկ Նահապետի հիմնադրած Հայկյանների (Հայկազունիների) պետությունից մինչև 3–րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածը: Պատանիները պատկերացում կկազմեն մոտ 400 հազար քառակուսի կմ տարածք ունեցող Հայկական լեռնաշխարհի մասին: Այստեղ է ձևավորվել հնդեվրոպական մայր ժողովուրդը, որից առաջացել են Ասիայի և Եվրոպայի շատ քաղաքակիրթ ժողովուրդներ՝ պարսիկները, հայերը, հնդիկները, հույները, իտալացիները, գերմանացիները, ֆրանսիացիները, անգլիացիները և այլ ազգեր:

Նույն Հայկական լեռնաշխարհում ի հայտ են եկել երկրագնդի հնագույն պետություններից Արատտան, Արմանին, Հայասան, Նաիրին, Արարատյան թագավորությունը (Ուրարտու): Հայկական պետականությունն իր հզորության գագաթնակետին է հասել Արտաշեսյան արքայատոհմի գահակալության ժամանակ (Ք. ա. 189 թ. – Ք. հ. 1 թ.): Հին աշխարհի նշանավոր տիրակալներից մեկի՝ Տիգրան Մեծի օրոք (Ք. ա. 95–55 թթ.) Հայաստանը դարձել է աշխարհակալ տերություն, հայ մշակույթը հասել է մեծ բարձունքների:

6–րդ դասարանի դասընթացը հետաքրքրական նյութ է պարունակում նաև Հայ Արշակունիների արքայատոհմի գործունեության առաջին շրջանի (Ք. հ. 1–ին դարի կեսերից մինչև 3–րդ դարի վերջ), հայ–հռոմեական և հայ–պարսկական հարաբերությունների, հելլենիզմի՝ հունականության դարաշրջանում հայ մշակույթի զարգացման և այլ հարցերի մասին: Դասագրքի խմբագրական կազմը հայ պատանիներին մաղթում է բարի մուտք դեպի հայոց բազմադարյան պատմության ու ազգային մշակույթի ծանոթության հետաքրքրական աշխարհը:

6–9–րդ դասարաններում «Հայոց պատմության» սույն դասընթացին ծանոթանալուց հետո ավագ դպրոցը (10–12–րդ դասարաններ) մեր աշակերտությանը նոր հնարավորություն կընձեռի հայրենի պատմությունն ավելի խորությամբ ուսումնասիրելու, բազմաթիվ բարդ և ուշագրավ հարցերի պատասխանները գտնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ

«Հայրենիք» հասկացությունը: Աշխարհի յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր հայրենիքը: Դա այն տարածքն է, որտեղ նա դարեր շարունակ ապրում է, կերտում իր պատմությունը, արարում մշակութային արժեքներ:

Ամենավաղ ժամանակներում մարդիկ ապրել են այն վայրերում, որտեղ եղել են կյանքի համար նպաստավոր պայմաններ: Հետագայում նրանք տեղաշարժվել են այլ վայրեր և հետզհետե բնակեցրել երկրագնդի գրեթե ողջ տարածքը: Կան ազգեր, որոնք, ի սկզբանե ձևավորվելով մի որոշակի տարածքի վրա, մշտապես

Հայկական լեռնաշխարհը տիեզերքից

Մարտիրոս Սարյան. «Հայաստան»

մնացել են նույն տեղում: Այնտեղ է անցել նրանց ամբողջ պատմական ուղին: Այդպիսի հին ու բնիկ ազգերից են հայերը: Հայերի հայրենիքը կոչվում է Հայաստան: Այն ընդգրկում է ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Ահա թե ինչու Հայկական լեռնաշխարհը համարվում է հայերի բնօրրանը՝ հայրենիքը:

Հայրենիքը սրբացվել է և ժողովրդի հիշողության մեջ ամրագրվել առասպելներով, լեգենդներով ու հետաքրքիր պատմություններով: Այդ հայրենի հողը՝ հայրենիքը, պաշտպանելը դարձել է յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը և պատվավոր իրավունքը:

Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները: Հայերի հայրենիք Հայկական լեռնաշխարհն ունի գերազանցապես լեռնային տեղանք: Ամբողջ տարածքը կտրատված է բարձր լեռնաշղթաներով ու խոր ձորերով: Կան նաև դաշտեր, հովիտներ ու սարահարթեր:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տարածքը հարևան երկրների համեմատ բարձր է: Դրա պատճառով հաճախ անվանում են նաև ***Հայկական բարձրավանդակ, Լեռնային երկիր, Լեռնային կղզի:*** Օտարները Հայաստանը կոչել են ***Արմենիա, Ուրարտու,*** հարևան վրացիները՝ ***Սոմխեթի:***

Հայկական լեռնաշխարհի սահմանները հարավում հասնում են Հայկական Տավրոսի, հյուսիսարևմուտքում՝ Պոնտոսի լեռներին: Հյուսիսում Կուր գետն է, արևելքում՝ Կասպից ծովը և Ուրմիա լիճը, արևմուտ-

Հայ ժողովրդի հերոսական ոգու և արդարամտության խորհրդանիշ Սասունցի Դավթի արձանը Երևանում

Մասիս և Սիս (Մեծ և Փոքր Արարատ) լեռները և Արարատյան դաշտը

Մեծ Արարատի գագաթը պատված է հավերժական ձյան շերտով: Այն իր սրորոտից ունի 4300 մետր բարձրություն և այդ չափանիշով (հարաբերական բարձրությամբ) երկրագնդի բարձրագույն լեռն է:

քում՝ Փոքրասիական սարահարթը: Լեռնաշխարհի կենտրոնական մասը հաճախ կոչվել է ***Միջնաշխարհ:***

Լեռները: Հայկական բարձրավանդակի ամենաբարձր լեռը ***Մեծ Արարատն*** է, որը հայտնի է նաև ***Մասիս*** անունով: Այն ծովի մակարդակից բարձր է 5165 մ: Իսկ ***Փոքր Արարատը*** կամ ***Սիսն*** ունի 3925 մ բարձրություն:

Ըստ Աստվածաշնչի՝ Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյ նահապետի տապանը հանգրվանել է Արարատի գագաթին: Արարատ լեռը քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի համար համարվում է սրբազան լեռ:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում՝ Արարատից անմիջապես արևմուտք, երկար ձգվում են միմյանց կպած, կարծես հայկական հինավուրց քոչարի պարը բռնած բազմաթիվ լեռնագագաթներ: Այդ պատճառով լեռների այդ շարքը՝ լեռնաշղթան, ստացել է ***Հայկական պար*** պատկերավոր անունը:

Նոյյան տապանը (Միջնադարյան խճանկար Պալերմոյից, Իտալիա)

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ամենաբարձր լեռը ***Արագածն է:*** Այն ունի 4096 մ բարձրություն: Ըստ ավանդության՝ Արագածի գագաթին է գտնվում Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի կանթեղը:

Հայկական լեռնաշխարհի բոլոր լեռները հրաբխային հանգած գագաթներ են: Սակայն կա մի գագաթ՝ ***Թոնդուրեկը,*** որն այսօր էլ գործող է: Մեր հայրենի տարածաշրջանը շարունակում է մնալ ակտիվ երկրաշարժային գոտի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրե՛ք «հայրենիք» հասկացությունը:
2. Ո՞րն է հայերի հայրենիքը:
3. Նկարագրե՛ք Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները:
4. Օտարները ինչպե՞ս են կոչել Հայաստանը:
5. Ներկայացրե՛ք Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները և ցո՛ւյց տվեք քարտեզի վրա:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Փորձե՛ք նկարել Հայկական լեռնաշխարհի քարտեզը՝ նշելով բարձր լեռներն ու լեռնաշղթաները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենիք, Հայկական լեռնաշխարհ, Հայկական բարձրավանդակ, լեռնային երկիր, լեռնային կղզի, Արմենիա, Ուրարտու, Սոմխեթի, Հայկական պար

ՀԱՅԱՍՏԱՆՆ՝ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՑՅ»-Ի

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Մեծ Հայքի թագավորության սահմաններն ըստ «Աշխարհացույց»-ի
Այլ պետությունների սահմաններ
Մեծ Հայքի աշխարհների սահմաններ
Փոքր Հայքի (Հռոմեական կայսրության գավառ (պրովինցիա)) սահմաններ
Հռոմեական կայսրության գավառների (պրովինցիաների) և Սասանյան Պարսկաստանի շահերի սահմաններ
Տիգրանակերտ
Վան
Մուշ
Անձիտ
Բագավան
Մայրաքաղաքներ
Վարչկենտրոններ
Այլ քաղաքներ
Ամրոցներ
Վանքեր
Մասշտաբ 1:5 500 000
(1 սմ = 55 կմ)
Սև ծով
Կասպից ծով
Վանա լիճ
Սևանա լիճ
Ուրմիայի լիճ
Գեղամա լիճ
Սևանա լճի մակերևույթի բարձրությունը ծովի մակարդակից 1900 մ
Ամենամեծ խորությունը 75 մ
Ամենամեծ երկարությունը 80 մ
Ամենամեծ լայնությունը 30 մ
Ամենամեծ մակերեսը 1360 մ²
Ամենամեծ ծավալը 1000 մ³
Ամենամեծ ջրհավաք տարածությունը 1000 մ²
Ամենամեծ ջրհավաքի ծավալը 1000 մ³
Ամենամեծ ջրհավաքի մակերես

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԼՃԵՐԸ, ԳԵՏԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վանա լճի մայրամուտը

Լճերը: Հայոց հայրենիքի տարածքը հարուստ է ջրային պաշարներով: Կան երեք խոշոր լճեր՝ ***Սևանը, Վանը և Ուրմիան:*** Սևանն ունի քաղցրահամ ջրեր և հայտնի է նաև ***Գեղամա*** կամ ***Գեղարքունյաց ծով*** անուններով: Ծովի մակերևույթից բարձր է եղել 1916 մ: Խորհրդային Հայաստանում ջրի անխնա օգտագործման պատճառով լճի մակարդակն իջել է 20 մետրով: Սևանա լիճը վտանգված է, ուստի այսօր ջանքեր են գործադրվում ջրի մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև հազվագյուտ ձկնատեսակները վերացումից փրկելու համար:

Վանա լիճը (հնում՝ ***Նաիրի երկրի, Բզնունյաց ծով)*** հայտնի է հատկապես ***Աղթամար*** կղզու վրա կառուցված նշանավոր ***Ս. Խաչ*** եկեղեցով: Լճի աղի ջրերում բազմանում է միակ ձկնատեսակը՝ *կարեմիը:* Մեր լեռնաշխարհի ամենամեծ լիճն ***Ուրմիան*** է, սակայն աղիության պատճառով չունի կենդանական և բուսական աշխարհ: Հնում այն հայտնի էր ***Կապուտան*** ծով անվամբ: Հայտնի են նաև ***Ծովակ Հյուսիսո*** (Չլդըր), ***Փարվանա*** և այլ լճեր: Հայաստանում կան մի քանի գեղատեսիլ ջրվեժներ:

Նեմրութ լեռան գագաթի լիճը Բզնունիք գավառում

Գետերը: Հայաստանի լեռնային տեղանքը պայմաններ է ստեղծում բազմաթիվ, այդ թվում՝ տարածաշրջանի մի քանի խոշոր ու մանր գետերի՝ Եփրատի, Տիգրիսի, Արաքսի, Ճորոխի, Կուրի, Ախուրյանի, Հրազդանի, Որոտանի սկզբնավորման

Աղթամար կղզին, Ս. Խաչ եկեղեցին, խորքում՝ Արտոս լեռը

համար: Հայկական գետերը թափվում են Սև ու Կասպից ծովերը և Պարսից ծոցը:

Արարատը (հնում՝ ***Երասխ***), որն ամբողջությամբ հոսում է Հայաստանի տարածքով, համարվում է հայոց ***մայր գետը:*** Աստվածաշնչի համաձայն՝ դրախտը եղել է Եփրատի ու Տիգրիսի ակունքներում: Եփրատի արևելյան ճյուղի՝ ***Արածանիի*** ջրերում, 301 թ. Հայոց Տրդատ III Մեծ արքան, արքունիքը, զորքը և ժողովուրդը մկրտվել են քրիստոնյա:

Հայկական լեռնաշխարհում նշանավոր են Արարատյան, Մշո, Կարնո (Էրզրումի), Ալաշկերտի, Շիրակի և այլ դաշտեր:

Բնակլիմայական պայմանները: Հայաստանի բնակլիմայական պայմանները բազմազան են: Ցածրադիր գոտում աճող մրգերից հայտնի են հայկական խաղողն ու ծիրանը: Հին աշխարհում ծիրանը ի պատիվ հայերի՝ արմենների, անվանվել է ***արմենիակա:*** Ավելի բարձր վայրերում աճում է հացահատիկ, գարի, ցրտադիմացկուն խաղող: Լեռնային հարուստ մարգագետինները նպաստավոր են անասնապա-

Սևանա լիճը

Բերկրիի ջրվեժը

հության զարգացման համար: Հայաստանը հայտնի է եղել ***որդան կարմիր*** ներկով, որը ստանում էին Արարատյան դաշտում բազմացող հատուկ որդի տեսակից:

Անտառապատ են Հայոց լեռնաշխարհի հյուսիսային նահանգները: Կենդանիներից տարածված են հայկական մուֆլոնը, եղջերուն, վարազը, աղվեսը, գայլը, արջը, բորենին և այլն: Հայաստանը վաղ ժամանակներից ճանաչված էր ձիաբուծությամբ և մեղվապահությամբ:

Հայաստանի ընդերքը հարուստ է ոսկու, արծաթի, պղնձի, մոլիբդենի, աղի հանքերով, շինաքարով և այլ բնապաշարներով: Մեր երկրի ընդերքից բխում են նաև հանքային ջրեր, որոնք հնուց ի վեր հայտնի են իրենց բուժիչ հատկություններով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՛ք և նկարագրե՛ք Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը:
2. Պարզե՛ք թե ձեր մարզում ինչ գետեր, լճեր, լեռներ, դաշտեր կան և ուսումնասիրե՛ք:
3. Ո՞րն է համարվում հայոց մայր գետը:
4. Ներկայացրե՛ք Հայկական բնաշխարհի բուսական և կենդանական աշխարհը:
5. Ի՞նչ բնապաշարներով է հարուստ Հայկական լեռնաշխարհը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Շարունակե՛ք լրացնել քարտեզը՝ ավելացնելով խոշոր լճերը և գետերը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծովակ Հյուսիսո (Չլդըր), Փարվանա, Մշո, Կարնո, Ալաշկերտի դաշտեր, արմենիակա, Որդան կարմիր, Նաիրի երկիր

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի վաղ շրջանի պատմավարչական բաժանումները: Հնագույն ժամանակաշրջանում՝ Ք. ա. III–II հազարամյակներում մեր հայրենիքի տարածքը բաժանված է եղել բազմաթիվ իշխանությունների, մանր պետական կազմավորումների: Ժամանակի ընթացքում փոխվել է Հայաստանի վարչական բաժանումը:

Ք. ա. I հազարամյակի սկզբից մեր երկիրը թևակոխել է նոր պատմական ժամանակաշրջան՝ համահայկական թագավորությունների դարաշրջան: Այդ ժամանակաշրջանի սկզբում՝ Վանի (Արարատյան) թագավորության օրոք և Հայկազունի Երվանդականների գահակալման առաջին շրջանում, ամբողջ Հայաստանը միավորված էր մեկ պետական կազմավորման մեջ: Այդ վիճակը փոխվեց Ք. ա. IV դարում:

Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները: Ք. ա. IV դարից Հայկական լեռնաշխարհում հայտնի դարձան երկու հիմնական պետություններ՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները:

Մեծ Հայքի (նշանակում է Մեծ Հայաստան) ընդարձակ տարածքը (ավելի քան 300 հազ. քառ. կմ) բաժանվել է 15 խոշոր նահանգների՝ աշխարհների: Դրանք էին՝ Այրարատ, Գուգարք, Տայք, Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան (Տարոն), Վասպուրական, Ուտիք, Արցախ, Սյունիք, Մոկք, Կորճայք, Պարսկահայք և Փայտա-

Առյուծների պատկերով ոսկյա թաս Վանաձորից, Ք.ա. II հազարամյակ

Եռափող պաշտամունքային անոթ Դվինի հեթանոսական հնավայրից

Քանդակազարդ սյուն Դվին մայրաքաղաքից

կարան: *Մեծ Հայքի ամենախոշոր և նշանավոր աշխարհը Այրարատն է:* Պատահական չէ, որ Հայաստանի մայրաքաղաքների մեծ մասը (Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ և այլն) եղել է Այրարատ աշխարհում:

Փոքր Հայքը (Փոքր Հայաստան) տարածվում էր Մեծ Հայքից արևմուտք: Նրանց սահմանաբաժանը Արևմտյան Եփրատն էր: Փոքր Հայքի տարածքը կազմում էր շուրջ 80 հազ. քառ. կմ:

Հետագա դարերի փոփոխությունները: V դարում Հայաստանի անկախ պետականության անկումից մի քանի դար անց հայերը կրկին վերականգնել են անկախ հայկական պետականությունը: Ստեղծվել են մի քանի թագավորություններ: Բագրատունիների և հայկական այլ իշխանական տոհմերի գլխավորությամբ Հայաստանում անկախ պետություններ են ստեղծվել և գոյատևել IX–XI դարերում:

ՀՀ զինանշանը և դրոշը

Հայերը XI–XIV դարերում զորեղ պետություն են ունեցել նաև Միջերկրական ծովի հյուսիս–արևելքում՝ *Կիլիկիայում:* Այն ընդգրկել է մինչև 50 հազ. քառ. կմ տարածք:

Սակայն ժամանակի ընթացքում հայերի հայրենիքում օսմանյան թուրքերի իրականացրած ցեղասպանության հետևանքով Հայաստանի մեծ մասը հայազրկվել է: Հայերը կորցրել են իրենց պապենական հողերի մեծագույն մասը:

Ներկայիս *Հայաստանի Հանրապետությունը,* որն ունի շուրջ 30 հազ. քառ. կմ տարածք, իր մեջ ամբողջությամբ չի ընդգրկում

Մեծ Հայքի ոչ մի աշխարհ: Մեր հանրապետության կազմում գավառներ կան Սյունիքից և Այրարատից, ավելի քիչ՝ Գուգարքից ու Ուտիքից: 1990–ական թթ. սկզբին Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում ստեղծվեց մեր օրերի հայկական երկրորդ պետությունը՝ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ):* Նրա մաս են կազմում գավառներ պատմական Արցախ և Սյունիք նահանգներից: ԼՂՀ–ն զբաղեցնում է շուրջ 12 հազ. քառ. կմ տարածք:

ԼՂՀ զինանշանը և դրոշը

Հարցեր և առաջադրանքներ.

1. Ք. ա. III–II հազարամյակներում վարչական ի՞նչ բաժանումների կային մեր հայրենիքի տարածքում: Ինչպե՞ս փոխվեց այդ բաժանումը I հազարամյակի սկզբին:
2. Ե՞րբ հայտնի դարձան Մեծ Հայքը և Փոքր Հայքը՝ որպես առանձին թագավորություններ: Ներկայացրե՛ք Մեծ Հայքի վարչական բաժանումը:
3. Որքա՞ն է Հայաստանի Հանրապետության տարածքը, Մեծ Հայքի ո՞ր մասն է այն կազմում:
4. Ո՞ր նահանգների տարածքներն է զբաղեցնում ՀՀ–ն:
5. Որքա՞ն տարածք է զբաղեցնում ԼՂՀ–ն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Պարզե՛ք, թե ձեր բնակավայրը պատմական Հայաստանի որ նահանգի, ո՞ր գավառի տարածքի մեջ է մտել:
2. Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Մեծ Հայքի 15 նահանգները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծ Հայք, Փոքր Հայք, 15 աշխարհներ, Հայկական երկրորդ պետություն

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆՕՐԱՆ

§ 1. ՆԱԽՆԱԴԱՐԻ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՎԱՂ ՓՈՒԼԵՐԸ

Հին քարի դարի վանակարե (օբսիդիան) գործիք Հայաստանից

Նախնադարի պարբերացումը: Ինչպես գիտեք «Համաշխարհային պատմության» դասընթացից, նախնադար կամ նախապատմական դարաշրջան է կոչվում մարդկության պատմության ամենավաղ շրջանը: Այն բաժանվում է մի քանի մեծ դարաշրջանների: Պատմության այդպիսի բաժանումը փուլերի կոչվում է *պարբերացում:*

Մարդկության պատմության վաղնջական դարաշրջանները մենք կոչում ենք այն հիմնական նյութի անունով, որով պատրաստվում էին մարդկանց աշխատանքային գործիքներն ու զենքերը: Ըստ այդմ՝ հնագույն պատմությունը բաժանվում է *քարի, պղնձի–քարի և բրոնզի* դարաշրջանների:

Հին քարի դարի կայան Արզնիում

Քարի դարը մարդկության պատմության ամենավաղ և ամենաերկարատև շրջանն է: Այն սկզբնավորվել է շուրջ 3 միլիոն տարի առաջ և ավարտվել Ք. ա. VI հազարամյակի կեսերին: Քարի դարն իր հերթին բաժանվում է երեք փուլերի՝ *հին քարի դար, միջին քարի դար և նոր քարի դար:* Այդ դարաշրջանները գիտության մեջ հունարենով, համապատասխանաբար, կոչում են *պալեոլիթ, մեզոլիթ և նեոլիթ:*

Քարի դարին հաջորդում է մետաղի լայն կիրառման դարաշրջանը, որի առաջին փուլը պղնձի–քարի դարն էր (հունարեն՝ ***էնեոլիթ***): Դա յուրօրինակ միջանկյալ օղակ էր քարի և մետաղի դարաշրջանների արանքում: Այն տևել է շուրջ երկու հազար տարի՝ Ք. ա. VI հազարամյակի կեսից մինչև Ք. ա. IV հազարամյակի սկիզբը:

Պղնձի–քարի դարին (էնեոլիթ) հաջորդում է ***բրոնզի դարը,*** որի ընթացքում անկում է ապրում նախնադարյան հասարակությունը՝ իր տեղը զիջելով պետականություններին:

Հայաստանում բրոնզի դարը սկսվել է Ք. ա. IV հազարամյակի կեսերին և տևել մինչև II հազարամյակի վերջը:

Հին քարի դարը (պալեոլիթ): Հին քարի դարը տևել է մարդկության սկզբնավորման ժամանակներից մինչև Ք. ա. XII հազարամյակը:

Սկզբում մարդիկ ապրում էին խմբերով, որոնք գիտության մեջ կոչվում են *նախնադարյան մարդկային հորդեր:* Նրանք հիմնականում զբաղվում էին հավաքչությամբ և

Նախամարդու առաջին գործիքները երկու ծայր ունեն. սուր ծայրը գործածում էին կտրելու, քերելու, ծակելու, փաշելու նպատակով, իսկ բութ ծայրը՝ իբրև մուրճ: Մարդու առաջին գործիքները նաև նրա առաջին զենքերն էին բնության վայրի ուժերի դեմ պայքարում

Երևանյան քարայրը, որտեղ նախնադարյան մարդիկ բնակվել են մեզնից 100 000–35 000 տարի առաջ

որսորդությամբ, բնակվում էին քարանձավներում:

Հին քարի դարի կարևորագույն նվաճումներից էին կրակի ստացումը և օգտագործումը: Մարդիկ սկսեցին կրակով տաքացնել իրենց կացարանը, կերակուր պատրաստել և պաշտպանվել գազաններից:

Պալեոլիթի վերջին փուլում ձևավորվեց ժամանակակից մարդը՝ *բանական մարդը:* Տեղի ունեցան կարևոր հասարակական փոփոխություններ: Ստեղծվեցին *ցոհմական համայնքներ,* որոնք կազմվում էին միասին ապրող ու աշխատող արյունակից ազգականներից: Ի տարբերություն նախնադարյան հոտի՝ համայնքն ուներ իր բնակության մշտական տարածքը և անդամները:

Հայաստանում հայտնաբերված հնագույն պալեոլիթյան կայանը Գուգարքում է և ունի ավելի քան 1,8 միլիոն տարվա հնություն: Դա Եվրոպայի և Արևմտյան Ասիայի

Ժայռապատկերներ՝ որսի տեսարաններով

տարածքում նախամարդու հնագույն կայանն է: Հին քարի դարի կարևոր կայաններ կան ***Արտին*** լեռան վրա, ***Արզնիում, Ազոիում*** (ԼՂՀ Հադրութի շրջան) և բազմաթիվ այլ վայրերում, որտեղից գտնվել են մեծ քանակությամբ հնագույն մարդու ոսկորներ, գործիքներ ու զենքեր:

Ժայռապատկեր Սյունիքի լեռներում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է նախնադարը: Ինչ չափանիշով է դարաշրջանների բաժանվում մարդկության վաղնջական շրջանի պատմությունը:
2. Երբ է սկսվել և ավարտվել քարի դարը:
3. Քանի՞ փուլի է բաժանվում քարի դարը: Նշե՛ք նաև դրանց հունարեն անունները:
4. Երբ է ավարտվել հին քարի դարը Հայաստանում: Քանի՞ փուլի է այն բաժանվում:
5. Պատմե՛ք հին քարի դարի բնորոշ գծերի մասին: Պալեոլիթյան ինչ կայաններ գիտեք Հայաստանում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ժամանակաշրջանը	Հունարեն անվանումը	Տևողությունը	Նվաճումները
Քարի դար ա) Հին քարի դար բ) Միջին քարի դար գ) Նոր քարի դար			

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հին քարի դար (պալեոլիթ), Միջին քարի դար (մեզոլիթ), Նոր քարի դար (նեոլիթ), Պղնձի–քարի դար (էնեոլիթ), Բրոնզի դար, Երկաթի դար, մարդկային հոտ, բանական մարդ

§ 2. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Միջին քարի դարը (մեզոլիթ): Հին քարի դարին հաջորդում է միջին քարի դարը, որը տևել է շուրջ երկու հազար տարի՝ Ք. ա. XII–X հազարամյակները: Այդ շրջանում ևս մարդկանց կյանքի ապահովման հիմնական աղբյուրները որսորդությունն ու հավաքչությունն էին: Կատարելագործվում էին աշխատանքային գործիքները: Կարևոր էր *նետ ու աղեղի* լայն կիրառությունը, որը դարձավ մարդու գլխավոր զենքն ու ապրուստ հայթայթելու միջոցը: *Մեզոլիթում* սկսեցին ընտելացվել առաջին կենդանիները և մշակվել բույսեր:

Շանիդար հնավայրը Կորդվաց աշխարհի պարածքում

Միջին քարի դարում կարևորվեց ընտանիքի դերը: Տոհմական համայնքները, աճելով ու միավորվելով, կազմում էին ցեղեր: Ցեղի անդամները միալեզու էին, ունեին ընդհանուր հավատալիքներ ու սովորույթներ: Բնակչությունն աճում էր ավելի մեծ թափով:

Պալեոլիթի վերջին շրջանի և մեզոլիթի կարևոր հուշարձան է ***Շանիդարը*** Կորդվաց աշխարհի տարածքում: Դա երկրագնդի վաղ հողագործական և վաղ անասնապահական առաջին հնավայրերից է:

Նեոլիթյան «հեղափոխությունը»: Նոր քարի դարը սկսվել է Ք. ա. X հազարամյակից և տևել մինչև Ք. ա. VI հազարամյակի կեսերը:

Մարդը սկզբում ապրում էր կենդանիների նման՝ սպառելով միայն բնության պարգևած բարիքները: Նեոլիթում հողագործության և անասնապահության զարգացումով կատարվեց մարդկային հասարակության առաջին մեծ «հեղափոխությունը»: Մարդն այլևս միայն սպառող չէր: Նա կարողանում էր իր համար ստեղծել անհրաժեշտ բարիքներ՝ պահելով ու բազմացնելով կենդանիներ, մշակելով բույսեր ու աճեցնելով մրգատու ծառեր: Այսպես դրվեցին մարդկային քաղաքակրթության հիմքերը:

Նոր քարի դարում առաջընթաց եղավ նաև հասարակական կյանքում: Ազգակից և հարևան ցեղերի միավորումով ստեղծվեցին ***ցեղային միություններ***: Դրանց հիման վրա հետագայում առաջացան պետական կազմավորումները:

Քարակոթող Պորտաբլուր հնավայրից՝ կենդանիների պատկերներով: Կարծիք կա, որ դրանք ոչ թե պարզապես կենդանիների պատկերներ են, այլ կենդանական անուններով անվանակոչված համապատկերություններ (խոյ, ցուլ, առյուծ, անգղ և այլն): Եթե այդ կարծիքը հաստատվի, կնշանակի, որ ասպղագիտությունը ծնունդ է առել մեզնից մոտ 12 հազար տարի առաջ:

Առյուծի պատկերով քարակոթող Պորտաբլուրում

Հայկական լեռնաշխարհում բացվել են նեոլիթյան բազմաթիվ հուշարձաններ, Դրանցից հատկապես կարևոր են Աղձնիքի և Հայոց (Հյուսիսային) Միջագետքի տարածքում գտնվողները: Այդ տարածքը հնագետները անվանում են ***«Ոսկե եռանկյունի»***. այստեղից սկզբնավորվել է այսօրվա համաշխարհային քաղաքակրթությունը: «Ոսկե եռանկյունու» կարևոր հուշարձաններից է ***Պորտաբլուրը*** (Եդեսիայից հյուսիս–արևելք), որտեղ հայտնաբերվել են երկիր մոլորակի ամենահին տաճարները:

Պորտաբլուրի հնագույն տաճարների վերակազմությունը

Ավելի էին զարգանում դեռևս հին քարի դարում սկզբնավորված կրոնական պատկերացումները: Դրանք կապվում էին բնության երևույթների, աստվածությունների, ոգիների և նախնիների պաշտամունքի հետ: Ստեղծվում էին արվեստի գործեր, որոնց լավագույն օրինակներից են Պորտաբլուրի քարակոթողների քանդակները, Հայաստանի ժայռապատկերները և այլն:

Պղնձի–քարի դար (Էնեոլիթ): Ք. ա. VI հազարամյակում մարդիկ ունեցան նոր խոշոր նվաճում՝ սովորելով արդյունահանել

Պորտաբլուր հնավայրը

և ձուլել մետաղը: Մարդկությունը մուտք գործեց ***մեկաղի դարաշրջան:*** Մետաղներից առաջինը լայն տարածում ստացավ պղինձը: Սակայն այն փափուկ մետաղ էր, և քարե գործիքները պղնձյա գործիքների կողքին շարունակում էին գործածվել ու առավելություն ունենալ:

Առաքաշենի հնավայրը

Էնեոլիթում շարունակում էին զարգանալ հողագործությունը անասնապահությունն ու արհեստները (մետաղագործություն, կավագործություն և այլն): Հայկական լեռնաշխարհի և հարևան շրջանների միջև հաստատվում էին առևտրափոխանակային հարաբերություններ:



Նեոլիթ–էնեոլիթյան բնակավայրերի վերակազմություն

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են մեծ թվով էնեոլիթյան հուշարձաններ: Հատկապես նշանավոր են ***Առաքաշենը և Թեղուրը*** Արարատյան դաշտում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշե՛ք միջին քարի դարի (մեզոլիթի) թվագրությունը:
2. Ի՞նչ գիտեք Շանիդար հնավայրի մասին:
3. Բացատրե՛ք նեոլիթյան «հեղափոխության» էությունը:
4. Պատմե՛ք «Ոսկե եռանկյունու» մասին:
5. Ներկայացրե՛ք պղնձի–քարի դարի բնորոշ գծերը: Էնեոլիթյան ի՞նչ հուշարձաններ են ձեզ հայտնի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Նախորդ դասի օրինակով շարունակե՛ք լրացնել աղյուսակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շանդար, նեոլիթյան «հեղափոխություն», ցեղային միություններ, «Ոսկե եռանկյունի», մեկաղի դարաշրջան, Առաքաշեն, Թեղուր

§ 3. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Մեծամորի ապրղադիպարանի (Ք. ա. 2800–2600 թթ.) հարթակներից մեկը՝ Մասիսի ձյունապիտակ գագաթի տեսարանով

Բրոնզի դար: Պղնձի և անագի կամ պղնձի ու մկնդեղի համաձուլվածքից մարդիկ ստացան բրոնզը: Այն շատ ավելի ամուր էր պղնձից: Բրոնզե գործիքներն ու զենքերը գերադասելի էին քարից և մեծ առաջընթաց ապահովեցին արհեստների ու գյուղատնտեսության զարգացման համար: Սկսվեց բրոնզի դարաշրջանը:

Բրոնզի դարի վաղ շրջանը (Ք. ա. XXXV–XXIV դդ.) բացառիկ կարևորություն ունի Հայաստանի հնագույն պատմության ընթացքում: Այդ ժամանակաշրջանում է հիշատակվում լեռնաշխարհի առաջին պետությունը: Բացի այդ, Հայկական լեռնաշխարհի մշակույթը Ք. ա. XXVIII–XXVI դարերում ունեցավ աննախադեպ մեծ տարածում. հյուսիսում հասավ Հյուսիսային Կովկաս, հարավում՝ Եգիպտոսի սահմանին, հարավարևելքում՝ Իրանական սարահարթի կենտրոնական շրջաններ:

Բրոնզի դարում Հայաստանում եղան քաղաքակրթական լուրջ նվաճումների: Դրա վկայություններից է զարգացած մետաղամշակությունը: Այն ժամանակի գիտության բացառիկ նվաճում էր ***Մեծամորի ապրղադիպարանը***, որտեղից աստղային երկինքը դիտարկվել է դեռևս Ք. ա. 2800–2600 թվականներին:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են հարյուրավոր բրոնզեդարյան հուշարձաններ, որոնցից շատերը համաշ-

Բրոնզի դարի խեցեղեն՝ պատկերանշաններով

խարհային նշանակություն ունեն: Կարևորագույն հուշարձաններից է ***Շենգավիթը*** (Երևանյան լճի հարևանությամբ): Հնագետները հաճախ այդ հուշարձանի անունով են կոչում ողջ մշակույթը: Եզակի հուշարձաններից է ***Լճաշենը*** Սևանա լճի ավազանում, որտեղից հայտնաբերվել են մեծ քանակությամբ բարձրաժեք և եզակի գտածոներ:

Բրոնզի դարի ընթացքում մարդիկ կարողացան հանքաքարից ստանալ նաև ***երկաթ***, որը հնարավոր էր շատ բարձր ջերմաստիճանի պայմաններում: Երկաթի լայն կիրառությունը, սակայն, սկսվեց Ք. ա. II հազարամյակի վերջից:

Նախնադարյան հասարակության անկումը: Նախնադարում բոլոր մարդիկ հավասար էին, նրանք չունեին մասնավոր սեփականություն: Սակայն ժամանակի ընթացքում, երբ կատարելագործվեցին աշխատանքային գործիքներն ու զենքերը, մարդիկ սկսեցին ստանալ եկամուտներ և կուտակել հարստություն: Տնտեսության զարգացմանը նպաստում էր նաև առևտուրը: Տոհմացեղային համայնքներում ընդգրկված ընտանիքներն աստիճանաբար սկսեցին սեփականացնել իրենց զբաղեցրած տարածքները: Այդպես առաջ եկավ ***մասնավոր սեփականությունը:***

Առավել մեծաթիվ, ձեռներեց և ուժեղ անդամներ ունեցող ընտանիքները սկսեցին հարստանալ: Շրջապատի նկատմամբ ունեցած առավելության շնորհիվ նրանք դառնում էին տոհմերի ու ցեղերի առաջ-

Կրծքազարդ Գեղարոտից (Ք.ա. XVIII–XXV դդ.)

Բրոնզի դարի դամբարան Աղավնատուն հնավայրում

Մետաղի ձուլման կաղապար Գեղարոտի բրոնզեդարյան հնավայրից

նորդներ, որն ավելի էր մեծացնում նրանց հարստանալու հնարավորությունն ու իշխանությունը:

Նախնադարյան հասարակության ամենաբնորոշ կողմը՝ բոլոր մարդկանց հավասարությունը, վերացավ: Առաջացավ ***հասարակության շերտավորում:*** Բարձր դասը կազմում էին տոհմացեղային ավագանին և քրմությունը: Առանձին դաս էին կազմում զինվորականները: Իսկ ստորին խավը կազմված էր հասարակ ժողովրդից:

Պետության առաջացումը: Բրոնզի դարի առաջին փուլում (Ք. ա. XXXV–XXIV դդ.), մարդկությունը հասավ զարգացման պետականության աստիճանին: Նախկին ցեղային միությունները միավորվում էին՝ կազմելով դաշինքներ, կամ առավել ուժեղները նվաճում էին թույլերին՝ իրենց ենթարկելով նվաճվածներին, նրանց տարածքը և ունեցվածքը:

Ք. ա. II հազարամյակի Բուրվառ Մեծամորից, որն այսօր մեր եկեղեցիներում կիրառվող բուրվառների նախատիպն է



Նորաստեղծ կազմավորումների վերնախավն անհրաժեշտաբար սկսեց մեծ ուշադրություն դարձնել զինված ուժերին: Ամենից առաջ անհրաժեշտ էր կազմակերպել պաշտպանությունն արտաքին թշնամիներից: Մեծ կարևորություն ուներ հասարակական աշխատանքների կազմակերպումը (վար ու ցանք, ջրանցքների անցկացում և այլն): Մարդկանց համակեցությունն ապահոցելու համար անհրաժեշտ էր պահպանել ներքին կարգ ու կանոնը, հսկել պարտականությունների կատարումը և այլն: Այդ ամենը հանգեց-

րեց կառավարման հատուկ համակարգի ստեղծմանը:

Երկրագնդի վրա առաջին պետական կազմավորումները ստեղծվեցին են Ք. ա. IV հազարամյակի վերջին և III հազարամյակի սկզբին: Այդ ժամանակաշրջանում էլ հիշատակվում է առաջին պետությունը Հայաստանում՝ ***Արարատյան:***

Թռչունի բրոնզե արձանիկ Լճաշենից, Ք.ա. XIV–XIII դդ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս ստացվեց բրոնզը: Ի՞նչ առավելություն ուներ այն:
2. Քանի՞ փուլի է բաժանվում բրոնզի դարը:
3. Ներկայացրե՛ք Հայաստանի բրոնզի դարաշրջանի նվաճումները:
4. Ինչպե՞ս քայքայվեց նախնադարյան հասարակությունը: Ինչո՞վ փոխարինվեց այն:
5. Ե՞րբ են ստեղծվել առաջին պետական կազմավորումները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծամորի ապրղագիրարան, Շենգավիթ, Լճաշեն, մասնավոր սեփականություն, հասարակության շերտավորում, պետություն, Արարատ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Հայաստանում հայտնաբերվել են բրոնզի դարով թվագրվող մի քանի վիրահատված գանգեր: Հետազոտությունները ցույց են տալիս, որ վիրահատություններից հետո վիրահատվածները ապրել են երկար տարիներ: Եվ, որ ավելի զարմանալի է, այն ժամանակ մեր նախնիները կարողացել են պատվաստել կենդանու ոսկորը մարդուն, մի բան, որը դժվարանում է անել անգամ այսօրվա բժշկությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՎԱՂԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

ՔԱՐԻ ԴԱՐ		Հազարամյակներ									
		3 000	XII	XI	X	IX	VIII	VII	VI	V	IV
	Հին քարի դար (պալեոլիթ)	մոտ 3 000 000 տարի առաջ									
	Միջին քարի դար (մեզոլիթ)										
	Նոր քարի դար (նեոլիթ)										
	Պղնձի–քարի դար (էնեոլիթ)										

ԲՐՈՆԶԻ ԴԱՐ		Դարեր																							
		XXXV	XXXIV	XXXIII	XXXII	XXXI	XXX	XXXIX	XXVIII	XXVII	XXVI	XXV	XXIV	XXIII	XXII	XXI	XX	XIX	XVIII	XVII	XVI	XV	XIV	XIII	XII
	Բրոնզի դար																								
	Վաղ բրոնզի դար																								
	Միջին բրոնզի դար																								
	Ուշ բրոնզի դար																								
	ԵՐԿԱԹԻ ԴԱՐ	XII դարից սկսած																							

ԳԼՈՒԽ 3 ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

§ 1. ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Հայաստանը՝ ինդեվրոպական նախահայրենիք: Մարդիկ բոլոր ժամանակներում հետաքրքրվել են իրենց ընտանիքի, տոհմի, ազգի ծագումով: XVIII–XIX դարերում, երբ բուռն զարգանում էր բոլոր գիտությունը, ժողովուրդների և նրանց լեզուների ծագման հարցը ևս դարձավ գիտական լուրջ ուսումնասիրության առարկա: Պարզվեց, որ կան այնպիսի լեզուների խմբեր, որոնք հազարամյակներ առաջ եղել են մեկ մայր լեզվի բարբառներ: Գիտնականները ցեղակից լեզուների այդպիսի խումբն անվանում են ***լեզվաընտանիք,*** իսկ դրա մայր լեզուն՝ ***նախալեզու:*** Մայր լեզվով կամ նախալեզվով խոսողները կոչվեցին ***մայր ժողովուրդ,*** իսկ նրա զբաղեցրած սկզբնական տարածքը՝ ***նախահայրենիք:***

Հայերը պատկանում են աշխարհի ամենաբազմանդամ լեզվաընտանիքին, որը կոչվում է ***ինդեվրոպական***, քանի որ այդ լեզվաընտանիքի լեզուները գործածվել են Հնդկաստանի արևելքից մինչև Եվրոպայի արևմուտք ձգվող տարածքում: Գիտնականներին հաջողվել է նաև պարզել, թե որտեղ է եղել ինդեվրոպական նախահայրենիքը: Այն զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելքը, Միջագետքի հյուսիսը և Իրանի հյուսիսարևմուտքը:

Տարբեր ժամանակներում աշխարհում լույս են տեսել բազմաթիվ քարտեզներ, որոնցում ներկայացվել է մարդկության ամենավաղ շրջանի իրադրությունը: Դրանցից շատերում Հայաստանը նշվում էր ոչ թե որպես սովորական մի երկիր, այլ «Դրախտ երկրի վրա»: Այս և հաջորդ էջերում ներկայացված են Անգլիայում և Ֆրանսիայում լույս տեսած նման երեք քարտեզներ:

Ֆրանսիացի քարտեզագիր Ֆիլիպ Բուաշեի քարտեզը, որտեղ Եդեմ–դրախտը նշված է Հայաստանում Փարիզ, 1783 թ.

Անգլիացի քարտեզագիր Էմանուել Բոուենի «Երկրային դրախտի քարտեզը», որտեղ Եդեմ–դրախտը նշվում է Հայաստանում
Լոնդոն, 1780 թ.

Ֆրանսիացի քարտեզագիր Ռոբեր Վոյոնդի «Մարդկության առաջին դարաշրջանները քարտեզը», որտեղ Եդեմ–դրախտը նշվում է Հայաստանում
Փարիզ, 1762 թ.

Այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը կազմել է հնդեվրոպական նախահայրենիքի ***կենտրոնական շրջանը:***

Հնդեվրոպական մայր լեզվից են առաջացել, այսինքն՝ հայերենին ցեղակից լեզուներից են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, իսպաներենը, իտալերենը, ռուսերենը, շվեդերենը, հնդկերենը, պարսկերենը, քրդերենը և բազմաթիվ այլ լեզուներ: Այդ լեզուներով խոսողների ընդհանուր թիվն աշխարհում այսօր անցնում է երեք միլիարդից:

Հայաստանը Հին Արևելքի վեպերում և առասպելներում: Հետաքրքրական է, որ Հայաստանը, լինելով հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը, ***սրբազան երկիր*** է համարվել նաև այլ ծագումով ժողովուրդների համար:

Ինչպես գիտենք, Աստվածաշնչի համաձայն, Աստված առաջին մարդկանց արարել է Եդեմ–դրախտում: Այն գտնվում էր Եփրատ և Տիգրիս գետերի ակունքներում, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Նույն Աստվածաշունչ մատյանում պատմվում է, որ Եդեմ–դրախտում էին պահվում իմաստության և անմահության խորհրդանշանները: Իսկ համաշխարհային ջրհեղեղից հետո Նոյի տապանը հանգրվանել է Արարատ լեռների վրա՝ կրկին Հայաստանում:

Աստվածաշունչ մատյանից բացի՝ նման տեղեկություններ են պահպանվել նաև Հին աշխարհի բազմաթիվ արձանագրություններում: Միջագետքից և Սիրիայից հայտնաբերված սեպագիր արձանագրու-

թյուններում նշվում է, որ Հայաստանը համարվել է «Աստվածային սուրբ օրենքների երկիր», «Անմահության երկիր», մի երկիր, որտեղից տարածվել են իմաստությունն ու արվեստը: Հնագույն զրույցների համաձայն՝ Արեգակի ոսկյա կացարանը Վանա լճի հատակին էր…

Հայերի ծագման մասին պատմող ավանդազրույցները: Հայերի ծագման մասին ավանդազրույցներ են եղել դեռևս անհիշելի ժամանակներում: Դրանցից հնագույնը հայկական այն ավանդազրույցն է, որի համաձայն՝ հայերը դյուցազուն Հայկի ժառանգներն են:

«Հայկի և Բելի ճակատամարտը»
Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջուլիանո Զասսո, 1885 թ.



«Հայկ նահապետ»
Հեղինակ՝ Մկրտում Հովնաթանյան

Հայերի ծագման մասին ավանդազրույցներ են պահպանել նաև հույները, հրեաները, վրացիները, արաբները և այլ ժողովուրդներ: Այդ բոլոր զրույցներում հայերը ներկայանում են որպես մեծ և քաջ ժողովուրդ, որի հետ ազգակից լինելը պատվաբեր է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրե՛ք «նախալեզու» և «նախահայրենիք» հասկացությունները:
2. Որտե՞ղ է եղել հնդեվրոպական նախահայրենիքը:
3. Ի՞նչ գիտեք հնդեվրոպական ծագումով ժողովուրդների մասին:
4. Ի՞նչ կերպարով է ներկայանում Հայաստանը Հին աշխարհի վեպերում և առասպելներում:
5. Ներկայացրե՛ք հայերի ծագման մասին պատմող հայկական ավանդազրույցը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվաընտանիք, նախալեզու, մայր ժողովուրդ, նախահայրենիք, հնդեվրոպական լեզվաընտանիք, «Ասիվածային սուրբ օրենքների երկիր», «Անմահության երկիր»

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵԴԵՄ–ԴՐԱԽՏԻ ՄԱՍԻՆ

Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդը եղավ կենդանի էակ: Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմում, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի: Մեկի անունը Փիսոն է... Երկրորդ գետի անունը Գեհոն է... Երրորդ գետը Տիգրիսն է... Չորրորդ գետը Եփրատն է:



Լոնդոնում լույս տեսած Աստվածաշունչ մատյանի նկարազարդում, որտեղ պատկերված է մարդկության ծառը: Այն սկիզբ է առնում Հայաստան աշխարհի Արարատ լեռների վրա գտնվող Նոյյան տապանից

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂԻ ՄԱՍԻՆ

Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին:

Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց այն նվազեց: Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռների վրա:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՀԱՅԿԻ ՄԱՍԻՆ

Այս Հայկը... վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի եղավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ, երբ մարդկային ցեղը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրով մեկ...

§ 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Արապտպա երկրի մասին պատմող շումերական բնագիր

Հայկական առաջին պետական կազմավորումը. Արապտպա: Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին պետությունն *Արապտպան* է, որը գոյություն է ունեցել Ք. ա. XXVIII–XXVII դարերում: Այդ մասին իմանում ենք Միջագետքի հարավում բնակված ***շումերների*** արձանագրություններից:

Արատտայի արքան միաժամանակ երկրի հոգևոր առաջնորդն էր՝ քրմապետը: Քրմապետ–արքան երկրի կարևորագույն հարցերը քննարկում էր Ավագների ժողովում, որը նման էր այսօրվա խորհրդարանին: Շումերական բնագրերը տեղեկացնում են Արատտայի հզոր բանակի, պարսպապատ մայրաքաղաքի, նաև սեփական գրի գործածման մասին: Արատտայի հովանավոր աստվածն էր Հայկը, որն իմաստության և ջրերի աստված Հայայի որդին էր:

Պատկերաքանդակ որսի տեսարանով և մեհենագիր արձանագրությամբ Մալաթիա, Ք.ա. XII–XI դդ.

«Արմենիա» անվան հնագույն հիշատակությունները: Օտար լեզուներում Հայաստանն ամենից ավելի ճանաչված է «Արմենիա» անվամբ կամ դրա տարբերակներով: Այդ անվան հնագույն վկայությունները վերաբերում են Ք. ա. XXIV–XXIII դարերին: Միջագետքի սեպագիր արձանագրություններում այն հիշատակվում է «Արմանի», իսկ Սիրիայից գտնված բնագրերում՝ «Արմի» ձևով: Հնագույն արձանագրություններում նաև նշվում է, որ Արմի երկրում ապրում էին «Հայայի որդիները», այսինքն՝ հայորդիները:

Կորդվաց (Կուտիական) աշխարհակալությունը: *Ք. ա. XXIII դարի վերջին բռնակալ Նարամ–Սինը նվաճել էր ողջ Միջագետքը և հալածում էր ժողովուրդներին: Շումերներն օգնություն խնդրեցին Հայկական լեռնաշխարհի երկրների միությունից, որի զորքերը հարավային Կորդվաց աշխարհի տիրակալների առաջնորդությամբ արշավեցին Միջագետք: Մեր զորքերը կործանեցին բռնակալ Նարամ–Սինին, իսկ իրենց իշխանությունը շուրջ հարյուր տարի տարածվեց մինչև Պարսից ծոց: Շումերական սեպագիր արձանագրություններում Կորդվաց աշխարհը* կոչվում է ***Կուտիական երկիր:*** Այդ պատճառով Ք. ա. XXII դարի մեր նախնիների պատմության հարյուրամյա հերոսական այդ շրջանը հայտնի է որպես ***Կուտիական աշխարհակալություն:***

Հայասա թագավորությունը: Ք. ա. XV–XIII դարերում Հայաստանի արևմուտքում բնակվող խեթերը, որոնք հայերին ազգա-

Բրոնզե մարտակառք Լճաշենից, Ք. ա. XIV–XIII դդ.

Նարամ–Սինի կոթողը՝ բոլոր ժողովուրդներին տիրելու խորհրդանշական պատկերով

Ք. ա. II հազարամյակի հայաստանյան զինատեսակներ

կից հնդեվրոպական ժողովուրդ էին, մեր երկիրը կոչում են «Հայասա», որը խեթերեն նշանակում է «հայերի երկիր»:

Հայասան ուներ իր արքունիքը, բանակը, քաղաքային կենտրոնները, ***դիցարանը,*** նաև արքունի դիվան՝ իր դպիրներով, որոնք վարել են պետական գրագրությունը: Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10–հազարանոց հետևակից բաղկացած բանակ: Այդ ժամանակաշրջանի համար դա բավականին մեծ ուժ էր:

Նաիրի երկիրը: Ք. ա. XIII–X դարերում Հայկական լեռնաշխարհից հարավ գտնվող Ասորեստանի արքաները Հայաստանի հարավում և Վանա լճի ավազանում բազմիցս հիշատակում են Նաիրի երկիրը: Նաիրիի բազմաթիվ արքա–առաջնորդներ դաշինք էին կնքել ընդհանուր թշնամու դեմ պայքարելու համար: Ասորեստանի արձանագրություններում Նաիրին հիշատակվում է իբրև ***«ընդարձակ, հպարակություն չճանաչող երկիր»,*** որն ուներ ***«250 քաղաք՝ զորավոր պարիսպներով»:*** Ք. ա. IX դարում Նաիրին արդեն հանդես է գալիս որպես մեկ միասնական պետություն:

Հայկազունիների Արարատյան թագավորությունը: Ք. ա. IX դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի կենտրոնում և հյուսիսում հիշատակվում է մեկ այլ մեծ պետություն՝ ***Ուրարտուն:*** Դա Հայկի սերունդների՝ Հայկազունիների ստեղծած Արարատյան թագավորությունն էր: Թագավորության կենտրոնը Արարատյան դաշտում էր: «Ուրարտու» անունը «Արարատ» անվան

ասորեստանյան տարբերակն է: Այդ թագավորության շնորհիվ «Ուրարտու» անունը շուտով հայտնի դարձավ այլ ազգերի մեջ, և ամբողջ Հայաստանը նրանք սկսեցին կոչել այդ անունով: Ասուրերեն և բաբելերեն արձանագրություններում Հայաստանն «Ուրարտու» է կոչվում մինչև Ք. ա. IV դարի կեսը:

Ասորեստանյան աղբյուրներում առաջին անգամ որպես Ուրարտուի արքա հիշատակվում է ***Արամեն,*** որն, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, ամենաքաջ ու հզոր Հայկազունիներից էր: Նա Ք. ա. 860–840–ական թթ. հերոսաբար մարտնչել է ասորեստանյան զորքերի դեմ և դուրս քշել Հայաստանից:

Արծաթե գավաթ Քարաշամբից՝ ռազմական հաղթանակի տեսարաններով, Ք. ա. XXII–XXI դդ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Պետական ինչ կառուցվածք ուներ Արատտա երկիրը:
2. Երբ են առաջին անգամ հիշատակվում «Արմենիա» անվան նախաձևերը:
3. Ինչ գիտեք Կուտիական (Կորդվաց) աշխարհակալության մասին:
4. Ներկայացրե՛ք Հայասա թագավորությունը և Նաիրի երկիրը:
5. Պատմե՛ք Հայկազունիների Արարատյան թագավորության մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պետական կազմավորում	Դարաշրջանը	Տարածքը	Հիշատակություններ դրա մասին
1.			
2.			
3.			

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շումերներ, Արմանի, Արմի, Կուտիկան աշխարհակալություն, Հայասա, Նաիրի երկիր, Հայկազունիների Արարատյան թագավորություն

«ԷՆՄԵՐՔԱՐԸ ԵՎ ԱՐԱՏՏԱՅԻ ՏԻՐԱԿԱԼԸ» ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԱՐԱՏՏԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդն Արատտայի՝ գերադասված մյուս ժողովուրդներից,
ժողովուրդը, որին Դումուզին (իմա՝ Հայկը) զատեց մյուս ժողովուրդներից…
նրանք, որ կանգնեցին ջրհեղեղի մեջ
այն ժամանակ, երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան...

ՀԱՏՎԱԾ ՆԱՐԱՄ–ՍՈՒԵՆԻ ԲՆԱԳՐԵՐԻՑ, ՈՐՈՒՄ ՎԿԱՅՎՈՒՄ Է ԱՅԴ ԱՐՔԱՅԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ՀԱՄՆԵԼԸ ԵՎ ԱՅՆՏԵՂ՝ ԱՐՄԱՆՈՒՄ, ԵՐԿՐԻ ՀԵՏ ԲԱԽՎԵԼԸ

Քանի որ երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել Արմանումն ու Էբլան,
Ներգալն* (իր) զենքով ճանապարհ բացեց Նարամ–Սուենի՝ հզորի համար, և տվեց նրան Արմանումն ու Էբլան:
Եվ նա տվեց նրան Ամանոսը՝ Մայրիների լեռը, ու Վերին ծովը…

* Ներգալը միջագետքյան դիցաբանության մեջ անդրաշխարհի աստվածն էր:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՐՔԱ ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍԱՐ Ի–Ը (Ք. Ա. 1114–1076 ԹԹ.) ՆԱԻՐՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

…Աշշուր աստծո՝ իմ տիրոջ հրամանով արշավեցի ես Նաիրի երկրների դեմ, որոնց հեռավոր արքաները Վերին ծովի* ափերին չէին տեսել հպատակություն: Ես առաջ շարժվեցի խորդուբորդ ճանապարհներով և վտանգավոր անցումներով, որոնց էության (մասին) ոչ մի արքա նախկինում չգիտեր. (դրանք) փակված արահետներ (էին և) անհայտ հեռավոր շրջաններ… Նաիրի երկրների 23 արքաներ իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու բանակը միավորեցին (և) շարժվեցին ընդառաջ՝ պատերազմ մղելու, պայքարելու և մարտնչելու:

* Նկատի ունի Վանա լիճը

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Աշխարհի բոլոր ժողովուրդներն ունեն իրենց հայրենիքը: Այն սրբացվում է ժողովրդի կողմից, նրա մասին հյուսվում են առասպելներ ու լեգենդներ: Հայ ժողովուրդը այն ազգերին է պատկանում, ովքեր ի սկզբանե ձևավորվել են մի որոշակի տարածքի վրա, դարեր շարունակ ապրել ու ստեղծագործել են նույն տեղում:

- Ո՞րն է հայերի հայրենիքը: Ինչո՞ւ է այն այդպես կոչվում: Ինչպե՞ս են մեզ անվանել մեր հարևանները: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հայկական լեռնաշխարհի դիրքը, բնական սահմանները, բարձր լեռներն ու լեռնաշղթաները:

2. Հայաստանի բնակլիմայական պայմանները բազմազան են: Դա նպաստել է տնտեսության մի շարք ճյուղերի զարգացմանը, Հայաստանին բնորոշ բույսերի մշակմանը: Տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմաններ են ապահովել նաև լեռնաշխարհից սկիզբ առնող բազմաթիվ մանր ու խոշոր գետերը, լճերը: Դրանք օգտագործվել են և՛ ոռոգման, և՛ նավագնացություն կազմակերպելու նպատակով:

- Թվարկե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող գետերը, լճերը: Ներկայացրե՛ք դրանց հին անվանումները: Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Հին Հայաստանում: Թվարկե՛ք Հայկական լեռնաշխարհին բնորոշ մի քանի բույսեր և կենդանիներ:
- Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքները: Քանի՞ նահանգների է բաժանված եղել Մեծ Հայքի տարածքը: Թվարկե՛ք դրանք և ցո՛ւյց տվեք քարտեզի վրա: Մեծ Հայքի ո՞ր մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը:

3. Մարդկությունը զարգացել է հարյուրհազարավոր տարիների ընթացքում: Պատմության պարբերացման ամենավաղ շրջանը կոչվում է նախնադար: Այդ դարաշրջանները գիտնականներն առանձնացրել են ըստ այն հիմնական նյութի, որով այդ շրջանում պատրաստում էին աշխատանքային գործիքները: Դարերի ընթացքում փոխվել են մարդկանց արտաքին տեսքը, զբաղ-

մունքը, բնակավայրը: Ի հայտ են եկել կրոնական հավատալիքներ, առաջացել են առաջին պետությունները:

- Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք պատմության պարբերացումը, ժամանակաշրջանները, հիմնական զբաղմունքները, նախամարդու կայանման վայրերը, այդ շրջանում կատարված գյուտերը: Ներկայացրե՛ք՝ ինչպես առաջացավ մասնավոր սեփականությունը և տեղի ունեցավ հասարակության շերտավորումը: Երբ առաջացան առաջին պետությունները: Հայկական լեռնաշխարհի տարածքում նշե՛ք առաջին պետական կազմավորումը:

4. Աշխարհի ամենաբազմանդամ լեզվաընտանիքը հնդեվրոպականն է: Այդ լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդները ունեցել են ընդհանուր նախահայրենիք: Հնդեվրոպական մայր լեզվից առաջացել են բազմաթիվ լեզուներ, այդ թվում նաև հայերենը: Այդ ժողովուրդները, աստիճանաբար տարածվելով՝ հեռացել են այլ տարածքներ և հիմնավորվել այդ վայրերում: Հայ ժողովուրդը մնացել է իր նախահայրենիքում և հետագայում ստեղծել պետական կազմավորումներ:

- Ո՞րն է հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների նախահայրենիքը: Թվարկե՛ք հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող մի շարք ժողովուրդների: Ինչ աղբյուրներից ենք տեղեկանում, որ բոլոր այդ ժողովուրդների համար նախահայրենիքը եղել է Հայաստանը: Ներկայացրե՛ք վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում:

5. Պետական կազմավորումների ի հայտ գալուց ի վեր Հայաստանի տարածքը ենթարկվել է որոշակի բաժանումների: Ք. ա. III–II հազարամյակներում նրա տարածքը բաժանված է եղել բազմաթիվ մանր պետական կազմավորումների: Սակայն համահայկական թագավորությունների սկզբնավորմամբ այդ բաժանումները բազմիցս փոփոխվել են՝ մերթ միավորված են եղել մեկ միասնական պետական կազմավորման մեջ, մերթ բաժանվել առանձին թագավորությունների, ենթարկվել վարչական ավելի մանր բաժանումների՝ աշխարհներ (նահանգներ), գավառներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1 ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՆԱԻՐԻ, ԲԻԱՅՆԻԼԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ԱՐԱՐԱՏ)

§ 1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ՏՈՒՇՊԱ–ՎԱՆԸ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Վանի թագավորության հիմնադրումը: Ք. ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին Ասորեստանի հարձակումներն ավելի հաճախակի էին դարձել: Դա Հայկական լեռնաշխարհի իշխանություններին մղում էր ավելի արագացնելու միավորման գործընթացն ընդդեմ ընդհանուր թշնամու:

Ք. ա. IX դարում Վանա լճի ավազանում ստեղծվում և աստիճանաբար հզորանում է մի նոր թագավորություն, որը մեծ դեր է խաղացել ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային պատմության մեջ: Աստվածաշնչում այդ թագավորությունը հայտնի է ***Արարատ*** անվամբ, իսկ ասորեստանցիներն այն կոչում էին ***Ուրարտու:***

Իր արքաների ասուրերեն արձանագրություններում երկիրը կոչվում է մեկ այլ ավանդական անվամբ՝ ***Նաիրի:*** Իսկ տեղական լեզվով սեպագրերում այն կոչվում է ***Բիայնիլի,*** որը կապված է Վան անվան հետ: Դա է պատճառը, որ գիտության մեջ այդ պետությունը հաճախ կոչում են ***Վանի թագավորություն:***

Ասորեստանի արքաների արձանագրություններում *Արամեից* հետո Հայաստանի հզոր արքա է հիշատակվում *Սարդուրի I–ը:*

Աշխարհի հնագույն՝ Ք. ա. I հազարամյակի առաջին կեսի Բաբելոնյան քարտեզը, որտեղ նշված 7 երկրներից մեկը Ուրարտու–Հայաստանն է:

Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնադրման արձանագրություններից

Նա Ք. ա. 830–ական թվականներին դիմակայել է ասորեստանյան արշավանքներին: Ի տարբերություն Արամ Հայկազունու, որի իշխանությունը տարածվում էր Հայաստանի կենտրոնական և հյուսիսային շրջաններում, Սարդուրի I–ը հիշատակվում է որպես Հայաստանի հարավային շրջանների տիրակալ: Նրա շինարարական և ռազմական գործունեությունը կապվում է Վանա լճի ավազանի և Աղձնիք աշխարհի տարածքների հետ:

Սարդուրի I–ի ձեռնարկած կարևոր քայլերը հզորացրին վերելքի ուղին բռնած թագավորությունը: Իսկ նրա հաջորդների իշխանությունը, Վանա լճի ավազանից և Աղձնիքի տարածքից ընդարձակվելով, աստիճանաբար ընդգրկեց ամբողջ Հայկական լեռնաշխարհը, ապա տարածվեց նաև հարակից երկրների վրա:

Տուշպա (Տոսպ, Վան) ամրոցը Վանա լճից

Տուշպա–Վանը՝ մայրաքաղաք: Պատմության մեջ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ նորաստեղծ պետությունը հզորանում է, ուստի կարիք է զգացվում նոր, ավելի մեծ ու հզոր մայրաքաղաքի: Այդպես եղավ նաև Վանի թագավորությունում:

Ք. ա. 830–ական թվականներին Սարդուրի Ի–ը Վանա լճի արևելյան ափին հիմնադրեց *Տուշպա (Տոսպ, Վան)* մայրաքաղաքը: Լճափին բարձրացող հսկայածավալ բնական ժայռի վրա նա կառուցեց բարձր պարիսպներով ու հզոր աշտարակներով անմատչելի մի ամրոց: Մայրաքաղաքի շինարարությունը և ավելի շքեղացումը նաև շարունակվեց հետագա արքաների օրոք, որոնք իրենց տիտղոսաշարում, որպես բացառիկ պատիվ, իրենց կոչում էին *«տերը Տուշպա քաղաքի»:*

Տուշպա (Տոսպ) մայրաքաղաքի հիմնադրման կապակցությամբ Սարդուրի Ի–ը թողել է միևնույն բովանդակությամբ մի քանի արձանագրություն, որտեղ նա ներկայանում է ասորեստանյան արքաների տիտղոսաշարով՝ *«մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա, Նաիրի երկրի արքա...»:* Այդ տիտղոսաշարը նրան էր անցել հաղթողի իրավունքով՝ Ասորեստանի նկատմամբ տարած հաղթանակի շնորհիվ: Հայտնի է, որ նրա զորքերը Ք. ա. 833 թվականին Հայկական Տավրոսի հարավային լանջերին հաջողությամբ պատերազմել են Ասորեստանի արքա Սալմանասար III–ի դեմ:

Արծաթյա դույլ՝ ոսկյա որի պաշտամունքային պատկերաշերտով

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է ստեղծվել Վանի թագավորությունը:
2. Ինչ անուններով է հայտնի Վանի թագավորությունը:
3. Ինչ գիտեք Արամե Ուրարտացու մասին:
4. Ո՞վ է հիմնել Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը:
5. Պատմե՛ք Սարդուրի Ի–ի մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիայնիլի, Վանի թագավորություն, Արամե Ուրարտացի, Սարդուրի I, Տուշպա (Տոսպ, Վան), «մեծ արքա», «տիեզերքի արքա»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՍԱՐԴՈՒՐԻ Ի–Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՇՊԱ–ՎԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արձանագրությունը Սարդուրիի՝ Լութիպրիի որդու՝ մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրին՝ Լութիպրիի որդին, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես. «Ես քարերն այս Ալնիուանու քաղաքից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»:



Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնադրման մեկ այլ արձանագրություն

§ 2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

Վանի թագավորությունն Իշպուինիի գահակալության շրջանում: Ասորեստանի նվաճողական քաղաքականությունը գնալով ավելի սպառնալի էր դառնում: Դրա դեմ անհրաժեշտ էր պայքարել համատեղ ուժերով: Մի կողմից՝ ընդհանուր թշնամուց վտանգը, մյուս կողմից՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչների ազգակցությունն արագացրին ողջ Հայաստանը մեկ միասնական պետության մեջ համախմբելու ընթացքը:

Սարդուրի I–ին հաջորդեց նրա որդին՝ *Իշպուինի* արքան (Ք. ա. մոտ 825–810 թթ.): Վանի թագավորության հզորացման, ողջ Հայաստանի միավորման և տարածաշրջանային տերություն դառնալու գործում կարևոր դեր խաղացին Իշպուինի արքայի օրոք սկսված և նրա որդի *Մենուայի* գահակալության ընթացքում շարունակված բարեփոխումները:

Հատկապես կարևոր էին ռազմական բարեփոխումները, որոնց արդյունքում հասարակ ժողովրդից կազմավորված նախկին աշխարհազորը փոխարինվեց արհեստավարժ, կանոնավոր, ըստ զորատեսակների բաժանված բանակով: Անցկացվեց զորքի վերազինում: Ստեղծվեց ամրոցների մեծ ցանց:

Բացառիկ նշանակություն ուներ կրոնական բարեփոխումը՝ ողջ պետության համար միասնական դիցարանի ստեղծումը,



«Միերի դուռը», որտեղ արձանագրված է Վանի թագավորության դիցարանը

Բրոնզե թիթեղ՝ Խալդի աստծո երկրպագության տեսարանով (Վանի շրջան)

Հատվածներ «Խորխորոյան պարեգրությունից»

որն արձանագրվեց «Միերի դուռ» կոչվող ժայռի վրա: Կարևոր էր նաև տեղական սեպագրի ստեղծումը (մինչ այդ օգտագործվում էր ասորեստանյան սեպագիրը ասուրերեն):

Այդ բարեփոխումների շնորհիվ երկիրն ամրապնդվեց և բազմակողմանիորեն ուժեղացավ, որը հնարավորություն տվեց նաև զգալիորեն ընդլայնելու թագավորության սահմանները: Իշպուինիի օրոք թագավորությանը միացվեց սահմանակից ***Մանա երկիրը, Արդինի–Մուսասիր*** քաղաքը, որը դարձավ թագավորության գերագույն աստված Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոնը:

Վանի թագավորության հզորացումը Մենուա արքայի օրոք: Մենուայի գահակալության շրջանում (Ք. ա. մոտ 810–786 թթ.) Վանի թագավորությունը հզորացավ: Դրան մեծապես նպաստեց երկրի տնտեսական առաջընթացը: Վանա լճի արևելքում կառուցվեց 72 կմ երկարությամբ ջրանցք, որը ժողովրդի մեջ հայտնի է «Շամիրամի ջրանցք» անունով:

Մենուա արքայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը միավորվում է մեկ կենտրոնացված պետության մեջ: Հայաստանի հյուսիսային շրջանների իշխանությունները թեպետ չեն մտնում Վանի թագավորության մեջ, բայց ընդունում են նրա գերիշխանությունը և պարտավորվում վճարել հարկեր:

Մենուա արքան իշխանության երկրորդ շրջանում իր գերիշխանությունն է հաստա-

տում Ուրմիա լճի ավազանից շատ հարավ և Եփրատ գետից արևմուտք: Նա նաև վերահսկողություն է սահմանում Զագրոսյան լեռներով դեպի արևելք և դեպի Փոքր Ասիա տանող գլխավոր ճանապարհների վրա: Մենուան հաղթանակներ է տանում Առաջավոր Ասիայի գերտերության՝ Ասորեստանի նկատմամբ և Վանի թագավորությունը վերածում տարածաշրջանային տերության:

Կավամաններ Վանի թագավորության հնավայրերից

ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ


ՄԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻՑ
ԻՍԱ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԱՍՈՐԵՍՏԱՆ
ԲԱԲԵԼՈՆԻԱ
ԷԼԱՄ
ՊԱՐՍԻՑ ԾՈՑ
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԱՐԱՏ, ՈՒՐԱՐՏՈՒ)
ԹՈՒՇՈՒԳԻԱ
ՄՈՒՇԿԵՐ
ՄԱՐԱԼ
ՄԱՆԱ
ՄԱՐԱՍՏԱՆ (ՄԵԴԻԱ)
ՄԱՆԴԻԱ
ՊԱՐՍԱՍ
ԱՐՊԱԴ
ԱՍՈՐԻ
ԱՍՈՐԻ ԳԱՎԱՌՆԵՐ
Իրդանուշա
Գորդիոն
Մեխտեա
Կարքեմիշ
Դամասկոս
Դուռ-Շարուքին
Նինվե
Աշուր
Բաբելոն
Թեյշեբաինի
Էրեբունի
Արգիշտիխինիլի
Մենուախինիլի
Սարդուրիխինիլի
Տուշպա (Վան)
Սարդուրիխինիլի
Նիմրուդ
Կալխ
Նինուե
Լիբիոնի (Վարզական)
Դարիոս Մեծ
Սանդուարի
Սանդուարի
Սանդուարի

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գործոններ էին նպաստում Հայաստանը մեկ միասնական պետության մեջ համախմբելուն:
2. Պատմե՛ք Իշպուինի արքայի օրոք սկսված և Մենուայի օրոք շարունակված բարեփոխումների մասին:
3. Ինչ գիտեք Արդինի–Մուսասիրի մասին:
4. Ո՞վ է կառուցել «Շամիրամի ջրանցքը», ինչ գիտեք այդ մասին:
5. Ներկայացրե՛ք Մենուա արքայի գերիշխանության սահմանները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք Վանի թագավորության արքաների ժամանակագրական աղյուսակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իշպուինի, Մենուա, «Միերի դուռ», Արդինի–Մուսասիր, «Շամիրամի ջրանցք»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՁԻՈՒ ՑԱՏԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՐՑԱՆԻՇԻ (ՌԵԿՈՐԴԻ) ՍԱՀՄԱՆՈՒՄ

«Խալդյան զորությամբ Մենուա Իշպուինորդին ասում է. «Հենց այս տեղից Արծիբի անունով նժույգը Մենուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն»: Մենուան ասում է. «Ով այս արձանագրությունը տեղահանի, թո՛ղ ոչնչացնեն Խալդին, Թեյշեբան, Շիվինին նրա ընտանիքն (ու) ժառանգությունն արևի տակից»:

Ձիու արձանի գլուխ Կարմիր բլուրից

Վանի տիրակալները հաճախ էին կազմակերպում ռազմամարզական միջոցառումներ: Այս արձանագրությամբ Մենուա արքան հավերժացրել է այդպիսի մի միջոցառման ժամանակ գրանցված բացառիկ արդյունքը:

Կանգունը հավասար էր 51,8 սմ–ի, այսինքն՝ քսաներկու կանգունը կլինի 11 մ 39 սմ: Մենուայի Արծիվ (Արծիբի) նժույգի սահմանած մրցանիշը (ռեկորդը) պահպանվել է 28 դար՝ մինչև 1975թ., երբ գերմանացի Կ. Բերգմանն իր Սվինգեր նժույգով ցատկեց 12 մ 16 սմ:

§ 3. ՎԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վանի տերությունը Արգիշտի Ի–ի օրոք: *Արգիշտի Ի–ի* օրոք (Ք. ա. 786–764 թթ.) Վանի տերությունը հասավ աննախադեպ հաջողությունների: Նրա թագավորությունն ընդգրկում էր Ուրմիա լճի հարավային ափերից մինչև Ջավախք գավառն ընկած տարածքը, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև Մելիտեա և Թաբալ երկրները, Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազանը:

Արգիշտի Ի–ի արձանագրությամբ սաղավարտ

Արգիշտի Ի–ի հեռավոր արշավանքներից մեկի ժամանակ գրավվեց Բաբելոնիան: Դրանով նա երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից և հարավից, աքցանի մեջ վերցրեց Ասորեստանը: Ասորեստանյան երբեմնի հզոր տերությունը սարսափի մեջ էր. այդ է վկայում երկրի զորքերի գերագույն հրա-

Ոռմնանկար Էրեբունիից (Արին բերդից)

Դիցաբանական էակների արձանիկներ Էրեբունիից (Արին բերդից)

մանատարի խոստովանությունը, որում հայոց մեծ տիրակալը բնութագրվում է իբրև մի արքա, *«որի անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են»:*

Շատ ավելի մեծ է եղել Արգիշտի Ի–ի քաղաքական ազդեցության ոլորտը, ինչի մասին պատկերացում են տալիս հնագիտական պեղումները: Մասնավորապես, Հյուսիսային Կովկասում հայտնաբերվել է Արգիշտի Ի–ի անվամբ սեպագիր արձանագրությամբ սաղավարտ, որը պահվում է Բեռլինի Առաջավորասիական թանգարանում: Նույնպիսի սաղավարտներ են հայտնաբերվել նաև Աբխազիայում, Օսիայում և Թռեղքում (Ջավախքի հարևանությամբ):

Արգիշտի Ի–ը հիմնեց նոր բնակավայրեր: Դրանցից նշանավոր էր *Էրեբունին* (Ք. ա. 782 թ.), որը դարձավ ՀՀ մայրաքաղաք Երևանի հիմքը: Դրանից վեց տարի անց Արարատյան դաշտում արքան հիմնեց նոր քաղաք–ամրոց՝ *Արգիշտիխինիլին* (հին մայրաքաղաք Արմավիրի հարևանությամբ): Դրանք դարձան Արգիշտի Ի–ի տերության հյուսիսային գլխավոր հենակետերը:

Ամփոփելով Արգիշտի Ի–ի աշխարհակալության մասին մեր տեղեկությունները՝ տեսնում ենք, որ նրա գերիշխանությունը տարածվել է բուն թագավորության սահմաններից շատ հեռու՝ մինչև Փոքր Ասիա և Պարսից ծոց (Բաբելոնիան ներառյալ): Իսկ նրա քաղաքական ազդեցության ոլորտները ձգվել են մինչև Հյուսիսային Կովկաս և Զագրոսի կենտրոնական շրջաններ:

Վանի տերությունը Սարդուրի II–ի օրոք. չորս ծովերի տերությունը: Վանի թագավորության հզորացումը շարունակվում է նաև Արգիշտի Ա–ի հաջորդի՝ *Սարդուրի II–ի* օրոք (Ք. ա. 764–735 թթ.): Նրա գահակալման ժամանակաշրջանում Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:

Հյուսիսում նրա տիրապետությունը հասնում էր Սև ծով՝ ներառելով Կուլխա (Կողքիս, Կոլխիդա) երկիրը: Տերության հյուսիսարևելյան սահմանը հասնում էր Կուր գետին. առաջին անգամ սեպագիր արձանագրություններում Արցախը (Ուրտեխի անվամբ) հիշատակում է Սարդուրի II–ը: Արևելքում տերության սահմանը հասնում էր Կասպից ծով, իսկ արևմուտքում՝ Փոքր Ասիա: Սարդուրի II–ը հարավում վերագրավեց Բաբելոնիան՝ ամրապնդելով

Խալդի աստվածն առյուծի վրա Որմնանկար, Էրեբունի, Ք. ա. VIII դ.

Էրեբունի հնավայրի ներկայիս տեսքը վերևից



Ռազմի ասպված Թեյշեբայի արձանը Արծկեից (ներկայումս՝ Վանի թանգարանի բակում)

սահմանը մինչև Պարսից ծոց, իսկ հարավ-արևմուտքում տիրեց Դամասկոսի թագավորությանը: Չորս ծովերի միջև ստեղծվում է հզոր մի տերություն:

Այսպիսով՝ Մենուայի կառավարման օրոք Վանի տերությունը դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն ուժերից մեկը, իսկ Արգիշտի I–ի և Սարդուրի II–ի օրոք տարածաշրջանի միանձնյա առաջատարն էր: Դա տևեց ավելի քան կես դար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս է բնորոշում Արգիշտի I–ին Ասորեստանի զորքերի գերագույն հրամանատարը:
2. Ներկայացրե՛ք Վանի տերության սահմանները Արգիշտի I–ի օրոք:
3. Ի՞նչ կարևոր հենակետ–քաղաքներ կառուցեց Արգիշտի I–ը պետության հյուսիսում: Ո՞ր թվականին է հիմնել Արգիշտիխինիլին:
4. Մինչև ո՞ւր էին ձգվում Արգիշտի I–ի քաղաքական ազդեցության ոլորտները:
5. Ի՞նչ ընդգրկում ուներ Վանի տերությունը Սարդուրի II–ի օրոք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Շարունակե՛ք լրացնել ժամանակագրական աղյուսակը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ

Արգիշտի I, Էրեբունի, Արգիշտիխինիլի, Սարդուրի II

ԱՐԳԻՇՏԻ Ի–Ը ԷՐԵԲՈՒՆԻ ԲԵՐԴ–ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էրեբունիի հիմնադրման արձանագրությունը (այլ կերպ ասած՝ Երևանի ծննդյան վկայականը)

Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս ամրոցը հոյակապ կառուցեց: Հաստատեցի Էրեբունի անունը՝ Բիայնիլի (երկրի) զորությունը լուլուական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար): Արգիշտին ասում է. «Հողն ամայի էր: Հզոր մեծագործություններ կատարեցի այնտեղ»:

Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի:

ՍԱՐԴՈՒՐԻ II–Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱ, ԲԱԲԵԼՈՆԻԱ ԵՎ ԲԱԲՈՒԱԹԱ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Խալդին արշավեց, սեփական զենքին ենթարկեց Մանա երկիրը, զգետնեց Սարդուրի Արգիշտորդու առջև: Խալդին զորեղ (է), Խալդյան զենքն իմ զորեղ (է):

Արշավեց Սարդուրի Արգիշտորդին: Սարդուրին ասում է. «Արշավեցի Բաբիլու(նի) երկրի վրա: Գրավեցի Բաբիլու(նի) երկիրը: Կտրում էի մինչև Բարուաթա (երկիրը)»: Խալդյան մեծությամբ Սարդուրին ասում է. «Գրավեցի երեք ամրոց, (որ) ամրացված էին, կռվում գրավեցի: Քսաներեք քաղաք մեկ օրում նվաճեցի: Ամրոցներն ավերեցի, քաղաքներն այրեցի, երկիրը յուրացրի»...

Ժայռը, որին փորագրված է Սարդուրի II–ի գործերի մասին պատմող դարեգրությունը

§ 4. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

Արգիշտի I–ի օրոք կատարված արձանագրությամբ սաղավարտ և Սարդուրի II–ի ժամանակաշրջանի արձանագրությամբ վահան

Յլի գլուխներով կավանոթ Կարմիր բլուրից Ք. ա. VIII–VII դդ.

Ասորեստանի դիրքերի վերականգնումը: Մեր պատմության մեջ ավելի փառաբանված է Արգիշտի I–ը, քան նրա հաջորդ Սարդուրի II–ը, թեպետ վերջինս ավելի մեծ տարածքներ է նվաճել: Պատճառն այն է, որ Արգիշտի I–ը մինչև վերջ մնաց անպարտելի, իսկ Սարդուրի II–ն իշխանության վերջին շրջանում անհաջողություններ և կորուստներ ունեցավ:

Ասորեստանը լիակատար շրջափակման ենթարկելու և ոչնչացնելու Վանի տերության ծրագրերը, որ մշակվել էին Արգիշտի I–ի և զարգացվել Սարդուրի II–ի օրոք, չիրականացան: Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III–ին հաջողվեց Ք. ա. 743 թ. Սիրիայի տարածքում կասեցնել Սարդուրի II–ի առաջխաղացումը դեպի հարավ, որով Ասորեստանը փրկվեց լիակատար շրջափակման մեջ ընկնելուց: Իսկ դրանից ութ տարի անց՝ Ք. ա. 735 թ., նա արշավանք ձեռնարկեց դեպի Տուշպա–Վան մայրաքաղաք: Թեպետ մայրաքաղաքը գրավել նա չկարողացավ, սակայն այդ արշավանքով Ասորեստանը վերականգնեց նախկին դիրքերը՝ Վանի տերության հետ դառնալով Առաջավոր Ասիայի երկու հզորագույն տերություններից մեկը:

Ասորեստանի դիրքերի ամրապնդման համար կարևոր դերակատարում ունեցավ Սարգոն II–ը, որը հաջողությամբ օգտագործեց կիմերների ռազմաշունչ ցեղերի

ասպատակությունները, որոնք Վանի թագավորություն էին ներխուժել հյուսիսից: Հայտնվելով երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում՝ Ք. ա. 714 թ. Ռուսա I–ն անհաջողություններ կրեց: Սարգոն II–ն այդ տարի հարձակվեց Արդինի–Մուսասիրի գլխավոր տաճարի վրա և թալանեց այն: Իր իսկ վկայությամբ՝ նա տաճարից թալանել է մի քանի տոննա կշռող ոսկյա և արծաթե արձաններ, թանկարժեք իրեր, հսկայական քանակությամբ մետաղյա զենք ու զինամթերք:

Կավե սալիկներ՝ մեհենագիր (հիերոգլիֆ) և սեպագիր արձանագրություններով

Վանի թագավորությունը Ռուսա II–ի օրոք: Վանի թագավորությունը շարունակեց մնալ Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը նաև Ռուսա I–ի հաջորդներ Արգիշտի II–ի և Ռուսա II–ի օրոք՝ մինչև Ք. ա. VII դարի կեսերը: Հատկապես նշանավոր էին Ռուսա II–ի գահակալության տարիները (Ք. ա. 685–645–ական թթ.): Նա հաջողություններ արձանագրեց՝ արևմուտքում տիրելով Թաբլանի–Թաբալ, Կաինարու, Մուշկինի, Խալիտու–Խաղտիք և Խաթե երկրներին:

Բրոնզե կապարճ՝ արշավանքի պատկերներով

Ռուսա II–ին հաջողվեց բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել *կիմերների* հետ և նպաստել նրանց՝ Փոքր Ասիայի արևելք տեղափոխվելուն (Կապադովկիայի տարածքը միջնադարյան հայկական աղբյուրներում նրանց անունով կոչվում է *Գամիրք):* Իսկ Փոքր Ասիայի տարածքից Ռուսա II–ը կարողացավ կիմմերներին ուղղել Ասորեստանի դեմ: Փաստորեն, դիվանագետ արքան ոչ



Վանի թագավորության շրջանի պատկերազարդ վահան

միայն կարողացավ կանխարգելել կիմերների հնարավոր հարձակումներն իր երկրի վրա, այլև վաղեմի թշնամուն դարձրեց իրեն դաշնակից, ապա ուղղեց իր մյուս թշնամու՝ Ասորեստանի դեմ:

Ռուսա II–ը կատարեց բազմաթիվ շինարարական աշխատանքներ, որոնցից էր *Թեյշեբաինի* (Կարմիր բլուր) քաղաքի կառուցումը ներկայիս Երևանի տարածքում: Այն նվիրված էր ռազմի ու քաջության աստված Թեյշեբային:

Հարցեր և առաջադրանքներ

1. Համեմատեք Արգիշտի I–ի և Սարդուրի II–ի նվաճումները:
2. Ասորեստանի ո՞ր արքաներին հաջողվեց վերականգնել իրենց տերության դիրքերն Առաջավոր Ասիայում:
3. Հատկապես ո՞ր կողմ էր ուղղված Ռուսա II–ի նվաճողական քաղաքականությունը:
4. Ի՞նչ քաղաքականություն իրականացրեց Ռուսա II–ը կիմերների նկատմամբ:
5. Ի՞նչ գիտեք Թեյշեբաինի քաղաքի մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսա I, Արգիշտի II, Ռուսա II, կիմերներ, Գամիրք, Թեյշեբաինի

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՌՈՒՍԱ II–Ի՝ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐՈՒՄ ԳՏՆՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Խալդիին՝ տիրոջն իր, այս տաճարը կառուցեց Ռուսա Արգիշտորդին, նաև նվիրեց Խալդյան դարպասները հոյակապ Ազա* երկրի Թեյշեբաինի քաղաքի, զոհաբերեց Խալդիին: Ռուսան ասում է. «Ժայռն ամուր էր, հողը՝ ամայի, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր):

Երբ ինձ Խալդին արքայություն տվեց, ելա (= բազմեցի) հայրական տեղն իմ արքայական մենաշնորհյալ(?) (և) Խալդյան այս դարպասները կառուցեցի հոյակապ: Խալդիի կողմից, Խալդյան դարպասների կողմից թող լինի ողջություն, ուրախություն, մեծություն, նաև իրավունք (և) առնական զորություն:

* *Արարատյան դաշտը սեպագրում հայտնի է նաև «Ազա» անունով:*

§ 5. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վանի թագավորության թուլացումն ու անկումը: Ռուսա II–ից հետո Վանի թագավորությունն աստիճանաբար թուլացավ: Նրան հաջորդած *Սարդուրի III–ն* ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Ք. ա. 643 թվականին: Սարդուրի III–ից հետո իշխել է նրա որդի *Սարդուրի IV–ը,* որի գահակալման շրջանի դեպքերի մասին մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ:

Ջարդապուի Կարմիր բլուրից Ք. ա. VIII–VII դդ.

Համեմատաբար լուսաբանված է *Ռուսա III–ի (Էրիմենայի որդու)* իշխանության շրջանը, որից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Վանա լճի արևելյան շրջանների և Արարատյան դաշտի հնավայրերում: Դա ցույց է տալիս նաև, որ նրա օրոք պետության սահմանները նեղացել էին՝ ընդգրկելով Վանա լճի ավազանն ու Արարատյան դաշտը:

Ռուսա II–ի սեպագիր արձանագրություններից, Այանիս հնավայր



Բրոնզե պատկերազարդ գոտու բեկոր

Վանի թագավորության թուլացմանը և անկմանը նպաստեցին նաև հյուսիսից ասպատակող *սկյութական* ցեղերը:

Երբ և ինչպես է անկում ապրել Վանի թագավորությունը, ստույգ հայտնի չէ: Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին կատարվել է առանց լուրջ պատերազմական գործողությունների՝ հավանաբար պալատական հեղաշրջման ճանապարհով: Դա տեղի է ունեցել նախքան Ք. ա. 609 թվականը:

Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում Ք. ա. VII դարում ձևավորվել էր հայկական մի մեծ նոր իշխանապետություն՝ *Հայկազունի Սկայորդու* գլխավորությամբ: Նրա որդի *Պարույր Հայկազունն* էլ վիճակված էր Ք. ա. 612 թ. հռչակել նոր թագավորություն:

Վանի թագավորության շրջանի կրծքազարդ

Վանի թագավորության նշանակությունը Հայաստանի պատմության մեջ: Ինչպես գիտենք, Ք. ա. III–II հազարամյակներում Հայաստանի տարածքում հիշատակվում են բազմաթիվ վաղ պետական կազմավորումներ, որոնք, սակայն, չէին ընդգրկում ամբողջ լեռնաշխարհի տարածքը: Այլ կերպ ասած՝ դեռևս չկային համահայկական թա-

գավորություններ: Եվ այդ կարևոր առաքելությունն իրականացրեց Վանի թագավորությունը՝ միավորելով ողջ լեռնաշխարհը մեկ համահայկական թագավորության մեջ: Հայ ժողովուրդը, որպես լիակատար ընդհանրություն, իր ձևավորման ավարտին հասավ այս թագավորության օրոք:

Ողջ Հայաստանն ընդգրկելուց բացի՝ Վանի թագավորությունը կարևոր դեր խաղաց նաև հայկական պետականության զարգացման գործում: Ք. ա. III–II հազարամյակներում լեռնաշխարհում կային բազմաթիվ փոքր իշխանություններ, որոնք ստեղծում էին համադաշնություններ: Իսկ Վանի թագավորության օրոք վերացվեց համադաշնությունների համակարգը, որը փոխարինվեց միակենտրոն հզոր պետականությամբ: Կենտրոնաձիգ միապետական համակարգը Վանի թագավորությունից փոխանցվեց Հայկազունի Երվանդականների, ապա Արտաշեսյանների և Արշակունիների համահայկական պետություններին: Այլ կերպ ասած՝ Վանի թագավորությունում ստեղծվեց պետական կուռ համակարգ, որը հարատևեց գրեթե մեկուկես հազարամյակ (մինչև Արշակունյաց թագավորության անկումը V դարում):

Ստեղծվեց հսկայական մշակութային ժառանգություն, որը հետագա դարերի ընթացքում շարունակեց զարգանալ Հայաստանում: Եվ, ի վերջո, Վանի թագավորության ժամանակ հիմնվեց համայն հայության այսօրվա սիրելի մայրաքաղաքը՝ Էրեբունի–Երևանը:

Աղյուծի բրոնզե արձանիկ, Ք. ա. VII դ.



Վանի թագավորության շրջանի բրոնզե գոտու հարված՝ հեծյալների պատկերներով

Հարցեր և առաջադրանքներ

1. Հյուսիսից արշավող ի՞նչ ցեղերի դեմ է պայքարել Վանի թագավորությունը:
2. Ե՞րբ է Սարդուրի III–ը հիշատակվում ասորեստանյան արձանագրություններում:
3. Ովքե՞ր են Վանի թագավորության վերջին հայտնի արքաները:
4. Ե՞րբ է անկում ապրել Վանի թագավորությունը:
5. Ներկայացրե՛ք Վանի թագավորության նշանակությունը Հայաստանի պատմության մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տրամագիր վարժության միջոցով համեմատե՛ք Արգիշտի I–ին և նրա գործունեությունը Սարդուրի II–ի հետ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարդուրի IV, Ռուսա III, Հայկազունի Սկայորդի, Պարույր Հայկազունի

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպիսին էլ որ լինեն ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար: Աշշուրի տիրակալների անգթությունը առասպելական էր...

Ռուս ասուրագետ Նիկոլսկին, որն Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը: Սանձահարել Ասորեստանի մոլեգնությունը և արգելել նրան ներխուժելու նաիրյան երկրները. ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ...

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Ք. Ա. VII–VI ԴԱՐԵՐՈՒՄ

Պարույր նահապետը՝ Հայոց թագավոր: Ք. ա. 860–840–ական թվականներին Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններում իշխում էր Հայկազունիների ավագ ճյուղի ներկայացուցիչ Արամը: Ք. ա. IX դարի վերջին և VIII դարի սկզբին Հայաստանի ողջ տարածքն իր իշխանության տակ միավորեց մեկ այլ հայկական արքայատոհմ, որի մայրաքաղաքը Տուշպա–Վանն էր:

Զինվորի բրոնզե արձանիկ, Ք. ա. I հազ. առաջին կես

Ըստ Մովսես Խորենացու՝ Հայկազունիների ավագ ճյուղի ներկայացուցիչ ***Սկայորդին*** կարողանում է հզոր իշխանություն հաստատել Հայաստանի հարավարևմուտքում: Նա այնքան է հզորանում, որ Ք. ա. 681 թ.

«Նինվեի անկումը» հեղինակ՝ Ջոն Մարտին, 1829 թ.

Արծաթյա պտղյակներ Արին բերդից (Ք. ա. VI–V դդ.)

ապաստան է տալիս Ասորեստանի թշնամիներին:

Ք. ա. VII դարի երկրորդ կեսին Վանի թագավորությունը գնալով թուլանում էր: Փոխարենը հզորանում էր Սկայորդու որդի ***Պարույրի*** իշխանությունը, որը տիրում էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքին: Նա դաշինք կնքեց Մարաստանի և Բաբելոնիայի հետ՝ ընդդեմ Ասորեստանի: Ք. ա. 612 թ. դաշնակից զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, որին մասնակցելու համար Պարույր Հայկազունին թագադրվեց Մարաստանի արքայի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:

Երվանդ I Սակավակյաց: Ք. ա. 580–570–ական թթ. Պարույրի հաջորդներից նշանավոր դարձավ Երվանդ I Սակավակյացը, որի անունով էլ Հայկազունիների արքայատոհմի նոր ճյուղը գիտության մեջ կոչվում է ***Երվանդական*** կամ ***Երվանդունի***:

Երվանդ Սակավակյացն ուներ 40000 հետևակ (հետիոտն) և 8000 հեծյալ (ձիավոր) զորք, որն այն ժամանակներում բավական մեծ ուժ էր: Թագավորության սահմանները հյուսիսարևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս–արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:

Տիգրան I Երվանդյան: Երվանդ Սակավակյացին հաջորդեց որդին՝ Տիգրան I Երվանդյանը (Ք. ա. 570–525 թթ.): Մովսես Խորե-

«Տիգրանուհին հարսնության է գնում Մարաստանի Աժդահակ թագավորին» Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջուլիանո Զասսո, 1885 թ.

նացին նրան համարում է Հայկից և Արամից հետո ամենաքաջ Հայկազունին: Հույն պատմիչ Քսենոփոնը տեղեկացնում է, որ Տիգրանն աշակերտել էր մի փիլիսոփայի, և ինքն էլ հայտնի էր իմաստությամբ ու տաղանդով:

Ք. ա. 550 թ. Տիգրան I–ն աջակցեց պարսից արքա Կյուրոս Մեծին՝ տապալելու Մարաստանի տերությունը, քանի որ վերջինս բազմիցս արշավել էր Հայաստանի դեմ: Կյուրոս Մեծը ստեղծեց *պարսկական տերությունը*, որը մինչ այդ գոյություն ունեցած աշխարհակալ տերություններից ամենամեծն էր (հայտնի է Աքեմենյան տերություն անունով): Վերջինիս սահմանները Միջերկրական ծովից և Եգիպտոսից ձգվում էին մինչև Հնդկաստան: Կյուրոս Մեծի գլխավոր դաշնակիցն էր Տիգրան I–ը, որի իշխանությունը, բուն Հայաստանից բացի, տարածվում էր նաև Կապադովկիայի, Վրաստանի և Աղվանքի վրա:

Ոսկյա կրծքազարդ Արմավիրից Ք. ա. VI–V դդ.

Կյուրոս Մեծի դամբարանը (Պասարգադ)

Որպես Կյուրոսի գլխավոր դաշնակից՝ Հայաստանն արտոնյալ դիրք ուներ տերության մեջ: Հայստանն այդ դիրքը պահպանեց նաև Կյուրոս Մեծի հաջորդ Կամբյուսեսի օրոք (Ք. ա. 529–522 թթ.): Տիգրան Երվանդյանին հաջորդում է նրա ավագ որդի ***Վահագնը***, որին անվանակոչել էին ի պատիվ ռազմի և քաջության աստված Վահագնի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է հաղորդում Մովսես Խորենացին Սկայորդու մասին:
2. Ներկայացրե՛ք Պարույր Հայկազունու գործունեությունը:
3. Ի՞նչ անուն է ստացել Հայկազունիների նոր ճյուղը: Ինչո՞ւ:
4. Նկարագրե՛ք Երվանդ Սակավակյացի թագավորությունը:
5. Ինչպե՞ս է բնութագրում Հայոց պատմահայրը Տիգրան Երվանդյանին: Ներկայացրե՛ք նրա թագավորության սահմանները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարասպան, Երվանդ I Սակավակյաց, Երվանդունիներ, Տիգրան I Երվանդյան, Աքեմենյան տերություն

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Նա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և բոլոր նրանցից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու... և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի՝ թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը:

Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Բեհիսթունյան արձանագրությունը Հայաստանի մասին: Ք. ա. 522 թ. Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կռիվներ, որոնք ավարտվեցին Դարեհ I–ի հաղթանակով: Դարեհի դեմ ապստամբեցին Աքեմենյան տերության կազմում գտնվող շատ երկրներ: Հայաստանը չճանաչեց Դարեհի իշխանության իրավականությունը:

Դարեհ I–ի բարձրաքանդակը Պերսեպոլիսում

Դարեհ I–ը պատերազմներ սկսեց իր հակառակորդների դեմ, որոնց մասին է պատմում նրա թողած Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը: Այդ արձանագրության պարսկերեն մասում Հայաստանը կոչվում է ***Արմինա,*** էլամերենում՝ ***Հարմինույա,*** իսկ բաբելերենում՝ ***Ուրարտու:***

Եթե Դարեհ I–ը մյուս երկրները կարողանում էր նվաճել մեկ արշավանքով, ապա դեպի Հայաստան պահանջվեց հինգ արշավանք: Եվ միայն հինգերորդ արշավանքից հետո հայերն ընդունեցին Դարեհի գերիշխանությունը:

Նույն արձանագրությունը հաղորդում է, որ *«հայազգի Արահան՝ Խալդիտայի որ-*

Հայերի պատկերաքանդակը Պերսեպոլիսում

ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք. Ա. 522–521 ԹԹ.

դին» էր ղեկավարում Դարեհի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը, որը նույնպես ճնշվեց:

Ք. ա. 521 թ. Հայաստանը ճանաչում է Աքեմենյանների գերիշխանությունը, սակայն պարսիկները ևս իրենց հերթին ստիպված գնում են զիջումների: Հայաստանում շարունակում են իշխել Երվանդակաները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:

Հայաստանը Աքեմենյան տերության կազմում: Ք. ա. 520 թ. Աքեմենյան տերությունը բաժանվում է քսան մեծ վարչական միավորների՝ *սատրապությունների:* Հայաստանը կազմում է XIII սատրապությունը: Հայաստանը, որպես սատրապություն, Աքեմենյան տերության կազմում մնաց մինչև Ք. ա. 331 թվականը:

Հույն զորավար և պատմիչ Քսենոփոնը, որը Ք. ա. 401 թ. անցել է Հայաստանի

Երվանդ II–ի ոսկեդրամներից

Աշխարհի քարտեզն՝ ըստ հույն ականավոր պատմիչ Հերոդոտոսի (Ք. ա. V դ., ով համարվում է համաշխարհային պատմագրության հայրը

տարածքով, տեղեկացնում է, որ այդ ժամանակ Հայաստանի սատրապն էր ***Օրոնտասը (Երվանդ II–ը),*** որը բարձր դիրք էր գրավում տերության մեջ: Երվանդ II–ը հատել է սեփական պատկերով ոսկե, արծաթե և պղնձե դրամներ:

Ըստ Քսենոփոնի՝ Հայաստանի արևմտյան մասն ուներ իր կառավարիչը՝ ***Տիրիբազ*** անունով, որը ենթարկվում էր Երվանդ II–ին: Ամեն գյուղ ուներ իր գյուղապետը: Քսենոփոնը նկարագրում է Հայաստանը որպես շատ հարուստ, բարեկեցիկ և հյուրընկալ ժողովուրդ ունեցող երկիր: Նշում է, որ չկար մի տուն, որտեղ իրենց չհյուրասիրեին բազմապիսի խմիչքներով ու մսեղեն կերակուրներով: Հույն պատմիչն առաջին անգամ այստեղ է տեսել *գարեջուր:*

Ք. ա. 336 թ. գահ բարձրացավ Աքեմենյան վերջին տիրակալ *Դարեհ III–ը,* որը մինչ այդ եղել էր Հայաստանի սատրապը և հայոց



Քսենոփոնի կիսանդրին

գահի վրա կրել ***Արտաշատ*** պատվանունը: Նույն թվականին Հայաստանի սատրապ է դառնում Երվանդականների տոհմից ***Երվանդ III–ը,*** որին էլ վիճակված էր վերականգնելու Հայաստանի անկախությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ անուններով է հանդես գալիս Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության մեջ:
2. Ներկայացրեք Բեհիսթունյան արձանագրության տեղեկությունները Հայաստանի ու հայերի մասին:
3. Ինչ գիտեք Աքեմենյան տերության XIII սատրապության մասին:
4. Ո՞վ էր Քսենոփոնը: Ինչ տեղեկություններ է նա հաղորդում Հայաստանի մասին:
5. Ինչ պաշտոն է զբաղեցրել Դարեհ III–ը նախքան Աքեմենյան տիրակալ դառնալը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բեհիսթունյան արձանագրություն, սատրապություն, Դարեհ I, Քսենոփոն, Երվանդ II, Դարեհ III, Երվանդ III

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՔՍԵՆՈՓՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Զորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը* քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտասը,** և որը մեծ էր ու հարուստ…

Տներն այստեղ գետնափոր էին. մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով… Այնտեղ կային նաև ցորեն ու գարի և ընդեղեն և կավանոթների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կավանոթների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր***…

* Այսինքն՝ Կորդվաց աշխարհը:
** Խոսքը Երվանդ II–ի մասին է:
*** Խոսքը հենց գարեջրի մասին է:

§ 3. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Ք. ա. 336 թվականին Մակեդոնիայում գահ բարձրացավ քսանամյա Ալեքսանդրը, որին վիճակված էր դառնալու համաշխարհային պատմության նշանավոր դեմքերից մեկը *(Ալեքսանդր Մակեդոնացի կամ Ալեքսանդր Մեծ, Ք. ա. 336–323 թթ.):*

Ալեքսանդր Մակեդոնացու դրամներից

Ք. ա. 334 թ. Ալեքսանդրը պատերազմ սկսեց Աքեմենյան տերության դեմ: Հակառակորդների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք. ա. 331 թվականին, Գավգամելայի մոտ: Դարեհ III–ը պարտվեց, դիմեց փախուստի և սպանվեց փախուստի ճանապարհին: Աքեմենյան տերությունը կործանվեց:

Հայերն աքեմենյան զորքի կազմում մասնակցում էին Գավգամելայի ճակատամարտին: Մեծ Հայքի զորքերը ղեկավարում էր

«Ալեքսանդրն ընդդեմ Դարեհ III–ի» հռոմեական խճանկար Պոմպեյից, Ք. ա. I դար

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Օրոնտես–Երվանդ III–ը, իսկ Փոքր Հայքինը՝ Միթրաուստեսը: Հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնեցին Հայաստանի անկախությունը. Օրոնտես–Երվանդ III–ը Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ 2–3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը Մենոն զորավարի գլխավորությամբ ուղարկվեց գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացնում են նրա բանակը, իսկ զորավարին՝ *«խեղդամահ անում»:* Դրանից հետո Ալեքսանդրը Հայաստան նոր զորք ուղարկելու փորձ չարեց, որը նշանակում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին հաշվի է նստել հայկական զինուժի հետ և խուսափել է նրա հետ նոր առճակատումից:

Դարեհ III–ի սպանությունից հետո Մակեդոնացին շարունակում է արշավանքը դեպի Միջին Ասիա և Հնդկաստան՝ ստեղծելով աննախադեպ հսկայածավալ մի աշխարհակալություն, որի մայրաքաղաք է հռչակում Բաբելոնը: Ալեքսանդրը մահանում է Ք. ա. 323 թվականին՝ 33 տարեկան հասակում: Նրա արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվում է *հելլենիզմի՝ հունականության դարաշրջանը:* Հայաստանն այդ դարաշրջան մտավ լիակատար անկախությամբ:

Արամեագիր երկկողմ կնիք Փոքր Հայքից, որը կրում է Միթրաուպեսի անունը: Ուսումնասիրողների կարծիքով դա պատկանել է հենց Փոքր Հայքի արքային:

Տեսարան Բաբելոն հնավայրից

Գիլգամեշի արձանը (Ք. ա. VIII դարի գործ)

Ալեքսանդրի վեպն ու Հայաստանը: Ալեքսանդր Մակեդոնացու մասին առասպելներ էին ստեղծվել դեռևս նրա կենդանության օրոք: Իսկ Ք. ա. 240 թ. առաջին անգամ հունարեն գրի առնվեց Ալեքսանդրի վեպը:

Վեպում Ալեքսանդրը ձգտում է հասնել անմահության, որի համար է ճանապարհ բռնում *«դեպի Հայոց աշխարհ, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»:* Հատկանշական է, որ դրանից շուրջ երկու հազար տարի առաջ գրի առնված շումերական «Գիլգամեշ» էպոսում ևս հերոսը ձգտում էր անմահության և բռնում է ճանապարհը *«դեպի Արատտա»,* այսինքն՝ Հայաստան:

Փաստորեն, երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդրը վիպական ավանդության մեջ բռնում է նրա ճանապարհը, քանի որ Հին Արևելքի հոգևոր ընկալումներում մեր երկիրն էր համարվում Եդեմ–դրախտ, որտեղ էլ պահվում էր անմահության խորհրդանիշը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Ալեքսանդր Մակեդոնացին:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Գավգամելայի ճակատամարտը, և ովքե՞ր էին հայկական զորքերի հրամանատարներն այդ մարտում: Ի՞նչ քայլեր ձեռնարկեցին նրանք ճակատամարտից հետո:
3. Ի՞նչ վախճան ունեցավ մակեդոնական զորքի միակ արշավանքը Հայաստան (Մենոն զորավարի գլխավորությամբ):
4. Ներկայացրե՛ք Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալությունը:
5. Հայաստանին առնչվող ի՞նչ ուշագրավ տեղեկություններ կան Ալեքսանդրի վեպում: Ո՞ր աղբյուրների տեղեկություններին են դրանք նման:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով ինչո՞ւ էին վիպական հերոսները՝ Գիլգամեշը և Ալ. Մակեդոնացին, ձգտում հասնելու Հայաստան:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալեքսանդր Մակեդոնացի, Գավգամելայի ճակատամարտ, հելլենիզմ, Գիլգամեշ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉ ՌՈՒՖՈՒՍԸ ԻՍՈՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պարսիկները հարյուր հազար էին, նրանցից երեսուն հազարը՝ հեծյալներ, մարերը՝ տասը հազար հեծյալ և հիսուն հազար հետևակային... Հայերն ուղարկեցին 40 000 հետևակային՝ դրան հավելելով 7000 հեծելազոր...

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉ ԱՐԻԱՆՈՍԸ՝ ԳԱՎԳԱՄԵԼԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաուստեսը, կապադովկիացիներին՝ Արիակեսը: Ասում են՝ Դարեհի բանակում եղել է մինչև 40 000 հեծյալ, մինչև 1 000 000 հետևակային, 200 մանգաղակիր մարտակառք և ոչ մեծ թվով փղեր՝ 15 գլուխ, որոնք իրենց հետ բերել էին հնդիկները Հնդոս գետի այս ափից*:

**Արիանոսի նշած թվերը խիստ չափազանցված են: Ավելի հավանական են Ռուֆուսի թվերը՝ 200 000 հետևակ և 45 000 հեծելազոր:*

ՍՏՐԱԲՈՆԸ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԶՈՐԱՎԱՐ ՄԵՆՈՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ոսկու հանքեր կան Սիսպիրիտիսի մեջ, Կաբալայում*, որտեղ Ալեքսանդրն ուղարկեց Մենոնին զորքով. սա խեղդամահ արվեց տեղաբնիկների կողմից:

** Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում է:*

§ 4. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք. Ա. III ԴԱՐՈՒՄ

Հայաստանը Ք. ա. IV դարի վերջին: Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո նրա աշխարհակալությունը բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին հարավից սահմանակցող Սելևկյան տերությունն էր:

Դիոդորոս Սիկիլիացու (Ք. ա. I դ.) հաղորդման համաձայն՝ մակեդոնացիները Ք. ա. IV դարի վերջին բռնազավթել էին Կապադովկիան: Սպանված թագավորի որդին կարողանում է վերականգնվել հայրական գահին՝ շնորհիվ հայոց արքա ***Արդուպեսից*** ստացած զորքերի: Դա վկայում է, որ նորանկախ Հայաստանը Ք. ա. IV դարի վերջին արդեն վճռորոշ ուժ էր տարածաշրջանում:

Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը Ք. ա. III դարում: Ք. ա. III դարում Սելևկյան տերությունը բազմիցս փորձեց նվաճել Հայաստանը, սակայն այդ փորձերն ապարդյուն անցան, քանի որ հայկական երկու թագավորությունները՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը, գործում էին միասնաբար:

Ք. ա. մոտ 260–240–ական թթ. իշխած հայոց արքա ***Սամոս (Շամ) Երվանդականը*** կառուցեց *Կոմմագենեի* կենտրոն *Սամոսատ (Շամշատ)* քաղաքը և հատեց դրամներ, որոնք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են: Ավելի վաղ դրամներ հատել էին Երվանդ II–ը և

Շամ (Սամոս) Երվանդականի դրամներից (դիմերեսը և դարձերեսը)

Սամոսատի միջնաբերդը

Տիրիբազը, որոնք, սակայն, ոչ թե անկախ արքաներ, այլ Աքեմենյան տերության հայ սատրապներ էին:

Ք. ա. 240–ական թթ. Շամին հաջորդեց նրա որդի ***Արշամը,*** որը կառուցեց *Արշամաշատ* քաղաքը Ծոփքում: Արշամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ Սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:

Ք. ա. III դարի վերջին Հայաստանը թուլացել էր: Դա նպաստավոր պայմաններ ստեղծեց Սելևկյանների վաղեմի ծրագրի իրագործման համար, ինչին նպաստեց նաև հայերի ներքին պառակտվածությունը: Ք. ա. 201 թ. Սելևկյան արքա Անտիոքոս III–ի զորքերը հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ արշավեցին Հայաստան: ***Երվանդ IV Վերջինը***

Արշամ
Երվանդականի դրամներից
(դիմերեսը և դարձերեսը)

Միհրական սրբավայր–աստղադիտարանի մուտքը՝ հունարեն մեծաձավալ արձանագրությամբ

(Ք. ա. մոտ 220–201 թթ.) զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ: Այնուհետև գրավվեց Մեծ Հայքի հոգևոր կենտրոն Բագարանը, որտեղ սպանվեց ***Երվազ*** քրմապետը՝ Երվանդ IV արքայի եղբայրը: Դրանով Ք. ա. 201 թ. Մեծ Հայքում վերջ դրվեց Հայկազունիների Երվանդական ճյուղի իշխանությանը:

Արտաշեսը Մեծ Հայքի մեծ մասում, իսկ Զարեհը Ծոփքում նշանակվեցին սելևկյան կառավարիչներ (ստրատեգոսներ): Այդ վիճակը շարունակվեց մինչև Ք. ա. 190 թվականը:

Հռոմեացի աշխարհագրագետ Էրատոսթենեսի (Ք. ա. III–II դդ.) քարտեզը: Հայաստանը նշված է կենտրոնում՝ Սև, Կասպից և Միջերկրական ծովերի միջև

Հարցեր և առաջադրանքներ.

1. Ներկայացրեք Հայաստանը Ք. ա. IV դարի վերջին:
2. Ովքե՞ր են իշխել Կոմմագենեում Ք. ա. III դարում:
3. Պատմեք Մեծ Հայքի՝ Ք. ա. III դարում իշխած արքաների մասին:
4. Ինչպե՞ս Սելևկյաններին հաջողվել գրավել Հայաստանը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդոատես, Սամոս (Շամ), Երվանդական, Սամոսատ, Արշամ, Արշամաշատ, Երվանդ IV վերջին, Բագարան, Երվազ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻՆ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՔԱ ԱՐԴՈԱՏԵՍԻ ՄԱՍԻՆ

Արիարաթեսը, պարտվելով ճակատամարտում, ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեսը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց… Արիարաթեսը, հայերի թագավոր Արդոատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը:

ԳԼՈՒԽ 3 ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծոփքի արքա Զարեհի դրամներից (դիմերեսը և դարձերեսը)

Հայկական թագավորությունների անկախացումը: Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ Ք. ա. 190 թ. տեղի ունեցած ճակատամարտում Սելևկյանները պարտություն կրեցին Հռոմից: Ստեղծված նպաստավոր միջազգային իրադրությունից օգտվելով՝ Ք. ա. 189 թ. ***Արտաշեսը*** Մեծ Հայքում և ***Զարեհը*** Ծոփքում վերականգնեցին անկախությունը: Հռոմը, որին ձեռնտու էր իր հակառակորդ Սելևկյան տերության թուլացումը, անմիջապես ճանաչեց նրանց անկախությունը: Մեծ Հայքի նորահռչակ թագավորությունն իր հիմնադրի անվամբ պատմագիտության մեջ կոչվում է ***Արտաշեսյան:***

Նույն ժամանակ անկախացավ նաև Փոքր Հայքը: Ք. ա. 180–ական թթ. Փոքր Հայքի արքան ***Միհրդատ Երվանդականն*** էր: Քիչ ավելի ուշ՝ Ք. ա. 163 թ., անկախություն է ձեռք բերում նաև Կոմմագենեն, որը նախկինում Մեծ Հայքի բաղկացուցիչ մասն էր: Այդպիսով՝ Ք. ա. 190–160 թթ. ընթացքում անկախացան չորս հայկական թագավորություններ՝ ***Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմմագենեն:***

Արտաշես I–ը և հայկական հողերի միավորումը: Սելևկյան պետությունն արել էր ամեն ինչ, որ թուլացնի Հայաստանը: Ք. ա. 201–190 թթ. ընթացքում, Ծոփքի նման, Մեծ

Հայքից անջատվել էին սահմանամերձ այլ շրջաններ ևս: Առիթից օգտվել էին նաև հարևան պետությունները՝ նվաճելով հայկական տարածքներ:

Արտաշես Ի–ի (Ք. ա. 189–160 թթ.) առաջնահերթ խնդիրներից էր վերադարձնել Մեծ Հայքից անջատված տարածքները: Նա Մարաստանից (Ատրպատականից), Վրաստանից, Պոնտոսից, իսկ ավելի ուշ՝ Սելևկյան տերությունից հետ գրավեց և Մեծ Հայքին վերամիավորեց անջատված շրջանները:

Փաստորեն, Արտաշես Ի–ը Մեծ Հայքի թագավորության մեջ միավորեց հայկական տարածքների մեծագույն մասը: Այդ պատճառով էլ հույն պատմիչ Պոլիբիոսը նրան անվանում է *«Հայաստանի մեծագույն մասի կառավարիչ»:* Զարեհի մահվանից հետո Արտաշես Ի–ը փորձեց Մեծ Հայքին վերամիավորել նաև Ծոփքի թագավորությունը:

Արտաշես Ի
Հեղինակ՝ Մկրտում Հովնաթանյան

Ք. ա. V–III դարերում իշխած Երվանդական նախնի–արքաների կոթողները Նեմրութ լեռան արբավայրում

Կնոջ (հավանաբար՝ Ասպղիկ դիցուհու) մարմարյա արձան Արտաշատից

Դա, սակայն, չհաջողվեց: Այդ ծրագիրը հետագայում իրականացրեց Արտաշես I–ի թոռը՝ Տիգրան II Մեծը:

Արտաքին քաղաքականության մեջ ևս Արտաշես I–ը հասավ լուրջ ձեռքբերումների: Ք. ա. 183–179 թթ. Փոքր Ասիայի տարածքում հինգ փոքր պետություններ պատերազմ էին մղում միմյանց դեմ: Որպես տարածաշրջանի ազդեցիկ երկու ուժեր՝ Հռոմն արևմուտքից և Մեծ Հայքն արևելքից միջամտեցին պատերազմի դադարեցման համար: Հաշտության պայմանագրի կնքման ընթացքում Արտաշես I–ը կարողացավ ընդարձակել Փոքր Հայքի տարածքը Պոնտոսի հաշվին՝ հեռանկարում հայկական բոլոր հողերը մեկ թագավորության մեջ միավորելու ծրագրով:

Նա վարում էր իր գլխավոր հակառակորդ Սելևկյան տերությանը թուլացնելու քաղաքականություն: Երբ Մարաստանի սատրապ Տիմարքոսն ապստամբեց Սելևկյանների դեմ և իրեն հռչակեց անկախ թագավոր (Ք. ա. 162–160 թթ.), Արտաշես I–ն անմիջապես օգնեց նրան իր զորքերով:

Ծուխաց աշխարհի զարդը՝ Ծովք լիճը

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՇԵՍ Ի–Ի ՕՐՈՔ (Ք. ա. 189–160 ԹԹ.)

ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻ ԾՈՎ
ԿԱՍՊԻ ԿՈՂՄ
ՍԱՄԱՐԿԱՆԴ
ՍԱՄԱՐԱ ԳԵՏԻՆ
ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԱԴՈԿԻԱՅԻ ԹԱԳ.
ԱՂՎԱՆԻՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍՈՒՆԻՔ
ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՄՈՍԱՏԱ (Շամշատ)
ՍԱՄՈՍԱՏԱ (Մեգալոպոլիս)
ՍԱՄՈՍԱՏԱՅԻ ԹԱԳ.
ՍԱՄՈՍԱՏԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի քարտեզն ըստ անտիկ աշխարհի ականավոր աշխարհագրագետ Ստրաբոնի, Ք. ա. I — Ք. հ. I դդ.:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է տեղի ունեցել Մագնեսիայի ճակատամարտը և ինչ նշանակություն է ունեցել Հայաստանի համար:
2. Ո՞վ էր Փոքր Հայքի արքան Ք. ա. 180–ական թվականներին:
3. Երբ և ո՞ւմ գլխավորությամբ է հռչակվել Կոմմագենեի անկախ թագավորությունը:
4. Երբ է գահակալել Արտաշես I–ը: Ո՞ր երկրներից է նա հետ գրավել հայկական հողերը:
5. Պատմե՛ք Արտաշես I–ի արտաքին քաղաքականության մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Փորձե՛ք գծապատկերի տեսքով ներկայացնել չորս հայկական թագավորությունները իրենց մայրաքաղաքներով:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մագնեսիայի ճակատամարտ, Արտաշես, Զարեհ, Արտաշեսյան, Միհրդատ Երվանդական, չորս հայկական թագավորություններ՝ Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՍՏՐԱԲՈՆԸ ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փոքր Հայքը բավականին բարեբեր երկիր է: Այն ևս, ինչպես Սոփենեն (Ծոփքը), միշտ կառավարել են իշխաններ, որոնք մերթ եղել են մյուս հայոց* բարեկամ, մերթ էլ՝ իրենց գործերը վարել ինքնուրույն: Նրանց հպատակվել էին խալդայներն ու տիբարենները. այնպես որ իրենց իշխանությունը տարածել էին մինչև Տրապեզունտ և Փառնակիա:

* *Նկատի ունի Մեծ Հայքը:*

§ 2. ԱՐՏԱՇԵՍ Ի–Ի ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Արտաշես Ի–ի վարչական բարեփոխումները: Երկրի ներքին կյանքում Արտաշես Ի–ը մեծ բարեփոխումներ կատարեց: Նա բանակը բաժանեց չորս *սահմանակալ զորավարությունների*՝ ըստ աշխարհի չորս կողմերի: Մեծ Հայքի տարածքը բաժանվեց 120 գավառների:

Արքան կարգավորեց երկրի կառավարման համակարգը: Պետության կարևորագույն պաշտոններում Արտաշես Ի–ը նշանակեց իր մերձավորներին: Ավագ որդի Արտավազդին (ապագա Արտավազդ Ի–ին) նա նշանակեց սպարապետ և արևելյան զորավարության ղեկավար: Արևմտյան զորավարությունը տվեց մյուս որդի Տիրանին, հյուսիսայինը՝ Զարեհ անունով որդուն, հարավայինը՝ իր դայակ Սմբատ Բագրատունուն: Հազարապետության պաշտոնում նշանակվեց արքայորդի Վրույրը, որին պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է որպես *«այր իմաստուն և բանաստեղծ»:* Մյուս որդուն՝ Մաժանին, արքան դարձրեց քրմապետ:

Արտաշես Ի–ի մյուս բարեփոխումները: Արտաշես Ի–ի օրոք մեծ զարգացում ապրեց երկրի տնտեսությունը: Մովսես Խորենացու բնորոշմամբ՝ նրա օրոք Հայոց աշխարհում *«անմշակ հող չէր մնացել»:* Հողային բարեփոխման հետ են կապվում սահմանաքարերը, որոնց վրա կան արամեատառ արձանագրություններ: Դրանցում արքան ներկայանում է *Երվանդական* տոհմանու-

Արտաշատի մայրաքաղաքային դրամներից (դիմերեսը և դարձերեսը)

Արամեատառ արձանագրությամբ սահմանաքար Թեղուտից

Արծվի արձանիկ Արտաշատ մայրաքաղաքից

նով: Այդպես Արտաշեսը հավաստում էր, որ ինքը ևս սերում է Հայկազունի Երվանդականներից:

Արտաշես Ի-ն ամրապնդեց թագավորական նախնիների պաշտամունքը, որը Հայաստանում տիրում էր դեռևս Վանի թագավորության ժամանակաշրջանում: Արտաշատում կառուցվեց Մայր դիցուհի Անահիտի տաճարը, որտեղ կանգնեցվեցին Արտաշեսի նախնիների արձանները:

Արտաշեսը ճշգրտեց օրացույցը, բարեփոխեց տոմարը, լճերի ու գետերի վրա հաստատեց նավարկություն, կատարեց շատ այլ բարենորոգումներ:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Երկրի կյանքում կարևոր իրադարձություն էր նոր մայրաքաղաքի՝ *Արտաշատի* հիմնադրումը Ք. ա. 185 թվականին: Պատմագիր Պլուտարքոսի հաղորդմամբ՝ մայրաքաղաքի տեղն ընտրել և թագավորի առաջարկով քաղաքի հատակագիծը կազմել է Կարթագենի նշանավոր զորավար Հաննիբալը: Նա, հալածվելով Հռոմից, որոշ ժամանակ ապաստան էր գտել Հայաստանում: Դրանից ելնելով՝ հռոմեական պատմագ-

Արտաշատ հնավայրի նոր պեղված մի հատված

ության մեջ Արտաշատը հիշատակվում է որպես «Հայկական Կարթագեն»:

Կառուցվեցին ճոխ ապարանքներ, տաճարներ, թատրոն և այլ շինություններ: Արտաշատը դարձավ ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկն աշխարհում:

Արտաշես Ի–ը իր մեծագործությունների համար փառաբանվել է ժողովրդական երգերում: Նրան մեծարել են *Մեծ, Բարեպաշտ և Աշխարհակալ* պատվանուններով: Սիրելի արքային են նվիրված «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» ասքերը: Ըստ Մովսես Խորենացու հաղորդման՝ նրա հուղարկավորության ժամանակ սգում էր ամբողջ հայ ժողովուրդը:

Կարթագենի Հաննիբալ զորավարը

«Արտաշեսի հուղարկավորությունը» Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջուզեպպե Կանելլա, 1885 թ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Արտաշես I–ի վարչական բարեփոխումները:
2. Ինչ գիտեք Արտաշես I–ի հողային բարեփոխումների մասին:
3. Ինչ տոհմանունով է ներկայանում Արտաշես I–ը սահմանաքարերի արամեատառ արձանագրություններում:
4. Վարչականից և հողայինից բացի՝ ինչ բարեփոխումներ է կատարել Արտաշես I–ը:
5. Պատմեք Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմեք աղյուսակ և ներկայացրեք Արտաշես Մեծի բարեփոխումներն ու դրանց բովանդակությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանակալ զորավարություն, Սմբատ Բագրատունի, հազարապետություն, սահմանաքար, Արտաշես I, Արտաշատ, «Հայկական Կարթագեն»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան* է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի** արձանը և հայրենական բոլոր կուռքերը: Բայց Ապոլոնի*** արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում–նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և, ավելի շատ բան էլ իր կողմից շինելով, սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք:

* *Մեհյանը նախաքրիստոնեական տաճարն է:*

** *Արտեմիսը Հայաստանում նույնացվել է Անահիտ դիցուհու հետ:*

*** *Ապոլոնը Հայաստանում նույնացվել է Տիր աստծո հետ:*

ԳԼՈՒԽ 4 ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

§ 1. ՏԻԳՐԱՆ II–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ: ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայաստանը Արտաշես I–ի հաջորդների օրոք: Արտաշես I–ից հետո Մեծ Հայքում իշխեց նրա ավագ որդի ***Արտավազդ I–ը*** (Ք. ա. մոտ 160–115 թթ.): Նրա իշխանության վերջին շրջանի մասին հայտնի է մի իրադարձություն: Նոր հզորացող Պարթևստանի և Մեծ Հայքի միջև տեղի է ունենում պատերազմ, որն ավարտվում է հայերի պարտությամբ: Պարթևները, հասկանալով, որ հայերը վրեժ կլուծեն, իրենց ապահովագրելու համար պահանջում են պատանդ տալ արքայազնին: Քանի որ Արտավազդ I–ը զավակ չուներ, պատանդ է տարվում նրա եղբայր Տիգրանի որդին, որի անունը նույնպես Տիգրան էր:

Արտավազդ I–ից հետո՝ մոտ Ք. ա. 115 թ., գահ բարձրացավ նրա եղբայր *Տիգրան I–ը,* որն իշխեց մինչև Ք. ա. 95 թվականը: Նրա

Տիգրան I–ի դրամներից դիմերեսը և դարձերեսը

Արածանիի հովիտը Ծոփաց աշխարհում. տեսարան Բալու բերդից

Տիգրան Մեծի դրամներից դիմերեսը և դարձերեսը: Արտաշատում հատված դրամների դարձերեսին սովորաբար պատկերված էր լինում Անահիտ մայր դիցուհին, որը համարվում էր մայրաքաղաքի գլխավոր հովանավորը

Հեծյալի արձանիկ Արտաշատից Ք. ա. I դ.

մահից հետո արքայազն Տիգրանը վերադարձավ Պարթևստանից և, որպես վերադարձի պայման, պարթևներին զիջեց որոշ տարածքներ:

Տիգրան II–ի գահակալումը: Հայոց պատմության խոշորագույն գործիչներից է Տիգրան II Մեծը: Նա ծնվել է Ք. ա. 140 թվականին: Երիտասարդ հասակում պատանդ տարվելով Պարթևստան՝ այնտեղ մնում է մինչև 45 տարեկանը: Պարթևական արքունիքում արքայազն Տիգրանն ուներ պատվավոր դիրք: Նրա դուստր Արիազատան ամուսնացել էր Պարթևստանի արքա Միհրդատ II–ի հետ: Պատանդության տարիներին նա ուսումնասիրել էր Պարթևական և Հռոմեական տերությունների փորձը, որը հետագայում օգտագործեց իր գահակալության տարիներին:

Ք. ա. 95 թ. վերադառնալով Հայաստան՝ արքայազն Տիգրանը թագադրվեց Աղձնիք նահանգի մինչ այդ անհայտ մի վայրում: Հետագայում հենց այդ վայրում նա կառուցեց իր տերության նոր մայրաքաղաք *Տիգրանակերտը:*

Ծոփքի վերամիավորումը: Գահ բարձրանալուն պես Տիգրան II–ը (Ք. ա. 95–55 թթ.) սկսեց կատարել բարեփոխումներ՝ հատկապես մեծ ուշադրություն դարձնելով ռազմական բնագավառին:

Մեծ ծրագրեր իրականացնելուց առաջ անհրաժեշտ էր նախ լիովին միավորել Մեծ Հայքի թագավորությունը, ինչը չէր հաջողվել Արտաշես I–ին: Ծոփքի թագավորությունը դեռ շարունակում էր անջատ

մնալ Մեծ Հայքից: Իր թագավորության երկրորդ տարում՝ Ք. ա. 94 թ., Տիգրան II–ը պարտության մատնեց այնտեղ իշխող Արտանես Երվանդունուն և Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին: Հայոց արքան պետք է շարունակեր իր նվաճումները, որի համար անհրաժեշտ էր մեկտեղել ռազմական, տնտեսական և դիվանագիտական հմտությունները:

Պարթև արքա Միհրդատ II Մեծի դրամներից

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ և ե՞րբ է թագավորել Մեծ Հայքում Արտաշես I–ից հետո:
2. Ո՞վ էր Տիգրան II–ի հայրը, և ե՞րբ է նա թագավորել:
3. Ե՞րբ է թագադրվել Տիգրան II–ը և որտե՞ղ:
4. Ո՞ր թվականներին է իշխել Տիգրան II Մեծը:
5. Ե՞րբ և ինչպե՞ս է տեղի ունեցել Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ Տիգրան II–ը թագադրվեց ոչ թե Հայաստանի մայրաքաղաքում, այլ Աղձնիք նահանգի անհայտ մի վայրում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտավազդ I, Տիգրան I, Տիգրան II Մեծ, Միհրդատ II, Արտանես Երվանդունի, Ծոփքի վերամիավորում

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՀՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ ՍՏՐԱԲՈՆԸ (Ք. Ա. I – Ք. Հ. I ԴԴ.) ՏԻԳՐԱՆ II–Ի ԾԱԳՄԱՆ ԵՎ ԾՈՓՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշեսի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ այսպես կոչված բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, աղվաններին և իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա: Իսկ Զարեհի շառավիղն էր Արտանես Ծոփացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան, և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը:

§ 2. ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Միհրդատ VI Պոնտացու դրամներից

Հայ–պոնտական դաշինքը և Կապադովկիայի նվաճումը: Հայկական բոլոր հողերը միավորելու հաջորդ քայլը պետք է լիներ Փոքր Հայքի միացումը: Սակայն այն չհաջողվեց, քանի որ Ք. ա. 112 թ. Փոքր Հայքը միացվել էր Պոնտոսին, որտեղ թագավորում էր Միհրդատ VI–ը: Նա ստեղծել էր ուժեղ պետություն Սև ծովի ավազանում և նպատակ ուներ Հռոմին դուրս մղելու Փոքր Ասիայից և Հունաստանից:

Միհրդատ VI–ի ծրագրերը կապվում էին Արևմուտքի հետ: Իսկ հայոց արքայի ծրագրերը կապվում էին Հայաստանից արևելք, հարավ և հարավ–արևմուտք ընկած տա-

Տեսարան Կապադովկիայից

ռածքների հետ, որը չէր խանգարում Միհրդատ Եվպատորին: Երկու երկրներին էլ անհրաժեշտ էր ունենալ ամուր թիկունք, մանավանդ որ նրանք բախվելու էին այնպիսի գերտերությունների հետ, ինչպիսիք էին Հռոմն ու Պարթևստանը: Նույն շահերն ունենալով՝ Տիգրան II–ն ու Միհրդատ Պոնտացին Ք. ա. 94 թ. դաշինք են կնքում: Այն ամրապնդվում է 46–ամյա Տիգրան II–ի և Միհրդատ Եվպատորի դուստր Կլեոպատրայի ամուսնությամբ, որը Հայոց արքայից փոքր էր 30 տարով:

Դաշնագրի համաձայն՝ հայ–պոնտական զորքերը Ք. ա. 93 թ. և Ք. ա. 91 թ. նվաճեցին Կապադովկիան, որի արքան հռոմեացիների դաշնակիցն էր: Երկու արշավանքների ժամանակ էլ, ըստ պայմանավորվածու-

Ծիսական անոթ արջի կերպարանքով Արտաշատ, Ք. ա. I դ.

Պարթևստանի ամառային մայրաքաղաք Էքբատանի ավերակներն այսօր

Հեծյալների արձանիկներ Արտաշատ մայրաքաղաքից

թյան, Կապադովկիայի տարածքը միացվում էր Պոնտոսին, իսկ շարժական ամբողջ գույքը և գերիները անցնում էին Հայոց թագավորությանը: Այդ պայմանը բխում էր Տիգրան Մեծի հեռահար շահերից: Բանն այն է, որ Կապադովկիայի տարածքն իր իշխանության տակ վերցնելը կհանգեցներ Հռոմի հետ հակամարտության, որը ձեռնտու չէր Տիգրան Մեծին: Փոխարենը նա նախապատրաստվում էր Պարթևստանի դեմ պատերազմի՝ պատանդության դիմաց պարթևներին զիջած հայկական հողերը ազատագրելու և Մեծ Հայքին վերամիավորվելու ծրագրով: Իսկ մեծ պատերազմից առաջ անհրաժեշտ էր երկիրն ապահովել տնտեսական հզոր պաշարներով:

Հայ–պարթևական պատերազմը: Ք. ա. 87 թ. մահացավ Պարթևստանի արքա Միհրդատ II–ը, որը Տիգրան II–ի փեսան էր: Պարթևստանում սկսվեցին գահակալական կռիվներ: Պահը հարմար էր հայկական տարածքները վերադարձնելու համար, և հենց Ք. ա. 87 թ. Տիգրան Մեծն արշավեց Պարթևստանի վրա: Նա, ջախջախելով պարթևական զորքերը, հասավ Պարթևստանի ամառային մայրաքաղաք Էքբատան և պաշարեց այն: Խուճապահար պարթևական արքունիքը Տիգրան Մեծին զիջեց ոչ միայն նրա գրաված տարածքները, այլև նրան շնորհեց *«Արքայից արքա»* տիտղոսը՝ ընդունելով նրա գերիշխանությունը: Այդ մասին է վկայում հռոմեացի պատմիչ Պոմպեոս Տրոգոսը՝ ավելացնելով, որ *«նրան կոչում էին Ասիված»…*

Այսպիսով՝ հայ–պարթևական պատերազմի արդյունքում Տիգրան Մեծը ոչ միայն վերադարձրեց հայկական տարածքները, այլև ստեղծեց մեծ տերություն, որի հարավային սահմանը հասավ մինչև Պարսից ծոց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Միհրդատ VI–ը: Ի՞նչ ծրագրեր ուներ նա:
2. Ե՞րբ է կնքվել հայ–պոնտական դաշինքը: Ինչպե՞ս է այն ամրապնդվել:
3. Ե՞րբ և ի՞նչ պայմաններով հայ–պոնտական զորքերը նվաճեցին Կապադովկիան:
4. Ե՞րբ սկսվեց հայ–պարթևական պատերազմը և ի՞նչ ավարտ ունեցավ:
5. Ի՞նչ է հաղորդում Պոմպեոս Տրոգոսը Տիգրան Մեծի մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լրացրե՛ք Տիգրան Մեծի գահակալման և նվաճումների ժամանակագրությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ–պոնտական դաշինք, Կապադովկիա, Միհրդատ Եվպատոր, Էքբատան

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՍՏՐԱԲՈՆԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տիգրանը փոփոխական բախտ է ունեցել, քանզի նա սկզբում պատանդ է եղել պարթևների մոտ, այնուհետև պարթևները, որպես վարձ ստանալով յոթանասուն հովիտներ Հայաստանից, նրան վերադարձնում են գահը: Նա հզորանալով թե՛ այդ վայրերը հետ վերցրեց և թե՛ նվաճեց նրանց երկիրը՝ Նինվեի և Արբելայի շուրջը: Նա հպատակեցրեց նաև Ատրպատականը և Կորդուքը և սրանց հետ նաև մնացյալ Միջագետքը: Բացի այդ, անցնելով Եփրատը, նա ուժով նվաճեց Ասորիքը և Փյունիկեն:

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Մեծ Հայքի տարածքը
Տիգրան Մեծի տերությունը
Տիգրան Մեծի դաշնակից գեղեր, որոնք գորքեր էին տրամադրում պատերազմի ժամանակ
Այլ պետություններ
ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Անտիոք Մայրաքաղաքներ
Վան Խոշոր քաղաքներ
Տիգրանակերտ Տիգրան Մեծի հիմնած քաղաքներ
ՄԵԾ ՀԱՅՔ
ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱԿԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԲԱԹԵԱՑԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՊՏՂՈՄՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՍՐԻՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍՄԱՍՏՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎՔՍԻՆՅԱՆ ՊՈՆՏՈՍ
ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻ ԾՈՎ
ՍԱՍԱՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍԱՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ

§ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Սելևկյան պետության միացումը: Հզոր Պարթևստանի ջախջախումից հետո Տիգրան Մեծը դարձավ իր ժամանակի աշխարհի հզորագույն տիրակալներից մեկը: Նրա հետ դաշնակցեցին Միջին Ասիայի որոշ ցեղեր, որոնք պատերազմի ժամանակ զորք էին տրամադրում հայոց տիրակալին:

Ք. ա. 85–84 թթ. հայոց տերությանը միացվեցին նաև Կոմմագենեն, Հայոց Միջագետքը, Կորդուքը, Օսրոենեն և Միգդոնիան: Արդյունքում՝ հայկական տերությունը սահմանակից դարձավ Սելևկյան պետությանը: Վերջինս երկարատև երկպառակտչական պատերազմներից չափազանց թուլացել էր:

Կոմագենեի Երվանդունի արքան Վահագն–Արտագնես աստծո հետ. Նիմֆայոսի Արսամեա

Սելևկյան Ապամեա քաղաքի ավերակներից

Արծվի պատկերով ոսկյա կախազարդ Սիսիանից, Ք. ա. I դ.

Սելևկյան ավագանին և ժողովուրդը որոշեցին իրենց երկիրը փրկել՝ հրավիրելով Հայոց տիրակալին իշխելու իրենց: Ընդ որում՝ նրանք քննարկեցին ժամանակի բոլոր հզոր արքաների թեկնածությունը և միաձայն ընտրեցին Հայոց տիրակալին: *Ք. ա. 83 թ.* մայրաքաղաք *Անտիոքում* Տիգրան Մեծը բազմեց Սելևկյանների գահին և իշխեց այնտեղ 17 տարի: Այն Սելևկյան պետությունը, որ երկար ժամանակ պայքարում էր Հայաստանին գերիշխելու համար, իր խնդրանքով մտավ Հայաստանի տիրապետության տակ:

Միջերկրականի արևելյան ծովափի նվաճումը: Ինչպես Պարթևստանի նվաճումից հետո, այս դեպքում էլ Տիգրան Մեծի հաղթարշավը շարունակվում է: Ք. ա. 83–81 թթ. Տիգրանի տերությանն են միանում Կիլիկիան և Փյունիկիան:

«Տիգրան Մեծը՝ շրջապատված իրեն ուղեկցող չորս թագավորներով» Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջ. Ֆուզարո, 1885 թ.

Իրենց հմտությամբ հայտնի կիլիկյան ծովագնացներին Տիգրան Մեծը հանձնարարեց վերահսկել Միջերկրական ծովի արևելյան շրջանները:

Փյունիկյան քաղաքների գրավումից հետո հայոց տիրակալը Ք. ա. 81 թ. դրանց շնորհեց «ազատություններ», այսինքն՝ լայն ինքնավարություն: Այդ քաղաքների թվում էր նաև Բերիթը՝ (ներկայիս Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը): Ի նշան շնորհակալության՝ քաղաքներն իրենց օրացույցները սկսեցին հաշվել այդ թվականից, որը նշվում էր նաև իրենց քաղաքային դրամների վրա: ***Հայոց տիրակալն իր նվաճումներում անգամ ազատարար էր:***

Միջերկրական ծովի արևելյան ափի հարավային մասին տիրելու համար բուռն պայքար ծավալվեց Ք. ա. 70–ական թվականներին: Տիգրան Մեծի գլխավոր հա-

Ոսկյա մեդալիոն՝ հաղթանակի դիցուհու պատկերով, Սիսիան, Ք. ա. I դար

Տեսարան Նաբաթեական թագավորության մայրաքաղաք Պետրայից

կառակորդը Նաբաթեական թագավորությունն էր, որը Ք. ա. 72 թ. ընդունեց Հայաստանի գերիշխանությունը: Հայոց տիրակալի գերիշխանությունը ճանաչեց նաև Հրեաստանը:

Ինչպես վկայում է հույն պատմիչ Ապիանոս Ալեքսանդրիացին, բոլոր երկրները, մինչև Եգիպտոս, ենթարկվեցին Տիգրան Մեծին: Իսկ Եգիպտոսը Հայոց տերության բարեկամ երկրներից էր: Դեռևս Ք. ա. 80 թ. Տիգրան Մեծի օգնությամբ Պտղոմեոս XII–ը Եգիպտոսից դուրս էր մղել նվաճող հռոմեացիներին և հաստատվել հայրական գահին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր պետությունները միացվեցին հայոց տերությանը Ք. ա. 85–84 թվականներին:
2. Ինչպե՞ս տեղի ունեցավ Սելևկյան պետության անցումը Տիգրան Մեծի իշխանությանը:
3. Ո՞ր թվականներին հայոց տերության մեջ մտան Կիլիկիան և Փյունիկիան:
4. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Տիգրան Մեծը փյունիկյան քաղաքների նկատմամբ:
5. Ի՞նչ հարաբերության մեջ էր Եգիպտոսը Տիգրան Մեծի տերության հետ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով ինչո՞ւ էին նվաճված ժողովուրդները ընդունում Տիգրան Մեծի գերիշխանությունը և անգամ իրենք էին հրավիրում նրան նստելու իրենց գահին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորդուք, Օսրոենե, Միգդոնիա, Կիլիկիա, Փյունիկիա, Նաբաթեական թագավորություն, Հրեաստան

ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԻՉ ՊՈՄՊԵՍՈՍ ՏՐՈԳՈՍԸ (Ք. Ա. I – Ք. Հ. I ԴԱՐԵՐ) ՍԵԼԵՎԿՅԱՆ ԳԱՀԻՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եղբայրների փոխադարձ ատելությունը, ապա և նրանց որդիներին ժառանգաբար անցած թշնամությունն անընդհատ պատերազմներ ծնեցին, որոնք ծայրահեղ թուլության հասցրին Ասորիքն ու նրա թագավորներին: Ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին...

Բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջը, որը, սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթևների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի խնամին:

Եվ այսպես հրավիրված լինելով Ասորիքի* գահին բազմելու՝ նա 17 տարի շարունակ կառավարում էր ամենայն անդորրությամբ, պատերազմներով չէր խանգարում ուրիշների հանգիստը, և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար:

* *Ասորիքը կազմում էր Սելևկյան պետության միջուկը:*

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉ ԱՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻՆ (II ԴԱՐ) ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՈՂՋ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Տիգրանը տիրեց Սիրիային՝ (հպատակեցնելով) Եփրատից այն կողմ բնակվող բոլոր սիրիական ցեղերին՝ մինչև Եգիպտոս: Միաժամանակ նվաճեց Կիլիկիան, քանզի այն ևս հպատակվում էր Սելևկյաններին, և, այդ բոլորի վրա ստրատեգոս նշանակելով Բագադատեսին, (իշխեց) 14 տարի:

ՀՐԵԱ ՊԱՏՄԻՉ ՀՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍԸ (I–II ԴԱՐԵՐ) ՀՐԵԱՍՏԱՆԻ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այդ ժամանակ էլ լուր է հասնում, թե Հայոց թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով ներխուժել է Սիրիա և գալիս է Հրեաստանի դեմ: Սա, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիս (քաղաքը), քանի որ Սելենե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնակիչներին դռները փակել Տիգրանի առաջ...

Դեսպանները, հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թագուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնահատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածությունից, լավագույնս հուսադրեց...

§ 4. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մայրաքաղաք Տիգրանակերտի պարսպի հայրվածներից

Հայկական աշխարհակալության սահմանները: Ք. ա. 95–70 թթ. ընթացքում ընդամենը քառորդ դարում, Տիգրան Մեծը ստեղծեց հզոր մի աշխարհակալություն: Նրա տերության սահմանները և ազդեցության ոլորտները ձգվում էին Եգիպտոսից ու Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան, Կովկասյան լեռներից և Կասպից ծովից մինչև Պարսից ծոց և Հնդկական օվկիանոս: Հայոց տերությունը՝ գերիշխանության ներքո գտնվող երկրներով և քաղաքական ազդեցության ոլորտներով հանդերձ, կազմում էր շուրջ 3 միլիոն քառ. կմ տարածք: Այսինքն՝ 10 անգամ ավելի մեծ, քան բուն Մեծ Հայքի թագավորությունը:

Հռոմեացի պատմիչների տեղեկությունների համաձայն՝ Տիգրան Մեծի բանակի կազմը հասնում էր 300 հազարի, որի մեջ ընդգրկված էին նաև նվաճված երկրների բանակները: Բուն հայկական զորքը կազմում էր 100 հազար:

Տիգրան Մեծի հիմնած բնակավայրերը: Ք. ա. 80–ական թթ. Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը հայտնվել էր Տիգրան Մեծի աշխարհակալության հյուսիսում: Մեծ տիրակալը կարող էր նոր մայրաքաղաք հռչակել նվաճված երկրների որևէ խոշոր քաղաք, սակայն դա դեմ էր հայրենապաշտ արքայի սկզբունքներին: Նոր մայրաքաղաք Տիգրանակերտը հիմնվեց մի վայրում, որը և՛ հայոց հողում էր, և՛ համեմատաբար կենտրոնական դիրք էր

գրավում տերության մեջ: Դա այն վայրն էր, որտեղ Ք. ա. 95 թ. թագադրվել էր արքայազն Տիգրանը: Փաստորեն, դեռևս պատանդության շրջանում նա մշակել էր աշխարհակալության հասնելու ծրագիր՝ որոշելով նաև ապագա մայրաքաղաքի տեղը: Տիգրանակերտում էլ կատարվեց նրա թագադրությունը:

Տիգրանակերտ մայրաքաղաքը շրջապատված էր 50 կանգուն, այսինքն՝ 25 մետր բարձրությամբ պարսպով, ուներ անառիկ միջնաբերդ, պալատ, թատրոն, պարտեզներ, այգիներ և որսատեղիներ: Այն ժամանակի աշխարհի մեծագույն քաղաքներից էր: Հռոմեացի պատմիչի վկայությամբ՝ հայերը սիրով և արագորեն ծաղկեցրել են նոր մայրաքաղաքը, և դա արել են *«հանուն արքայի նկատմամբ տածած սիրո և հարգանքի»:*

Հայոց տիրակալը կառուցեց երկրի համար կենսական նշանակություն ունեցող *Արքունի պողոտան,* որը կապում էր հին մայրաքաղաք Արտաշատը Տիգրանակերտին:

Արցախի Տիգրանակերտի պարսպի հատվածներից

Արցախի Տիգրանակերտի պարսպի հատված



Կիկերոնի (Ցիցերոն) կիսանդրին

Մայրաքաղաքից բացի՝ Տիգրան Մեծն իր անունով հիմնադրեց ևս վեց բնակավայր: 2006 թ. հայ հնագետները հայտնաբերեցին Արցախի Տիգրանակերտը, որի պեղումները շարունակվում են մինչ օրս:

Տիգրան Մեծը ժամանակակիցների գնահատմամբ: Տիգրան Մեծը չափազանց բարձր գնահատականի է արժանացել իր ժամանակակիցների կողմից: Հռոմի ամենաականավոր դեմքերից մեկը՝ Կիկերոնը (Ցիցերոնը), Սենատում արտասանած իր ճառերում Տիգրան Մեծին կոչել է «vehemens» *(վեհագույն),* որը Հռոմում քաղաքական գործչին տրվող բարձրագույն գնահատականն էր: Նրանից քիչ ուշ ապրած հռոմեացի պատմիչ Վելեոս Պատերկուլոսը Տիգրան Մեծին կոչել է ***«իր ժամանակի հզորագույն թագավոր»*** և ***«թագավորներից մեծագույնը»***: Իսկ Պոմպեոս Տրոգոսը տեղեկացնում է, որ նրան մեծարում էին՝ ***«Ապրված»*** կոչելով...

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Տիգրան Մեծի տերության սահմանները:
2. Համեմատեք հայոց երկու մեծ տիրակալներին՝ Արգիշտի Ի–ին և Տիգրան II Մեծին:
3. Երբ և որտեղ կառուցեց Տիգրան Մեծն իր նոր մայրաքաղաքը: Նկարագրեք մայրաքաղաք Տիգրանակերտը:
4. Ինչ գնահատական է տալիս Կիկերոնը (Ցիցերոնը) Տիգրան Մեծին:
5. Ինչպես են գնահատել Տիգրան Մեծին մյուս ժամանակակիցները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք Տիգրան Մեծի նվաճումների ժամանակագրական աղյուսակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիգրանակերտ, արքունի պողոտա, Կիկերոն (Ցիցերոն), Վելեոս Պատերկուլոս

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԻՉ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ (I–II ԴԱՐԵՐ) ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Տիգրանը նոր միայն սկսում էր, նրա ծրագրերն ու հնարավորությունները խիստ համեստ էին, իսկ այժմ նա հպատակեցրել է բազում ժողովուրդների, խորտակել է, *ինչպես դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին,* պարթևների հզորությունը, իսկ Միջագետքը հեղեղել է հելլեններով, որոնց նա ամբողջ բազմություններով բռնագաղթեցրել էր Կիլիկիայից ու Կապադովկիայից:

Այլ ժողովուրդներից նա արաբական քոչվոր ցեղերին քշեց իրենց նախկին վայրերից և բնակեցրեց իր մայրաքաղաքի մոտ, որպեսզի նրանց օգտագործի առևտրական կարիքների համար: Նրա մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ՝ որպես ուղեկից կամ թիկնապահ...

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉ ԱՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Նա (Տիգրան Մեծը) քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղիներով և լճերով:

Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Տիգրանակերտը լի էր գանձերով, շքեղ կառույցներով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, հանուն արքայի նկատմամբ տածած սիրո և հարգանքի, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենացման ու ընդարձակման համար:

§ 5. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հռոմեա–հայկական պատերազմը: Ք. ա. 71 թ. Պոնտոսի արքա Միհրդատ VI–ը պարտվեց Հռոմի դեմ մղված պատերազմում և փախավ Հայաստան: Նրան հետապնդող հռոմեացի զորավար *Լուկուլլոսը* չհանդգնեց անցնել սահմանը, այլ պատվիրակներ ուղարկեց՝ պահանջելով հանձնել Հռոմի ոխերիմ թշնամուն: Տիգրան Մեծը, սակայն, մերժեց հռոմեացիներին և չհանձնեց իր դաշնակցին ու բարեկամին:

Ք. ա. 69 թ. գարնանը հռոմեական բանակը Լուկուլլոսի գլխավորությամբ մտավ Հայաստանի տարածք: Նույն տարվա հոկտեմբերին հռոմեացիները հաջողության հասան Տիգրանակերտի մոտ մղված ճակատամարտում: Սակայն *Ք. ա. 68 թ.* հայերը բանակը *Արածանիի ճակատամարտում* ջախջախեցին հռոմեական և դուրս քշեցին Հայաստանից: Ավելին՝ հայոց զորքերի օգնությամբ Միհրդատ Եվպատորն ազատագրեց Պոնտոսը՝ այնտեղից ևս դուրս մղելով հռոմեացիներին:

Ք. ա. 67 թ. պաշտոնազրկված Լուկուլլոսի փոխարեն արևելք եկավ հռոմեացի զորավար *Պոմպեոսը:* Նա կարողացավ դաշինք կնքել Տիգրան Մեծի դեմ ըմբոստացած Պարթևստանի հետ: Դաշինքի համաձայն՝ Հռոմը պետք է պատերազմ սկսեր Պոնտոսի դեմ, իսկ Պարթևստանը՝ Հայաստանի: Ք. ա. 66 թ. գարնանը հռոմեացիները, պատերազմում հաղթելով, գրավեցին Պոնտոսը: Հայաստանում պարթևները պարտվեցին և

Պոմպեոսի կիսանդրին

փախուստի դիմեցին: Ճիշտ է, Տիգրան Մեծը կրկին հաղթեց պարթևներին, սակայն նրա դաշնակից Պոնտոսը վերացավ:

Արտաշատի պայմանագիրը: Հայաստանը մնաց մենակ՝ ընդդեմ Հռոմի և Պարթևստանի: Սկսվեցին բանակցություններ Հռոմի և Հայաստանի միջև: Ք. ա. 66 թ. Արտաշատում Հայաստանի և Հռոմի միջև Տիգրան Մեծի ու Պոմպեոսի կողմից ստորագրվեց հաշտության պայմանագիր: Պայմանագրով Հայաստանը հօգուտ Հռոմի հրաժարվեց Եփրատից արևմուտք ընկած իր նվաճումներից, իսկ Պարթևստանին վերադարձրեց նրանից գրաված տարածքները: Մեծ Հայքը ճանաչվեց *«Հռոմի դաշնակից և բարեկամ»,* ինչը ենթադրում էր ռազմական փոխօգնություն:

Մեծ տիրակալի դասերը: Ինչո՞ւ Տիգրան Մեծը գնաց նման զիջումների: Չէ՞ որ նա հաղթել էր հռոմեացիներին Ք. ա. 69–68 թթ. լուկուլլոսյան պատերազմում, Պոմպեո-

Հռոմեա–հայկական պատերազմից հերոսական դրվագ

Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջ. Ֆուզարոյ:

Ք.ա. 69 թ. հռոմեացի զորավար Լուկուլլոսը պաշարեց մայրաքաղաք Տիգրանակերտը: Միջերկրականի ափերից շտապ վերադառնալով Հայաստան՝ Տիգրան Մեծն իր վեցհազարանոց թիկնապահ գունդն ուղղեց դեպի պաշարված Տիգրանակերտ: Մայրաքաղաքը պաշարված էր ավելի քան 40 հազարանոց թշնամի բանակով: Հայոց արքայական թիկնազորը զարմանքի ու հիացմունքի արժանի սխրանք կատարեց, բացառիկ հերոսական մի գործողություն՝ երկու անգամ ճեղքելով ու անցնելով մի քանի անգամ գերազանցող հռոմեական բանակի միջով: Թիկնազորը մտավ մայրաքաղաք և այնտեղից անվնաս դուրս բերեց թագուհուն, արքայական կանանոցն ու գանձարանը... Թագուհին արքայի պատիվն էր, և Տիգրան Մեծն առաջին հերթին փրկեց թագուհուն՝ անբասիր պահելով իր և տերության պատիվը...

սի հետ բախում չէր ունեցել, իսկ պարթևներին հերթական ջարդը տվել էր Ք. ա. 66 թվականին:

Առաջին հայացքից անհասկանալի թվացող այս քայլը բացատրվում է Տիգրան Մեծի հայրենապաշտությամբ: Նա իսկապես հաղթանակող էր, սակայն կործանվել էր նրա դաշնակից Պոնտոսը: Հայաստանը պատերազմը շարունակելու դեպքում կարող էր մնալ միայնակ ընդդեմ Հռոմի և Պարթևստանի, այլ կերպ ասած՝ ընդդեմ ամբողջ աշխարհի: Եթե Տիգրան Մեծը շարունակեր պատերազմը հանուն տիրակալի իր փառքի, կարող էր վտանգել իր հայրենիքի ապագան: Վճռական պահին մեծ տիրակալն ընտրություն կատարեց հանուն հայրենիքի…

Տիգրան Մեծը մահացավ Ք. ա. 55 թվականին՝ 85 տարեկան հասակում: Նա սերունդների հիշողության մեջ մնաց որպես հզորագույն և հայրենապաշտ տիրակալ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ սկսվեց հռոմեա–հայկական պատերազմը: Ի՞նչ դեպքեր էին նախորդել դրան:
2. Ե՞րբ են տեղի ունեցել Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը: Համեմատե՛ք դրանք:
3. Ինչպե՞ս ավարտվեց Լուկուլլոսի արշավանքը Հայաստան:
4. Ինչո՞ւ Արտաշատի պայմանագրով Տիգրան Մեծը կատարեց մեծ զիջումներ:
5. Ե՞րբ մահացավ Տիգրան Մեծը: Բնորոշե՛ք նրան իբրև տիրակալի:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով կարո՞ղ էր Տիգրան Մեծը շարունակել պատերազմը: Հիմնավորե՛ք:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուկուլլոս, Տիգրանակերտի ճակատամարտ, Պոմպեոս, Արտաշատի պայմանագիր, «Հռոմի դաշնակից և բարեկամ»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Լուկուլլոսի կիսանդրին

ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԻՉ ԴԻՈՆ ԿԱՍԻՈՍԸ (II – III ԴԱՐԵՐ) ԱՐԱԾԱՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Այս ընդհարման ժամանակ հռոմեացի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց... Թշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, վերադառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ–շատերին էլ վիրավորեցին: Ու վերքերը ծանր էին և դժվարբուժելի, քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ:

Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդտեղից...

§ 6. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՎԱԶԴ II–Ի ՕՐՈՔ

Արտավազդ II–ի դրամներից դիմերեսը և դարձերեսը

Տիգրան Մեծին հաջորդեց որդին՝ Արտավազդ II–ը (Ք. ա. 55–34 թթ.): Նա ստացել էր հիանալի կրթություն, գրում էր *«ողբերգություններ, ճառեր ու պատմական երկեր»:*

Կրասոսի արշավանքը: Ք. ա. 54 թ. Հռոմն արևելք ուղարկեց *Կրասոս* զորավարին, որի նպատակը Պարթևստանի գրավումն էր: Քանի որ Հայաստանը Արտաշատի պայմանագրով համարվում էր Հռոմի «դաշնակից և բարեկամ», Կրասոսը Արտավազդ II–ից պահանջեց օգնական զորքեր: Սակայն նա չկատարեց Արտավազդ II–ի պայմանները, ուստի Մեծ Հայքի արքան նրան օգնություն չտրամադրեց:

Ք. ա. 53 թ. Կրասոսը սկսեց արշավանքը: Նույն թվականին Խառանի ճակատամարտում Հռոմեական զորքը ջախջախիչ պարտություն կրեց: Սպանվեց նաև Կրասոսը:

Մինչ այդ Պարթևստանի արքա Օրոդես II–ը Կրասոսի դեմ ուղարկել էր իր Սուրեն զորավարին, իսկ ինքը շարժվել էր դեպի Հայաստան: Հայ և պարթև արքաները հանդիպելով որոշում են կնքել բարեկամության դաշինք, որն ամրապնդվում է պարթև արքայազն Բակուրի և Արտավազդ II–ի քրոջ ամուսնությամբ: Արտաշատ մայրաքաղաքում տեղի էին ունենում տոնական հանդեսներ: Դաշնակից արքաները ներկայացում էին դիտում, երբ բերվեց սպանված Կրասոսի գլուխը և նետվեց նրանց առջև՝ ի նշան հաղթանակի:

Պարթև Օրոդես II արքայի դրամներից

Անտոնիոսի արշավանքը: Ք. ա. 38 թ. Պարթևստանում գահը զավթեց Օրոդես II–ի որդի Հրահատը: Նա սպանեց իր հորը, եղբայրներին ու նրանց որդիներին: Հայ–պարթևական դաշինքը խզվեց:

Շուտով արևելք արշավեց մեկ այլ հռոմեական զորավար՝ Մարկոս Անտոնիոսը, որը նույնպես ծրագրում էր նվաճել Պարթևստանը: Նա, ելնելով Կրասոսի սխալներից, նախատեսում էր արշավել Հայաստանի տարածքով, ինչպես ժամանակին խորհուրդ էր տվել Արտավազդ II–ը: Հայոց արքան որոշեց կրկին ստանձնել Արտաշատի պայմանագրով ունեցած պարտավորությունները: Նա Անտոնիոսին խոստացավ տրամադրել օգնական զորք և թույլատրել պարթևների դեմ արշավել Հայաստանով:

Ք. ա. 36 թ. Անտոնիոսը, որն ապաշնորհ զորավար էր, սկսեց ռազմարշավը, սակայն խայտառակ պարտություն կրեց: 100 հազարանոց բանակից նա կորցրեց 35 հազար զինվոր: Նա հետ քաշվեց Հայաստան, ապա գնաց Եգիպտոս, քանի որ ամուսնացել էր այնտեղ իշխող Կլեոպատրա թագուհու հետ:

Անտոնիոսը Հռոմում արդարանալու համար պարտության մեղքը բարդեց Արտավազդ II–ի վրա: Ք. ա. 34 թ. Անտոնիոսի զորքերն անակնկալ ներխուժեցին Հայաստան: Արյունահեղությունից խուսափելու նպատակով Հայոց արքան գնաց բանակցությունների, սակայն խաբեությամբ ձերբակալվեց և տարվեց Եգիպտոս: Հայոց բանակը թագավոր հռչակեց նրա որդի *Ար-*

Արմավիրի հունարեն արձանագրություններից: Դրանցից մի քանիսը չափաձո ողբերգությունների հայրվածներ են, որոնց հեղինակը, ուսումնասիրողների կարծիքով, եղել է Արտավազդ II արքան

Մարկոս Անտոնիոսի դրամներից

Եգիպտոսի թագուհի Կլեոպատրա VII

պաշտես II–ին, սակայն նա պարտվեց և իր զորքով ապաստան գտավ Պարթևստանում: Վերջինիս արքան, հասկանալով իր սխալը, որոշել էր բարեկամանալ Հայաստանի հետ:

Անտոնիոսը Եգիպտոսում պահանջեց, որ գերված Արտավազդ II–ն ու նրա ընտանիքը խոնարհվեն և երկրպագեն Կլեոպատրային՝ դրա դիմաց խոստանալով ազատություն: Սակայն վեհանձն արքան և նրա ընտանիքն արհամարեցին Անտոնիոսին՝ արժանանալով անգամ թշնամիների հիացմունքին: Ք. ա. 31 թ. Անտոնիոսը և Կլեոպատրան մահապատժի ենթարկեցին Արտավազդ II–ին և նրա կնոջը: Իսկ երկու արքայորդիները մնացին պատանդության մեջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է գահակալել Արտավազդ II–ը: Բնութագրե՛ք նրան:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Կրասոսի արշավանքը և ինչպե՞ս է ավարտվել: Ինչպե՞ս ամրապնդվեց հայ–պարթևական դաշինքը Ք. ա. 53 թվականին:
3. Ե՞րբ է տեղի ունեցել Անտոնիոսի արշավանքը:
4. Ե՞րբ և ինչպե՞ս գերվեց Արտավազդ II արքան:
5. Ի՞նչ վեհանձն արարքով աչքի ընկավ Արտավազդ II–ի ընտանիքը գերության մեջ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրոդես II, Կրասոս, Սուրեն զորավար, Մարկոս Անտոնիոս, Կլեոպատրա, Արտաշես II

ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ՀԱՅ ԵՎ ՊԱՐԹԵՎ ԱՐՔԱՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՈՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԲԵՐՎԵՑ ԿՐԱՍՈՍԻ ԳԼՈՒԽԸ

Նրանք միմյանց համար խնջույքներ ու գինարբուքներ էին կազմակերպում, որոնց ընթացքում հաճախ բեմադրվում էին հունական ներկայացումներ, քանզի Օրոդեսին անծանոթ չէին հունական լեզուն և գրականությունը, իսկ Արտավազդը հորինում էր նույնիսկ ողբերգություններ և գրում ճառեր ու պատմական երկասիրություններ, որոնցից մի քանիսը մինչ այժմ պահպանվել են:

Այն պահին, երբ արքունիք բերեցին Կրասոսի գլուխը, ... ողբերգակ դերասան Յասոն Տրալացին արտասանում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիներից» հատվածներ: Այն ժամանակ, երբ նրան ծափահարում էին, դահիճ մտավ Սիլակեսը և երեսնիվայր ընկավ արքայի առաջ, և ապա նա սրահի մեջտեղ նետեց Կրասոսի գլուխը:

ԴԻՈՆ ԿԱՍԻՈՍԸ՝ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐՏԱՎԱԶԴ II–Ի ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՀԱՆՁՆ ՊԱՀՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ո՛չ աղերսեցին նրան (Կլեոպատրային), ո՛չ իսկ երկրպագեցին, թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հուսադրում՝ ազատություն խոստանալով, ու որովհետև նրան պարզապես իր անունով կոչեցին, նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԹԱԳԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Անտիկ աշխարհում Հայաստանի խորհրդանիշերից մեկը դարձել է Տիգրանյան (կամ Հայկական) թագը: Իրենց հայկականությունը շեշտելու համար Կոմմագենեի Երվանդական արքաներն իրենց դրամների վրա դրվագում էին Տիգրանյան թագը:

Անտոնիոսի՝ Հայաստանը գավթելուց հետո թողարկված դրամներից: Դրամի դարձերեսին, որպես Հայաստանի խորհրդանիշ, Տիգրանյան թագն է:

§ 7. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԸ

Տիգրան III–ի դրամներից. դիմերեսը և դարձերեսը

Արտաշես II–ի գահակալումը: Ք. ա. 30 թ. իր զորքով վերադառնալով Պարթևստանից՝ Արտաշես II–ն ազատագրեց Հայաստանը: Նա ջախջախեց Հռոմի դաշնակից Ատրպատականի արքային և Ատրպատականը միացրեց իր պետությանը:

Արտաշես II–ը ջանքեր գործադրեց Եգիպտոսից բերելու իր եղբայրներին, սակայն հռոմեացիները նրանց տեղափոխեցին Հռոմ՝ պահելով պատանդության կարգավիճակում:

Արտաշես II–ն իշխեց մինչև Ք. ա. 20 թվականը: Օգտվելով տասնամյա խաղաղության ժամանակամիջոցից՝ նա շենացրեց ու կրկին հզորացրեց երկիրը: Նա հատեց դրամներ՝ իր պատկերով ու «արքայից արքա» մակագրությամբ:

Իր ներքին հարցերը կարգավորելուց հետո Հռոմը կրկին ուշադրությունը սևեռեց դեպի Արևելք: Ք. ա. 20 թ. հռոմեական զորքերով Հայաստան ուղարկվեց Արտավազդ II–ի պատանդ տարված որդիներից Տիգրանը: Նա 14 տարի ապրել էր հռոմեացիների մեջ, ուստի Հռոմում կարծում էին, որ Հայաստանի գահին նա կլինի հռոմեասեր գործիչ: Երբ հռոմեական զորքը հատում էր Հայաստանի սահմանը, Արտաշես II–ն անհայտ հանգամանքներում սպանվեց: Իշխանափոխությունը տեղի ունեցավ առանց պատերազմի. գահ բարձրացավ *Տիգրան III–ը:*

Հայաստանը վերջին Արտաշեսյաններ-

ի օրոք: Տիգրան III–ը Մեծ Հայքում իշխեց Ք. ա. 20–8 թվականներին: Հռոմեացիները նրան գահ էին բարձրացրել՝ պայմանով, որ Հայաստանի հաջորդ արքային նույնպես պետք է նշանակեն իրենք: Սակայն Հռոմեական կայսրության հաշվարկները սխալ դուրս եկան: Հայաստանում որոշ ժամանակ իշխելուց հետո Տիգրան III–ը սկսեց գերադասել հայկական շահերը: Շատ լավ գիտակցելով, թե որքան կարևոր է Հայաստանի համար սեփական ժառանգական իշխանությունը, նա գահաժառանգ հռչակեց իր Տիգրան անունով որդուն:

Ք. ա. 8 թ. Տիգրան III–ի մահվանից հետո, գահ բարձրացավ *Տիգրան IV–ը,* որն իշխում էր քրոջ՝ *Էրատոյի* հետ համատեղ:

Հռոմեացիները չէին հաշտվում Հայաստանում իրենց ազդեցության կորստի հետ և Ք. ա. 5 թ. ուժով գահ բարձրացրին *Արտավազդ III–ին:* Նա Արտավազդ II–ի՝ պատանդության մեջ գտնվող մյուս որդին էր: Նա 29 տարի ապրել էր հռոմեական միջավայրում և դարձել էր խիստ հռոմեասեր գործիչ: Այդ պատճառով հայերը Ք. ա. 2 թ. գահընկեց արին Արտավազդ III–ին և կրկին գահ բարձրացրին Տիգրան IV–ին և նրա քույր Էրատոյին:

Հռոմը ստիպված էր հաշվի նստել հայերի հետ: Ք. հ. 1 թվականին հյուսիսային լեռնականների դեմ մղված պատերազմում հայոց արքան զոհվեց, իսկ թագուհի Էրատոն հրաժարվեց գահից: Այդպես անկում ապրեց Արտաշեսյան արքայատոհմի իշխանությունը: Սակայն Մեծ Հայքի թա-

Տիգրան IV–ի և Էրատոյի համատեղ դրամներից (դիմերես և դարձերես)

գավորությունը պահպանվում էր: Էրատո թագուհին 6–11 թթ. կրկին գահակալեց, սակայն միանձնյա, ինչը չփրկեց վիճակը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է թագավորել Արտավազդ II–ից հետո: Ներկայացրեք նրա գահակալումը:
2. Հռոմեացիներն ո՞ւմ գահ բարձրացրին Արտաշես II–ից հետո:
3. Ի՞նչ գիտեք Տիգրան III–ի մասին:
4. Ներկայացրեք Մեծ Հայքի գահին իշխած Արտաշեսյան վերջին արքաներին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծանոթացեք հաջորդ էջում բերված Արտաշեսյան արքայատոհմի ժամանակագրական աղյուսակին և համեմատեք Երվանդականների հետ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիգրան III, Տիգրան IV, Էրատո, Արտավազդ III, Արտաշեսյան արքայատոհմի անկում

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊՏՂՈՄԵՈՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր թվարկության հենց սկզբին անկում ապրեց Արտաշեսյան հարստությունը, սակայն Մեծ Հայքի թագավորությունը նույն սահմաններով շարունակեց գոյություն ունենալ մինչև IV դ. վերջերը: Այդ իրավիճակն արձանագրված է անտիկ աշխարհի նշանավոր աշխարհագրագետ Պտղոմեոսի (I–II դդ.) քարտեզներում, որոնցում հատուկ նշվում են Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

Արտաշես I, որդի Զարեհի
(Ք.ա. 189 — մոտ 160 թթ.)

Արտավազդ I, որդի Արտաշես I–ի
(Ք. ա. մոտ 160–115 թթ.)

Տիգրան I,
որդի Արտաշես I–ի
(Ք. ա. 115–95 թթ.)

Տիգրան II,
որդի Տիգրան I–ի
(Ք. ա. 95–55 թթ.)

Արտավազդ II,
որդի Տիգրան II–ի
(Ք. ա. 55–34 թթ.)

Արտաշես II, որդի
Արտավազդ II–ի
(Ք. ա. 30–20 թթ.)

Տիգրան III,
որդի Արտավազդ II–ի
(Ք. ա. 20–8 թթ.)

Տիգրան IV և Էրատո
(Ք. ա. 8–5 թթ, առաջին անգամ)

Արտավազդ III,
որդի Արտավազդ II–ի
(Ք. ա. 5–2 թթ.)

Տիգրան IV և Էրատո
(Ք. ա. 2 – Ք. հ. 1 թթ,
երկրորդ անգամ)

Էրատոն՝ միանձնյա
(6–11 թթ.)

ԳԼՈՒԽ 5 ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I–III ԴԱՐԵՐՈՒՄ

§1. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ» ՇՐՋԱՆՈՒՄ

Զենոն–Արտաշեսի դրամներից. դիմերեսը և դարձերեսը

Հայ ժողովրդի պայքարը անկախության պահպանման համար: I դարի առաջին կեսին Հայաստանում գահակալական լուրջ պայքար էր ծավալվել:

Վերջին Արտաշեսյանների օրոք Հռոմեական կայսրությունը ուժեղացրել էր ճնշումը Հայաստանի վրա: 2 թ. Օգոստոս կայսեր թոռան՝ Գայոս Կեսարի գլխավորած բանակը, ներխուժելով Հայաստան, շարժվեց դեպի երկրի կենտրոնը: Հասնելով Արշարունյաց գավառը՝ հռոմեացիները պաշարում են *Արտագերս* բերդը: Հայ պաշտպանները հերոսաբար դիմադրում էին հռոմեական լեգիոններին:

Հռոմեական հրամանատարին վերացնելու նպատակով հայոց հրամանատար *Ադոնը* դիմեց ռազմական խորամանկության: Բանակցությունների պատրվակով նա ժամանում է հռոմեական ճամբար և Գայոս Կեսարի հետ հանդիպման ընթացքում դաշույնով ծանր վիրավորում նրան: Գայոսի թիկնապահների հետ մենամարտում Ադոնը հերոսաբար զոհվում է, իսկ Արտագերսի պաշտպանները շարունակում են դիմադրությունը:

Արտաշեսյանների արքայատոհմից հետո Արտաշատում գահակալած թագավորներից առավել նշանավորը *Զենոնն էր* (18–34 թթ.):

Նրա թագավորության տարիները խաղաղ էին, և հայ ժողովուրդը նրան սիրով կոչեց Զենոն–Արտաշես (III): Զենոն–Արտաշեսի մահից հետո Արտաշատում գահակալեցին Իրանի և Հռոմի դրածո թագավորները:

Հռոմը ծրագրել էր նվաճել Հայաստանը և այն վերածել կայսերական նահանգի: Իսկ Իրանը, մրցակցելով Հռոմի հետ, ցանկանում էր ձեռք բերել հուսալի դաշնակից՝ ի դեմս Հայաստանի: Ուստի հայ ժողովուրդը դաշնակցեց պարթևների հետ՝ ընդդեմ հռոմեական նվաճողական քաղաքականության:

Հայոց արքա Աբգար: I դարի առաջին կեսին Մեծ Հայքի թագավորական իշխանությունը ներկայացված էր երկու կենտրոններով: Մեկը *Արտաշատում* էր, իսկ մյուսը՝ Հյուսիսային (Հայկական) Միջագետքում գտնվող *Ուռհա–Եդեսիայում:*

Այդ ժամանակաշրջանում Ուռհա–Եդեսիայում գահակալում էր Հայկազուն–Երվանդյաններից սերող Հայոց Աբգարյանների արքայատոհմը: Դրա ամենանշանավոր ներկայացուցիչն էր *Աբգար V* թագավորը (4–7 թթ., 13–50 թթ.): Նրա թագավորության տիրույթների մեջ էին մտնում նաև Հայաստանի հարավարևմտյան շրջանները: Հայոց արքա Աբգարը, իմանալով իր պարթև ազգականների միջև ծագած խռովության մասին, մեկնում է Պարթևական թագավորություն: Խռովությունը հարթելուց հետո նա ծանր հիվանդանում է և վերադառնում Եդեսիա: Լսելով Քրիստոսի մասին՝ Աբգարը նամակով խնդրում է *Քրիստոսին* գալ

Աբգար արքան՝ Քրիստոսի պատկերով. որմնանկար Վարագա վանքից

Հատված Ուռհա–Եդեսիայի բերդից

Թադեոս առաքյալ
Հեղինակ՝ Հակոբ Հովնաթանյան

Բարդուղիմեոս առաքյալ
Հեղինակ՝ Հակոբ Հովնաթանյան

Եդեսիա և բուժել իրեն: Եդեսիա է գալիս Քրիստոսի աշակրետներից *Թադեոս* առաքյալը: Նա քարոզում է Ավետարանը և բուժում Աբգարին: Աբգարից հետո նրա թագավորությունը երկու մասի է բաժանվում: Մեծ Հայքի հարավում գահակալում է նրա քրոջ որդին՝ Սանատրուկ I–ը, իսկ Եդեսիայում՝ Աբգարի որդին: Քրիստոսի տասներկու աշակերտներից *Թադեոս և Բարդուղիմեոս* առաքյալները Հայաստանում հանդիպում են Արտաշատի մոտ գտնվող *Օթեաց խաչ* վայրում: Նրանց քարոզչությամբ հիմնվում է Հայ առաքելական եկեղեցին:

Պայքար Հռոմի դրածոների դեմ: Արտաշատում գահը զավթած վրաց թագավորի եղբայր Միհրդատին հայերը վտարեցին երկրից: Սակայն Միհրդատը հռոմեական ուժերի օգնությամբ կրկին բռնազավթում է Մեծ Հայքի գահը: Նա շատ դաժան էր և առաջացրել էր հայ ժողովրդի ատելությունը: Միհրդատի եղբորորդին՝ Հռադամիզդը, դավադրաբար սպանելով նրան, 51 թ. Արտաշատում զավթում է գահը: Դա առաջացրեց հայ ժողովրդի ցասումը:

Պարթևստանի թագավոր *Վաղարշ I Արշակունին (51–80 թթ.)* Հռոմեական կայսրության և Վիրքի թագավորության դեմ որոշեց ստեղծել դաշինք: Նա մտադիր էր իր եղբայրներից մեկին՝ Տրդատին, դարձնել Հայաստանի թագավոր, իսկ մյուսին՝ Բակուրին՝ Ատրպատականի թագավոր: *52 թ.* Վաղարշը և Տրդատը պարթևական զորքով մտնում են Հայաստան: Հռադամիզդը, այդ մասին տեղեկանալով, փախչում է

Վիրք: Սակայն ցրտաշունչ ձմռան և հիվանդությունների պատճառով պարթևական զորքը հեռանում է երկրից: Հռադամիզդը ներխուժում է Հայաստան և փորձում կրկին գավթել գահը, սակայն զինված հայերը շրջապատում են Արտաշատի պալատը, և նա իր կնոջ հետ վերջնականապես փախուստի է դիմում:

Պարթև Վաղարշ I արքայի դրամներից

Հարցեր և առաջադրանքներ.

1. Ինչպիսի՞ իրավիճակ էր Հայաստանում I դարի առաջին կեսին:
2. Արտաշեսյան արքայատոհմից հետո ո՞վ էր Արտաշատում գահակալած թագավորներից առավել նշանավորը:
3. Ինչո՞ւ էին հայերը դաշնակցում պարթևների, այլ ոչ հռոմեացիների հետ:
4. Որտե՞ղ էր թագավորում Արգարյանների արքայատոհմը:
5. Ինչո՞ւ էր Արգարը Քրիստոսին Եդեսիա հրավիրում, ի՞նչ պատահեց հետո:
6. Ի՞նչ նպատակ ուներ Վաղարշ I Արշակունին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք I դարի առաջին կեսին Հայաստանում գահակալած թագավորների ժամանակագրական աղյուսակ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտագերս բերդ, Զենոն–Արտաշես (III), Արգարյանների արքայատոհմ, Օթեաց խաչ, Սանատրուկ I, Հայ առաքելական եկեղեցի

ՓՐԿՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԳՐԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱԲԳԱՐԻ ԹՂԹԻՆ (ըստ Մովսես Խորենացու)

«Երանի նրան, ով ինձ հավատում է՝ ինձ տեսած չլինելով: Քանզի Իմ մասին գրված է. «Ովքեր Ինձ տեսնեն, չեն հավատա Ինձ, իսկ ովքեր չտեսնեն, նրանք կհավատան Ինձ և կապրեն»: Իսկ այն մասին, որ դու Ինձ գրեցիր, որ Ես գամ քո մոտ, ապա արժան է, որ Ես կատարեմ այստեղ այն ամենը, ինչի համար ուղարկված եմ: Եվ երբ այդ կատարեմ, ապա կհամբարձվեմ Նրա մոտ, որն Ինձ ուղարկել է: Եվ երբ համբարձվեմ, կուղարկեմ այստեղի իմ աշակերտներից մեկին, որպեսզի նա բժշկի քո ցավերը, և քեզ ու նրանց, որ քեզ հետ են, կյանք շնորհի»:

Այս թուղթը բերեց Անանը՝ Աբգարի սուրհանդակը, Փրկչի կենդանագիր պատկերի հետ միասին, որը մինչև այսօր պահվում է Եդեսիա քաղաքում:

ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԻՉ ՏԱԿԻՏՈՍԸ ԶԵՆՈՆ–ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Զենոնը ամենավաղ մանկությունից յուրացրել էր հայերի սովորություններն ու նիստուկացը, ընտելացել էր նրանց որսերին այլ բարքերին... և գրավել էր իր կողմն առաջնորդներին, ինչպես և հասարակ ժողովրդին: Արդ՝ Գերմանիկոսը ազնվականության հավանությամբ և շրջապատող ժողովրդի բազմության ներկայությամբ նրա գլխին դրեց Արտաշատ քաղաքում թագավորական պատվանշանը: Ժողովուրդը, հարգանք հատուցանելով թագավորին, նրան ողջունում էր՝ անվանելով Արտաշես, և այդ անունը նրան տվել էին ըստ քաղաքի անվան»:

§ 2. ՏՐԴԱՏ Ի–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ

Հռոմեական կայսրության պատերազմը հայ–պարթևական դաշինքի դեմ: Հայ–պարթևական դաշնակից ուժերով Տրդատ Արշակունին 54 թ. կրկին փորձում է գահակալել Արտաշատում: Սակայն անհրաժեշտ էր հաղթահարել Հռոմի դիմադրությունը: Ներոն կայսեր (54–68 թթ.) հրամանով Արևելք եկած զորավար Կորբուլոնի լեգիոնները Մեծ Հայք են ներխուժում և ճամբար խփում Բարձր Հայքի Կարնո դաշտում: Այսպես է սկսվում տասը տարի տևած պատերազմը հռոմեական և հայ–պարթևական ուժերի միջև:

Այդ ժամանակ Վաղարշը զբաղված էր Իրանի արևելքում, ուստի Տրդատը հռոմեական բանակին դիմակայում էր հայկական ուժերի օգնությամբ: Սակայն ուժերն անհավասար էին, և *Կորբուլոնի* զորքը, ավեր սփռելով, շարժվում է դեպի Արտաշատ: Տրդատը փոքրաթիվ ջոկատով ստիպված էր հեռանալ Ատրպատական:

58 թ. Կորբուլոնը գրավում է Արտաշատը, ավերում և շարժվում դեպի Տիգրանակերտ: Ճանապարհին հռոմեական լեգիոնները հանդիպում են հայկական ուժերի համառ դիմադրությանը: Սակայն նրանց ի վերջո հաջողվում է գրավել Տիգրանակերտը:

Վաղարշ Ի–ը, մեծաքանակ զորքով մտնելով Հայաստան, պաշարում է Տիգրանակերտը: Կորբուլոնը ստիպված էր զինադադար խնդրել: Վաղարշը համաձայն-

Տրդատ Ի–ի արձանը Փարիզում՝ Վերսալում

ում է հանել Տիգրանակերտի պաշարումը մի պայմանով՝ Տրդատին Հայոց թագավոր ճանաչելու առաջարկով դեսպանություն ուղարկել Հռոմ: Սակայն Ներոն կայսրը չի համաձայնում Վաղարշի առաջարկին և 61 թ. Հայաստան է ուղարկում հռոմեական նոր զորք՝ *Պետրոս* զորավարի հրամանատարությամբ:

Պետոսը սպառնում էր Հայաստանում հաստատել հռոմեական կարգեր, ժողովրդի վրա հարկեր դնել և ենթարկել հռոմեական օրենքներին: Այսպիսի սպառնալիքներ լսելով՝ հայերն ավելի են ուժեղացնում իրենց աջակցությունը Տրդատին:

62 թ. գարնանը Արածանիի ափին՝ *Հռանդեա* վայրում, տեղի ունեցած ճակատամարտում Պետոսի լեգիոնները պարտություն են կրում Վաղարշի ու Տրդատի գլխավորած հայ–պարթևական ուժերից: Հռոմեական զինվորները, ի նշան պարտության, ծնկաչոք անցնում են հայ–պարթևական զորքի նիզակների՝ «լծի» տակով: Դա մեծագույն խայտառակություն էր հռոմեական անպարտելի համարվող բանակի համար:

Ներոն կայսրը ճիգեր էր գործադրում փրկել Հռոմի հեղինակությունը: Նա որոշում է շարունակել պատերազմը: Երբ Վաղարշի պատգամավորությունը ժամանում է Հռոմ, կայսրը հայտնում է, որ կճանաչի Տրդատի գահակալությունը, եթե նա անձամբ գա Հռոմ և թագը ստանա իրենից:

Տրդատ I–ի գահակալությունը: 64 թ. Կորբուլոնը վերստին արշավում է Հայաստան:



Կորբուլոնի լատիներեն արձանագրությունը՝ թողած Խարբերդի շրջանում

Սակայն պատերազմը վերսկսելու փոխարեն պարթևական թագավորին խորհուրդ է տալիս ընդունել Ներոնի առաջարկը: Վաղարշ I–ը և Տրդատը համաձայնում են՝ պայմանով, որ խաղաղության պայմանագիրը կնքվի Հռանդեայում: Հռոմեական լեգիոնների և պարթևա–հայկական հեծելազորի մասնակցությամբ Հռանդեայում հանդիսություններ եղան: Տրդատը բոլորի ներկայությամբ հանդիսավոր խոստանում է թագը ստանալ Հռոմում Ներոնից:

65 թ. Տրդատը մեծ շքախմբով մեկնում է Հռոմ: Ուղևորության ծախսերը հոգում էր կայսերական գանձարանը: Իրենց անցած ճանապարհին հանդիպող քաղաքների բնակչությունը Տրդատին ընդունում էր մեծ հանդիսավորությամբ ու պատվով: Հասնելով Իտալիայի Նեապոլիս (Նեապոլ) քաղաքը և ներկայանալով Ներոնին՝ Տրդատը հրաժարվում է իր վրայից հանել սուրը: Դա կայսերական պալատում ընդունված արարողակարգի խախտում էր, սակայն Տրդատը իրեն պահեց որպես հաղթանակած կողմ:

Նեապոլից Տրդատն ու Ներոնը մեկնում են Հռոմ, որտեղ մեծ հանդիսավորությամբ Տրդատը թագադրվում է: Ներոնը Տրդատին ճանաչում է Հայաստանի թագավոր: Նրան նաև մեծ գումար ու արհեստավորներ է տրամադրում՝ Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատը վերականգնելու համար: Տրդատ I–ը 66 թ. ժամանում է Հայաստան: Նրա գահակալության տարիներին (66–88 թթ.) Հայաստանի ներքին և ար-

Արեգակին նվիրված տաճարը Գառնիում՝ կառուցված Տրդատ I–ի օրոք

Տրդատ I–ի՝ Ապարանում հայտնաբերված հունարեն արձանագրությունը

Գառնու ամրոցի կառուցման մասին Տրդատ I–ի արձանագրությունը

տաքին վիճակը կայուն էր: Արտաշատ մայրաքաղաքի վերականգնման հետ մեկտեղ Տրդատ I–ը կառուցապատում է Գառնու հինավուրց ամրոցն՝ իր շինություններով և Արեգակին նվիրված տաճարով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է սկսվել և քանի՞ տարի է տևել հայ–պարթևական պատերազմը՝ ընդդեմ Հռոմեական կայսրության:
2. Ի՞նչ պահանջեց Վաղարշ Արշակունին Կորբուլոնից Տիգրանակերտի պաշարումը հանելու դիմաց:
3. Ինչո՞ւ էին հայերը աջակցում Տրդատ Արշակունուն:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հռանդեայի ճակատամարտը:
5. Ներկայացրե՛ք Տրդատի և Ներոնի միջև կնքված համաձայնագիրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով ինչո՞ւ Տրդատն ու Վաղարշը պնդեցին, որ պայմանագիրը կնքվի հենց Հռանդեայում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ–պարթևական պատերազմ՝ ընդդեմ Հռոմեական կայսրության, Ներոն, Կորբուլոն, Հռանդեայի ճակատամարտ, Տրդատ I

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԴԻՈՆ ԿԱՍԻՈՍԸ ՏՐԴԱՏ II–Ի ՄԱՍԻՆ

«[Մակրինոսը] դադարեցրեց թշնամությունը Հայաստանի նկատմամբ, և Տրդատն ընդունեց թագը, որը նրան ուղարկված էր Մակրինոսի կողմից, նաև իր մորը, որին Կարակալլան տասնմեկ ամիս բանտումն էր պահել, ստացավ նաև ավարը, որ տարված էր Հայաստանից, և կալվածքները, որ նրա հայրն ուներ Կապադովկիայում...»

§ 3. ՄԵԾ ՀԱՅՔԸ I ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ III ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ

Սանատրուկ II: Տրդատ I–ին հաջորդած Սանատրուկ II–ը (88–110 թթ.) փայլուն տիրապետում էր ռազմարվեստին: Նրա օրոք Արածանիի ափին՝ Մշո դաշտում, կառուցվեց Մծուրքը: Ըստ Հռոմի և Պարթևստանի պայմանավորվածության՝ Հայաստանում կարող էր որևէ թեկնածու գահակալել միայն երկու կողմերի համաձայնությամբ: Սակայն Սանատրուկին հաջորդած Աշխադարից հետո պարթևները առանց Հռոմի համաձայնության Հայաստանում թագավոր հռչակեցին պարթև արքայազն Պարթամասիրին: Դա տեղիք տվեց Հռոմի ռազմական միջամտությանը Հայաստանում: Սակայն Հռոմը ստիպված էր Հայաստանից դուրս բերել կայսերական զորքերը և ճանաչել Մեծ Հայքի թագավորությունը:

Վաղարշ I: Հայոց գահին հաստատվեց Վաղարշ I Արշակունին (117–140 թթ.): Նրա օրոք Արարատյան դաշտում գտնվող նախկին Վարդգեսավան գյուղաքաղաքը վերածվեց մեծ քաղաքի, որը նրա անունով կոչվեց **Վաղարշապատ**: Արքունիքը տեղափոխվեց նոր մայրաքաղաք:

Վաղարշ I–ից հետո Հռոմեական կայսրությունը Հայաստանի թագավոր նշանակեց Հռոմի ծերակույտի անդամ Սոհեմոսին, ով հայտնի էր նաև Տիգրան անունով:

Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Մեծ Հայքում գահակալած *Վաղարշ II–ի* ժամանակներից

(185–198 թթ.) Հայաստանում հայ Արշակունիների արքայատոհմի գահակալությունը դարձավ ժառանգական՝ թագը հորից անցնում էր որդուն: Վաղարշը II–ը շարունակում է Վաղարշապատի կառուցապատումը ամրություններով: Նա պաշտպանում է երկիրը Կովկասի լեռնական ցեղերի հարձակումներից, որոնց դեմ մղած պայքարում էլ զոհվում է:

Վաղարշ II–ի որդին՝ *Խոսրով I–ը (198–215 թթ.),* հոր մահվան վրեժը լուծելու նպատակով հայոց զորքով արշավելով նույն լեռնական ցեղերի դեմ, ջախջախում է նրանց: Կարակալլա կայսրը, որոշելով կայսրությանը ենթարկել Հայաստանը, խաբեությամբ Ասորիք է հրավիրում Խոսրով I–ին, ձերբակալում և ուղարկում Հռոմ: Հայաստանում գահակալած Խոսրովի

Գեղի ամրոցը՝ Կաքավաբերդը

Վաղարշապատի (Էջմիածին) Մայր տաճարի թանգարանում պահվող կարևորագույն երկու մասունքները՝ իրենց պահապուտիերով. Նոյյան տապանի բեկորը և գեղարդը, որով խոցել են Հիսուս Քրիստոսին

որդու՝ *Տրդատ II–ի (216–252 թթ.)* գլխավորությամբ հայերը ջախջախում և երկրից վտարում են հռոմեական զորքը: Այդ ընթացքում Հռոմում բանտարկության մեջ մահացել էր Խոսրով I–ը: Հայ–հռոմեական հարաբերությունները բարելավելու նպատակով Հռոմի նոր կայսրը թագ է ուղարկում Տրդատ II–ին:

Իրանում գահակալական կռիվներից թուլացած պարթև Արշակունիները չկարողացան դիմակայել *Սասանյաններին: 226 թ.* Սասանյան Արտաշիրը գրավեց Իրանի գահը: Պարթև Արշակունիներին պաշտպանող հայ Արշակունիները դարձան Սասանյանների հարստության հակառակորդը: Արտաշիր I Սասանյանի փորձը՝ տապալելու նաև Հայաստանում գահակալող Արշակունիներին, ավարտվեց պարտությամբ:

Միջագետքում 232 թ. սկսված հռոմեա–պարսկական ռազմական գործողությունների ընթացքում Հայաստանը զերծ մնաց պատերազմական արհավիրքներից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հայաստանում տիրող իրավիճակը Տրդատ I–ից հետո:
2. Ո՞ր քաղաքը կառուցվեց Վաղարշ I–ի օրոք:
3. Ո՞ր արքայից Արշակունիների արքայատոհմի գահակալությունը դարձավ ժառանգական: Ինչո՞ւ:
4. Ի՞նչ ընթացք ունեցավ հայ–հռոմեական հակամարտությունը Խոսրով I–ի օրոք:
5. Ինչո՞ւ սրվեցին հայ–պարսկական հարաբերությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լրացրեք Տրդատ I–ից հետո Հայաստանում գահակալած թագավորների ժամանակագրական աղյուսակը:

Գահակալ	Կառավարման թվերը	Ձեռնարկումները
1. Տրդատ I	66–88 թթ.	ա) Արտաշատի վերակառուցում
2.		բ) Գառնու ամրոցի վերակառուցում
3.		գ) Արեգակի տաճարի կառուցում

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սանատրուկ II, Մծուրք, Վաղարշ I, Վաղարշ II, Խոսրով I, Տրդատ II, Սասանյաններ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՄԾՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

«Այնուհետև Հայր մարդպետը գնաց սուրբ տեղերից և իջավ Եփրատ գետի հոսանաց ափը՝ խիտ անտառի հովիտները, երկու գետերի միախառնման տեղում՝ եղեգնուտ տեղերի և վայրի ծառերի խիտ մասում, ուր հին ժամանակներում կառուցված էր մի ինչ–որ քաղաք, որը շինել էր Սանատրուկ թագավորը. և այդ տեղի անունն էր Մծուրք»:

§ 4. «ԺԱՄԱՆԱԿ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ»

Տրդատ արքայազնի և Գրիգոր Պարթևի մանկությունը: III դ. կեսերին Սասանյան արքա Շապուհ I–ը հարձակվեց Մեծ Հայքի թագավորության վրա: Տրդատ II–ը ստիպված էր հեռանալ Հռոմեական կայսրություն: Հայոց գահին շուտով նստեց ***Խոսրով II–ը:*** Պարսից արքան, պարտություններ կրելով Հայոց Խոսրով թագավորից, Հայաստան ուղարկեց ***Անակ Պարթևին՝*** Խոսրովին սպանելու հանձնարարությամբ: Իբրև թե պարսից հետապնդումներից խուսափելով՝ Անակը ներկայացել էր հայոց

Դավաճան Անակի սպանությունը Տափերական կամրջի մոտ Հեղինակ՝ իտալացի նկարիչ Ջուլիանո Զասսո, 1885 թ.

Սասանյան դրամներ

արքա Խոսրովին, որը նրան իր ընտանիքով բնակեցրել էր Արտազ գավառում: Հայաստան գալուց և որդու՝ Գրիգորի ծնվելուց երեք տարի անց Անակը դավադրաբար սպանում է Խոսրովին: Իսկ Անակին իր մերձավորների հետ սպանում են հայ զորականները Երասխ գետի Տափերական կամրջի մոտ: Անակի որդուն՝ Գրիգորին, դայակները փախցնում են Կապադովկիայի Մաժաք–Կեսարիա քաղաքը: Իսկ Խոսրովի որդուն՝ Տրդատին, դայակները, փախցնելով պարսկական հետապնդումներից, տանում են հռոմեական կայսեր արքունիք:

Հայոց արքայների ավերումը պարսից դրածոների կողմից: Սասանյանների նվաճողական քաղաքականության հետևանքով 260–ական թթ. կեսերից հայոց գահը զավթեցին պարսից դրածո մի քանի թագաժառանգներ, որոնք հետագայում գահակալեցին Իրանում: Մովսես Խորենացին այդ ժամանակաշրջանը բնութագրել է որպես ***«ժամանակ անիշխանության»:*** Օտար գահակալներն իրենց զավթումները Հայաստանում դյուրացնելու նպատակով ձգտում էին հայերին պարտադրել ***զրադաշտականությունը*** (մազդեզականություն), որը Պարսկաստանում պետական կրոն էր:

Հայոց գահը զավթած պարսից արքայազն Որմիզդ–Արտաշիրի հրամանով պարսից մոգերը կործանում էին հին հայոց տաճարները: Արմավիրում կանգնեցված և այնտեղից Բագարան, այնուհետև Արտաշատ տեղափոխված արձանները, որ հնում

քանդակվել էին ի հիշատակ հայոց նախնիների, Արտաշիրը հրամայել էր փշրել: Նրա հրամանով նաև Արտաշես Ի–ի սահմանաքարերի գրություններն անվանափոխում էին՝ «Արտաշիրական»: Այսինքն՝ պարսից մոգերը հին հայոց սրբավայրերը և նախնիներին նվիրված հուշարձանները պղծում կամ ավերում էին:

Հարցեր և առաջադրանքներ.

1. Ո՞վ էր Անակ Պարթևը, ինչո՞ւ էր եկել Հայաստան:
2. Ո՞ր ժամանակներն է Մ. Խորենացին անվանել «ժամանակ անիշխանության»:
3. Ինչ կրոն էին ուզում պարտադրել հայերին պարսիկները:
4. Ինչ ավերիչ գործունեություն էր ծավալել Որմիզդ–Արտաշիրը Հայաստանում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Շարունակե՛ք լրացնել նախորդ դասին սկսած ժամանակագրական աղյուսակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անակ Պարթև, Մաժակ–Կեսարիա, «ժամանակ անիշխանության», Որմիզդ–Արտաշիր

§ 5. ՏՐԴԱՏ III–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Տրդատ III Մեծ (հեղինակ՝ Մկրտում Հովնաթանյան)

Տրդատ արքայազնի և Գրիգոր Պարթևի վերադարձը: Տրդատը Հռոմեական կայսրությունում գտնվելիս ըմբշամարտի ասպարեզում հաղթել էր Օլիմպիական խաղերում, մեծ սխրագործություններ կատարել մարտադաշտում: Ամենահիշարժանը 276 թ. նրա հաղթական մենամարտն էր գոթերի իշխանի նկատմամբ: Պրոբոս կայսրը, Տրդատին մեծ պատիվների արժանացնելով և պարգևներ տալով, թագադրեց և հռոմեական օգնական զորքով ճանապարհեց Հայոց աշխարհ:

Տրդատը վերադարձավ 287 թվականին և միառժամանակ թագավորեց Հայաստանի արևմտյան հատվածում: Երբ Տրդատը դեռևս Բարձր Հայքում էր, նրա մոտ ծառայության էր եկել *Գրիգոր Պարթևը:* Գրիգորը ցանկանում էր հատուցել իր հոր՝ Անակի կողմից Խոսրով թագավորի սպանության համար:

Գրիգորը թաքցնում էր Տրդատից, որ ինքն Անակի որդին է և որ քրիստոնյա է: Տրդատ թագավորը դրանց մասին իմանում է ուրիշներից: Նա Եկեղյաց գավառում՝ Անահիտ աստվածուհուն նվիրված տաճարում, զոհեր մատուցելիս նկատել էր, որ Գրիգորը արարողությանը չի մասնակցում: Իմանալով, որ նա քրիստոնյա է ու Անակի որդին, Արտաշատ վերադառնալուց հետո հրամայում է նրան փակել բերդի ստորգետնյա բանտում՝ Խոր Վիրապում: Գրիգորն այդտեղ մնաց 13 տարի:

Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից փախչելով՝ ***Հռիփսիմյանց կույսերը*** հասան Հայաստան: Տրդատը, տեսնելով Հռիփսիմե կույսին, սիրահարվեց, սակայն մերժում ստացավ նրանից: Տրդատը դարձավ Հռիփսիմեի և մյուս կույսերի նահատակության պատճառը: Այդ ամենը խորապես ցնցեց Տրդատին, և նա ծանր հիվանդացավ:

Խոր Վիրապը Մասիսի համայնապատկերում

Արքայաքույր Խոսրովիդուխտին տեսիլք էր երևացել, որ Տրդատին և նրա հետ հիվանդացած մարդկանց կարող է բուժել միայն Գրիգորը: Տրդատը հրամայեց նրան բանտից ազատ արձակել: Խոր Վիրապից դուրս գալով՝ Գրիգորը բուժում է թագավորին ու պալատականներին, սկսում է քրիստոնեական քարոզչություն կատարել:

Տրդատ III Մեծի գահակալությունը Մեծ Հայքում: Տրդատը բազում սխրագործություններ է կատարում ինչպես Հայաստանի հարավարևմտյան երկրամասերը պարսից հարձակումներից պաշտպանելիս, այնպես էլ Պարսկաստանի սահմաններում:

Այդ ընթացքում սրվել էին պարսկա–հռոմեական հարաբերությունները, որոնք հանգեցրին պատերազմի: 296 թ. պարսից արքա Ներսեհը, Հյուսիսային Միջագետքում հռոմեական բանակին պարտության մատնելով, ներխուժեց Հայաստան: *297 թ.* պարսից բանակը հասավ *Բասեն գավառը:* Հայ–հռոմեական միացյալ ուժերը *Ոսիա գյուղի մոտ* ջախջախում են պարսից զորքերին: Ներսեհը փախուստի է դիմում և հաշ-

Հակոբ Մծբնեցու եկեղեցին Մծբինում

տություն խնդրում: Պարսից արքան Հյուսիսային Միջագետքում տարածքային որոշ զիջումներ է անում հռոմեացիներին:

298 թ. Մծբինում կնքվում է հռոմեա–պարսկական 40–ամյա խաղաղության պայմանագիրը: Մեծ Հայքի թագավորությունը վերականգնում է իր ամբողջականությունը: ***Տրդատ III Մեծը վերջնականապես հաստատվում է Հայոց գահին:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ հռոմեական կայսրը մեծ պատիվների արժանացրեց Տրդատին և թագադրեց նրան:
2. Ինչո՞ւ Տրդատ I–ը Գրիգորին փակեց Խոր Վիրապի բանտում:
3. Ովքե՞ր էին Հռիփսիմյանները:
4. Ինչո՞ւ Տրդատը բանտից ազատեց Գրիգորին:
5. Ներկայացրե՛ք Մծբինի խաղաղության պայմանագիրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ Տրդատը ազատեց Գրիգորին: Ի՞նչ հետևանքներ ունեցավ դա:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրդատ III, Գրիգոր Պարթև, Խոր Վիրապ, Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիր

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՏՐԴԱՏ III–Ի ՄԱՍԻՆ

Տրդատն, անվանի լինելով քաջությամբ, գերազանցել էր պատերազմներում, հունաց ողիմպիական (օլիմպիական) խաղերում, հսկայի զորությամբ ասպարեզ գալով՝ բազում քաջագործություններ էր ցույց տվել: Ոչ սակավ պատերազմներ էր մղել Եփրատ գետի այն ափին... ուր և խիստ խոցված՝ ձիով դուրս էր եկել պատերազմից: Այնուհետև նա, վերցնելով ձին, ասպազենն ու զենքերը և կապելով մեջքին, ալիքների վրա լողալով, անցել էր Եփրատ գետը:

ԳԼՈՒԽ 6 ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Վաղ պետական կազմավորումների դարաշրջանը: Ինչպես արդեն գիտեք նախորդ դասերից, առաջին պետական կազմավորումը Հայաստանում Արատտան էր, որը հիշատակվում է Ք. ա. III հազարամյակի առաջին կեսին: Այսինքն՝ հայկական պետականությունն ունի հինգ հազար տարվա պատմություն:

Հին Հայաստանում գոյություն են ունեցել բազմաթիվ փոքր պետական կազմավորումներ: Նրանք, հաճախ դաշինք կնքելով, միավորվել են ընդհանուր թշնամու դեմ: Հիշենք Ք. ա. III հազարամյակում բռնակալ Նարամ–Սինի դեմ ստեղծված դաշինքը՝ Կորդվաց աշխարհի գլխավորությամբ: Ք. ա. II հազարամյակում Նաիրի երկրի բազմաթիվ արքա–առաջնորդները դաշինքներ էին ստեղծել ընդդեմ թշնամի Ասորեստանի: Այդ դաշինքների ստեղծմանը նպաստում էր Հայկական լեռնաշխարհի բնակչության ազգակից լինելը:

Համահայկական թագավորությունների պետական կառուցվածքը: Ք. ա. I հազարամյակի սկզբին հայկական պետական կազմավորումների միավորումով ստեղծվում է համահայկական առաջին՝ Վանի թագավորությունը, որն ընդգրկում է ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Վանի թա-

Ք. ա. II հազարամյակի իշխանական գայիսոն Գեղարքեկից (Ուրիք աշխարհ), որի վերին մասում կա երկու գաղափարագիր՝ «քաղաք» և «փիրակալ»



Մենուա արքայի գահը

գավորությանը հաջորդեցին Հայկազունի Երվանդականների, Արտաշեսյանների և Արշակունիների համահայկական պետությունները:

Համահայկական թագավորություններն ունեին միանման պետական կառավարման համակարգեր: Պետության գլուխ կանգնած էր թագավորը, որը կրում էր *«արքա» կամ «թագավոր»* տիտղոսը: Մեծ հզորության հասած և նվաճումներ կատարած թագավորները կրում էին «մեծ արքա» և «արքաների արքա» տիտղոսները: Իսկ հայոց հզորագույն թագավոր Տիգրան Մեծին, ինչպես հիշում եք, մեծարում էին «աստված» տիտղոսով:

Թագավորը երկրի կյանքի բոլոր ոլորտների գլխավոր ղեկավարն էր: Նրա իշխանությունը ժառանգական էր և անցնում էր հորից ավագ որդուն: Նա էր պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում, հիմնադրում նոր քաղաքներ ու ամրոցներ: Արքայի հրամանները օրենքի ուժ ունեին: Թագավորը նաև երկրի զորքերի գերագույն հրամանատարն էր:

Արդինի–Մուսասիրի քրմապետ–արքա Ուրզանայի (Արձնի) կնիքը

Թագավորը երկիրը կառավարում էր ***արքունիքի*** միջոցով: Արքունիքի կազմի մեջ էին մտնում ***գործակալությունները,*** որոնք ղեկավարում էին երկրի կյանքի տարբեր ոլորտները: Դրանք նման էին այսօրվա նախարարություններին:

Առաջին գործակալությունը ***հազարապետությունն էր,*** որը ղեկավարում էր երկրի տնտեսական կյանքը և պետական շինարարությունը: Ռազմական ոլորտը ղե-

կավարում էր ***սպարապետություն*** գործակալությունը: Կարևոր էին ***թագադիր սպասպետությունը, արքունի թիկնապահությունը*** և այլ գործակալություններ:

Կարևորագույն հարցերը քննարկելու համար արքան հրավիրում էր ***Աշխարհաժողով,*** որը երկրի բարձրագույն խորհրդակցական մարմինն էր:

Չափազանց մեծ էր ***քրմապետի*** դերը: Նա երկրի հոգևոր առաջնորդն էր և ղեկավարում էր կրթության համակարգը: Քրմապետը նաև երկրի ***Մեծ դպրավորն*** էր: Նա, փաստորեն, արքայից հետո ամենամեծ հեղինակությունն էր երկրում:

Արքունիքին էին ենթարկվում նահանգապետերը, նահանգապետերին՝ գավառապետերը, գավառապետերին՝ գյուղապետերը (գեղջավագները), որոնք պետության ամենացածրաստիճան պաշտոնյաներն էին: Արքունիքին էին ենթարկվում նաև քաղաքապետերը (շահապները):

Վանի թագավորության ժամանակաշրջանի կախազարդ. պատկերված է Խալդի գերագույն աստծուց իշխանության հանձնումը թագավորին

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տարիք ունի հայկական պետականությունը:
2. Ինչ սկզբունքներով էին միավորվում հայկական իշխանությունները Ք. ա. III–II հազարամյակներում:
3. Ներկայացրեք արքայական իշխանության իրավասությունները և արքայական տիտղոսները Հին Հայաստանում:
4. Ինչպես էր արքան կառավարում երկիրը: Նկարագրեք արքունիքի կառուցվածքն ու գործառույթները:
5. Ինչ գիտեք Աշխարհաժողովի և քրմապետի պաշտոնի մասին:



ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակագրական իշխանություն, զորքի գերագույն հրամանատար, գործակալություններ, արքունիք, հազարապետություն, սպարապետություն, թագադիր ասպետություն, արքունի թիկնապահություն, Աշխարհաժողով, քրմապետ

§ 2. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ

Հայկական բանակը հնագույն շրջանում: Հայկական բանակը հնուց հայտնի է եղել աշխարհում իր հզորությամբ: Արատտայի (Ք. ա. XXVIII–XXVII դդ.) բանակի մասին վկայում են շումերական արձանագրությունները: Ք. ա. III հազարամյակի երկրորդ կեսին հայկական զինուժն այնքան հայտնի էր, որ շումերներն օգնություն խնդրեցին՝ ընդդեմ բռնակալ Նարամ–Սինի: Ինչպես հիշում եք, դա ավարտվեց հայկական զորքերի փայլուն հաղթանակով և Կորդվաց աշխարհակալության ստեղծմամբ:

Հայկական զինուժը հայտնի էր նաև Ք. ա. II հազարամյակում: Հայասա թագավորությունը (Ք. ա. XV–XIII դդ.) մարտադաշտ էր դուրս բերում 700 մարտակառք և 10–հազարանոց հետևակ, որն այդ ժամանակաշրջանում բավականին մեծ ուժ էր: Իսկ Ք. ա. XIII–IX դարերում Ասորեստանի արքաները Նաիրին հիշատակում են իբրև «ընդարձակ, հպատակություն չճանաչող» երկիր:

Վանի թագավորության բանակը: Վանի համահայկական թագավորության բանակի մասին տեղեկանում ենք սեպագիր արձանագրություններից և հնագիտական պեղումներից: Այն կազմված էր *հեծելազորից, հետևակից և մարտակառքերից:*

Աղեղնավոր նետաձիգի պատկեր Գեղամա լեռների ժայռապատկերներում

Ռազմիկների պատկերներ Հայաստանի ժայռապատկերներում

Վահանով և նիզակով զինված զինվորի արձանիկ (Ք. ա. I հազ. առաջին կես)

Տերության ամենամեծ ընդարձակման տարիներին՝ Սարդուրի II–ի օրոք, երբ սահմանները ձգվում էին չորս ծովերի միջև, զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 հազար էր: Այս թվի մեջ ներառված էին նաև նվաճված երկրների զորքերը:

Մարտիկները զինված էին բրոնզե և երկաթե սրերով, դաշույններով, նիզակներով, մարտական կացիններով, նետերով ու լայնալիճ աղեղներով: Նրանք պաշտպանված էին զրահաբաճկոններով, սաղավարտներով և վահաններով: Հնագիտական իրերի վրա պահպանվել են Վանի տերության զինուժի բազմաթիվ պատկերներ:

Հայկական զինուժը Հայկազուն–Երվանդականների, Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում: Հայկազուն–Երվանդականների օրոք ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի թիվը 48 հազար էր (8 հազարը՝ հեծելազոր, 40 հազարը՝ հետևակ): Ամբողջ հայկական զինուժի թիվը, հասկանալիորեն, պետք է ավելին լիներ, քանի որ ռազմադաշտ դուրս բերվող զորքից բացի, քաղաքներում և ամրոցներում մշտապես մնում էին կայազորներ:

Վահանի բեկոր, որի վրա պատկերված են թշնամիների դեմ արշավող հայրենի աստվածները: Հայոց հին հավատքի համաձայն՝ նախ մեր աստվածներն էին պարտության մատնում թշնամուն, ապա արքան առաջնորդում էր բանակը՝ տուն բերելու սրբագործված հաղթանակը:

Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանի զինուժի մասին պատկերացում է տալիս մեզ հասած արքունի կարևոր մի փաստաթուղթ՝ «Զորանամակը»: Դրանում նշվում է, թե պատերազմի ժամանակ որ իշխանն ինչքան զորք պետք է դուրս բերի մարտադաշտ: Դատելով «Զորանամակից» և այլ աղբյուրներից՝

Մեծ Հայքի բանակը բաղկացած է եղել շուրջ 120 հազար զինվորից:

Այդ ժամանակաշրջանում առանձնանում էր Տիգրան II Մեծի տերության զինուժը, որի մարտիկների թիվը կազմում էր 300 հազար: Այս թվի մեջ ևս ներառված են նաև նվաճված երկրների զորքերը:

Հայոց բանակի մեծ մասը կազմում էին հետևակային զորամասերը: Սակայն զորքի գլխավոր հարվածային ուժը հեծելազորն էր: Դրանցից բացի՝ կային նաև օժանդակ զորամիավորումներ: Պատերազմի ժամանակ անհրաժեշտության դեպքում հասարակ ժողովրդից հավաքագրվում էին աշխարհազորային զորամասեր: Նրանց առաջնորդում էին գավառների իշխանները:



Գահնամակը
Վերականգնումը՝ Ղևոնդ Ալիշանի

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է առաջին անգամ հիշատակվում հայկական զինուժը:
2. Ինչ գիտեք Հայասայի բանակի մասին:
3. Ներկայացրեք Վանի թագավորության բանակը:
4. Ինչ փաստաթուղթ է մեզ հասել Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանի զինուժի մասին: Ինչ ենք իմանում դրանից:
5. Ինչ հիմնական մասերից էր բաղկացած հայկական բանակը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտվելով Հայոց բանակի կառուցվածքի գծապատկերից՝ փորձեք ինքնուրույն դուրս բերել ավելի պարզեցված պատկերը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ընդարձակ, հպարակություն չճանաչող» երկիր, մարտական կացին, զրահաբաճկոն, սաղավարտ, «Զորանամակ», այրուձի, հեծելակ



ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԻՉ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԻ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հիրավի, նա ուներ քսան հազար պարսավորներ և աղեղնավոր, հիսունհինգ հազար այրուձի, որից տասնյոթ հազարը զրահավորված էին (թվական այս տվյալը բերվում է սենատին հղված Լուկուլլոսի զեկույցից), հարյուր հիսուն հազար ծանրազեն հետևազոր՝ տարբեր թվաքանակ ունեցող զորատեսակներում դասավորված: Այս ամենին գումարած երեսունհինգ հազար սակրավորներ, որոնք զբաղված էին ճանապարհներ անցկացնելով, կամուրջներ կառուցելով, գետերի մաքրմամբ, փայտահատությամբ և այլ կարգի աշխատանքներով, որոնց դասավորեցին զինվորների շարքերի հետևում՝ բանակին տալով ավելի ազդեցիկ տեսք և, միաժամանակ, ավելացնելով նրա հզորությունը:

§ 3. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր պետության հզորությունը և հաջողությունները մեծ չափով կախված են տնտեսության զարգացածության աստիճանից: Հին և միջին դարերում տնտեսության զարգացումն ապահովում էին գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը: Գյուղատնտեսությամբ զբաղված էր հիմնականում գյուղական, իսկ արհեստներով և առևտրով՝ քաղաքային բնակչությունը:

Գյուղատնտեսությունը: Հին Հայաստանն ուներ գյուղատնտեսության և արհեստագործության զարգացման համար նպաստավոր բնական պայմաններ: Գյուղատնտեսությունը բաղկացած էր երկու հիմնական ճյուղից՝ հողագործությունից (երկրագործությունից) և անասնապահությունից: Հողագործության համար շատ նպաստավոր էին Արարատյան, Շիրակի, Մշո, Բասենի և այլ դաշտերը, Վանա լճի ավազանը, բազմաթիվ գետերի հովիտները: Իսկ լեռնային ու նախալեռնային շրջանները բարենպաստ պայմաններ էին ապահովում անասնապահության զարգացման համար:

Գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու համար մեր արքաները ջրանցքներ էին անցկացնում: Դրանցից ամենանշանավորը Մենուա արքայի կառուցածն է, որն ունի 72 կմ երկարություն և գործում է մինչև այսօր:

Ք. ա. 401 թ. Հայաստան այցելած հույն

Գյուղատնտեսական աշխատանքներ պատկերող հայկական մանրանկարներ

Ոսկյա ականջօղեր Կարմիր բլուրից, որոնք ցույց են տալիս հայ արհեստավորների բացառիկ վարպետությունը, Ք. ա. VIII դ.

պատմիչ և զորավար Քսենոփոնը նկարագրում է Հայաստանը որպես գյուղատնտեսական ապրանքներով բացառիկ հարուստ երկիր: Հույն պատմիչին հիացրել էր նաև հայերի հյուրասիրությունը:

Արհեստագործությունը: Արհեստների զարգացման համար ևս Հայկական լեռնաշխարհն ուներ շատ բարենպաստ պայմաններ: Ք. ա. III հազարամյակից սկսած՝ լեռնաշխարհի հարուստ մետաղահանքերի շահագործումը նպաստում էր դարբնության, զինագործության, ոսկերչության և այլ արհեստների զարգացմանը: Դրա լավագույն վկայություններն են պեղումներից հայտնաբերված մեծաթիվ մետաղյա առարկաները:

Զարգացած էին քարագործությունն ու փայտամշակությունը: Իսկ շինարարական արվեստի բարձր մակարդակի պերճախոս վկաներն են հարյուրավոր հուշարձանները, որոնք այսօր էլ զարմացնում և հիացմունք են պատճառում դիտողներին:

Դարբինները հայկական մանրանկարներում

Զարգացած էին կաշեգործությունը, մանածագործությունը, գորգագործությունը և այլ արհեստներ, որոնց հումքը ստացվում էր գյուղատնտեսությունից:

Առևտուրը: Տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ուներ առևտուրը: Ներքին առևտուրը նպաստում էր երկրի ներսում ապրանքաշրջանառության խթանմանը: Արտաքին առևտրի շնորհիվ Հայաստան էին ներմուծվում ապրանքներ արտասահմանից, որոնց հումքը Հայաստանում չկար կամ շատ քիչ էր (օրինակ՝ մետաքսը): Միաժամանակ Հայաստանից արտահանվում էին տեղական արտադրության բազմապիսի ապրանքներ: Հայաստանով էին անցնում Հին աշխարհի առևտրական կարևոր մի քանի ճանապարհներ:

Շատ ուշագրավ տեղեկություն է հաղորդում հույն նշանավոր պատմիչ, համաշխարհային պատմագրության հայրը համարվող Հերոդոտոսը (Ք. ա. V դար): Նա տեղեկացնում է, որ իր ժամանակ Հայաստանի և Բաբելոնի միջև առևտուրը կատարվում էր Եփրատ գետով:

Ներքին և արտաքին առևտրի աճին խթանում էր հայկական դրամաշրջանառության աշխուժացումը: Հայկական դրամներ են հատվել Երվանդակաների և Արտաշեսյանների կառավարման դարաշրջանում: Հայաստանում կիրառվում էին նաև հարևան երկրների դրամները:

Նավագնացության տեսարանները հայկական մանրանկարներում



Հերոդոտոսի կիսանդրին

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նպաստավոր պայմաններ ուներ Հայկական լեռնաշխարհը գյուղատնտեսության զարգացման համար:
2. Ինչ փաստեր գիտեք Հին Հայաստանի գյուղատնտեսության զարգացած լինելու մասին:
3. Ովքե՞ր էին զբաղվում արհեստագործությամբ: Ինչ արհեստներ գիտեք:
4. Ինչ դեր ուներ ներքին և արտաքին առևտուրը երկրի կյանքում:
5. Վերհիշե՛ք, թե ինչ գիտելիքներ ունեք հայկական դրամաշրջանառության մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լրացրե՛ք տնտեսությանը վերաբերվող գծապատկերը.



ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսություն, հողագործություն, անասնապահություն, ջրանցք, արհեստագործություն, առևտուր, Հերոդոտոս

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՀՈՒՅՆ ՆՇԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԻՉ ՀԵՐՈԴՈՏՈՍԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԱԲԵԼՈՆԻ ՄԻՋԵՎ ԳԵՏԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն*:

* *Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է 26,2, իսկ բաբելոնյան տաղանդը՝ 40 կիլոգրամի: Չափի ժամանակակից միավորով արտահայտված՝ ստացվում է, որ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերն ունեցել են ավելի քան 130 տոննա (բաբելոնյան տաղանդով հաշվելու պարագայում՝ 200 տոննա) տարողություն: Հնարավոր է, որ այս թիվը չափազանցված է, բայց և այնպես, խոսում է հոգուտ Եփրատով Հայաստանից մեծածավալ նավարկություն կատարելու փաստի:*

§ 4. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հին Հայաստանի բնակչությունը: Հին Հայաստանի բնակչությունը կարելի է բաժանել ***երեք հիմնական խավերի:*** Առաջինը ***ազնվականությունն էր,*** որի մեջ էին մտնում արքայատոհմը, նախարարական տները և քրմական (հոգևորականների) դասը: Նրանք համարվում էին արտոնյալ, ազատված էին հարկերից և իրականացնում էին երկրի ու ժողովրդի կառավարումը: Ազնվականներից էր կազմվում բանակի հեծելազորը (այրուձին):

Երկրորդը ***քաղաքային ազատ բնակչությունն էր,*** որն, ինչպես գիտենք, զբաղվում էր արհեստներով և առևտրով:

Երրորդ խավը ***գյուղական ազատ բնակչությունն էր,*** որը զբաղվում էր գյուղատնտեսությամբ և համալրում էր բանակի հետևակային զորամիավորումները: Երկրորդ և երրորդ խավերի վճարած հարկերն ապահովում էին երկրի տնտեսության հիմնական եկամուտները:

Հզորության և արտաքին նվաճումների շրջանում (օրինակ՝ Արգիշտի I–ի, Սարդուրի II–ի, Տիգրան II Մեծի օրոք) Հայաստան են բերվել մեծ թվով ռազմագերիներ: Նրանց զգալի մասը ստրկացվում էր և օգտագործվում ամենատարբեր աշխատանքներում:

Քաղաքները: Հայկական լեռնաշխարհում քաղաքաշինության մասին առաջին փաստերն ունեն հինգհազարամյա վաղեմություն: Հնագետներն ուսումնասիրել են

Զինվորի արձանիկ՝ վերակազմությամբ Ք. ա. VIII–VII դդ.



Ամրոցի պարկեր Վանի թագավորության հնավայրերից



Արգիշտիխինիլի քաղաքի տեսքը. վերակազմություն

Ք. ա. III–II հազարամյակների բազմաթիվ քաղաք–ամրոցներ:

Մեծ թվով բերդ–քաղաքներ են կառուցվել Վանի թագավորության շրջանում: ***Բերդ–քաղաքի*** կենտրոնում ***միջնաբերդն*** էր, որում գտնվում էին գերագույն աստծո, նաև տեղական աստվածությունների տաճարները: Միջնաբերդի շուրջը փռված քաղաքները կառուցվում էին հատուկ նախագծով և հաճախ պարսպապատվում էին: Հիշենք մայրաքաղաք Տուշպայի, Էրեբունի, Արգիշտիխինիլի և Թեյշեբաինի քաղաք–ամրոցների կառուցման մասին:

Հայկազուն–Երվանդականների պետության մայրաքաղաքն ***Արմավիրն էր:*** Ք. ա. III դարի վերջերին Երվանդ IV–ը կառուցեց Երվանդաշատ մայրաքաղաքը, հոգևոր կենտրոն Բագարանը և Երվանդակերտ ամրոցը:

Ինչպես հիշում ենք, Արտաշես I–ը հիմնել է նոր մայրաքաղաք՝ Արտաշատը: Դրանից շուրջ 100 տարի անց Տիգրան Մեծը կառուցեց նոր մայրաքաղաք Տիգրանակերտը, որը դարձավ իր ժամանակի աշխարհի մեծագույն քաղաքներից մեկը: Տիգրան Մեծը հիմնեց իր անվամբ ևս մի քանի բնակավայր:

Արմավիր հնավայրի ընդհանուր տեսքը

Ավելի ուշ Վաղարշ I–ը (117–140 թթ.) կառուցեց իր անվամբ նոր մայրաքաղաք՝ Վաղարշապատը՝ այնտեղ տեղափոխելով արքայանիստը:

Գյուղական բնակավայրերը: Հին Հայաստանի գյուղական բնակչությանը կոչում էին *շինականներ* կամ *գեղջուկներ:* Նրանք միավորված էր համայնքների մեջ: Գյուղացիներն էին ընտրում իրենց գյուղի համայնքի ղեկավարին, որը կոչվում էր *գեղջավագ* (գյուղապետ): Նա կազմակերպում էր գյուղատնտեսական աշխատանքները, հավաքում պետական հարկերը և այլն:

Գյուղական համայնքներն ունեին ընդհանուր օգտագործման տարածքներ՝ արոտավայրեր, որսատեղեր, անտառներ, լճակներ: Բացի այդ, համայնքի մեջ մտնող ընտանիքներն ունեին իրենց սեփական հողերը:

Գյուղական համայնքների կողքին գոյություն ունեին նաև մասնավոր տնտեսություններ, որոնք կոչվում էին *դաստակերտ* կամ *ագարակ:* Դրանցում աշխատում էին հիմնականում ստրուկները:

Ծիծեռնավանքը (Արցախ, IV դար), որը կառուցվել է նախաքրիստոնեական մեհյանի հիմքի վրա

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք Հին Հայաստանի բնակչության հիմնական խավերը:
2. Ովքե՞ր էին համալրում հեծելազորային և հետևակային զորամիավորումները:
3. Ի՞նչ փաստեր գիտեք Վանի թագավորության քաղաքների մասին:
4. Ի՞նչ նոր բնակավայրեր են հիմնել Երվանդ IV–ը, Արտաշես I–ը և Տիգրան II Մեծը: Պատմե՛ք դրանց մասին:
5. Ո՞վ է հիմնել Վաղարշապատ մայրաքաղաքը:
6. Ի՞նչ գիտեք Հին Հայաստանի գյուղական կյանքի մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կառուցե՛ք Հին Հայաստանի սոցիալական կառուցվածքը ներկայացնող գծապատկեր:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնակչության խավեր, ազնվականություն, արտոնյալ, միջնաբերդ, շինականներ, գեղջուկներ, համայնք, դասակերտ, ազարակ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ԵՐՎԱՆԴ IV–Ի ԿՈՂՄԻՑ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ ԲԱԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Բայց Երվանդը, իր քաղաքը շինելով, Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ, բացի կուռքերից, որովհետև իր համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ միգուցե, երբ ժողովուրդը զոհաբերության համար այնտեղ գա, քաղաքն զգուշությամբ չպահվի: Ուստի նրանից հյուսիս՝ մոտ քառասուն ասպարեզ հեռու՝ Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք՝ նման իր քաղաքին, և կոչեց Բագարան, այսինքն՝ թե բագիններն այնտեղ են տեղավորված, և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը: Շինեց նաև մեհյաններ և իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով՝ քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք:

ԳԼՈՒԽ 7 ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Հայկական մշակույթի ակունքները: Հայկական մշակույթը սկզբնավորվել է անհիշելի ժամանակներում: Դեռևս տոհմերի, ցեղամիությունների և վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջաններում ծնունդ են առնում առասպելներն ու վիպերգերը, կրոնական հավատալիքներն ու սովորույթները: Դրանցից շատերը պահպանվելով՝ հասել են մեզ և շատ սիրված են նաև մեր օրերում:

Հայկ նահապետի արձանը Երևանում (քանդակագործ՝ Ա. Նուրիջանյան)

Հայկական մշակույթի հնագույն ակունքների մասին կան նաև բազմաթիվ նյութական վկայություններ: Հայաստանի տասնյակ հազարավոր ժայռապատկերներում պատկերվում են ինչպես պարզ կենցաղային (անասնապահական, որսորդական և այլ) տեսարաններ, այնպես էլ երկնային երևույթների ու դիցաբանական սյուժեների պատկերներ, օրացույցներ և այլն: Հայկական մշակույթի վաղագույն շրջանի բարձր զարգացման մասին են վկայում հնագիտական պեղումները: Հայտնաբերվել են բազմաթիվ հնագույն բնակավայրեր, դամբարաններ ու ամրոցներ: Դրանց մենք ծանոթացել ենք դասագրքի առաջին բաժնում:

Արամը Հայաստան ներխուժած Նյուքար Մադեսին հաղթելով՝ գամում է նրան Արմավիրի պարսպին՝ «երկաթե ցից միսելով ճակատի մեջ», ի ցույց Հայոց աշխարհի թշնամիներին: Այս սյուժեն պատկերել է իտալացի նկարիչ Ջուլիանո Զասսոն

Հայկական առասպելները: Առասպելներն աստվածների, սրբազան վայրերի,



«Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի առաջ»
Հեղինակ՝ Վարդես Սուրենյանց

Տորք Մնգեղի արձանը Երևանում
Քանդակագործ՝ Ա. Նուրիջանյան

նախնիների ու հերոսների մասին ստեղծված հնագույն ավանդապատումներ են: Դրանք երբեմն ունենում են ոչ իրական, չափազանցված դրվագներ:

Մեզ են հասել բազմաթիվ առասպելներ աստվածների, երկնքի ու երկրի, ժամանակի, լույսի ու խավարի, արևի, լուսնի և աստղերի մասին: Շատ առասպելներ պատմում են Հայոց աշխարհի լեռների, գետերի ու բնակավայրերի մասին: Առասպելների մի խումբ էլ նվիրված է մեր ժողովրդի նախնիներին ու մեծ հերոսներին: Դրանց մեծ մասը մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում:

Հայ ժողովրդի ստեղծագործական գոհարներից է Վահագն աստծո ծննդյան երգը: Վահագնի մասին պատմվում է, որ նա ոչնչացրել է վիշապներին, որոնք չար ուժեր էին, ուստի կոչվել է ***Վիշապաքաղ:***

Հայության ամենասիրելի ավանդապատումներից է «Հայկ և Բել» դիցավեպը, ըստ որի՝ Հայկն առաջին մեծ աստվածներից մեկի որդին է: Նա պայքարի է դուրս գալիս բռնակալ Բելի դեմ, որը ձգտում էր տիրել համայն աշխարհին: Պայքարն ավարտվում է դյուցազուն Հայկի հաղթանակով: Հայկը դարձավ Հայոց պետության հիմնադիրը և ստեղծեց հայկական օրացույցը՝ Հայոց բուն տոմարը: Նա պատվիրեց իր ժառանգներին՝ չերկրպագել ոչ ոքի՝ բացի Արարիչ աստծուց:

Ըստ հայկական հնամենի ավանդազրույցի՝ մենք հայ ենք կոչվում մեր նախնի դյուցազուն Հայկի անունով: Իսկ Հայկի

ժառանգներից մեկի՝ քաջ նահապետ Արամի անունով օտարները մեզ կոչում են «արմեն», իսկ մեր երկիրը՝ «Արմենիա»:

Հայկի ժառանգներից էր Տորք Անգեղը: Առասպելները պատմում են նրա հայրենասիրության, անկրկնելի ուժի և քաջության մասին: «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելում փառաբանվում է Հայկազուն Արայի հավատարմությունը: Նա չի գայթակղվում այլ երկրի հարստություններով և օտար թագուհով, այլ նախընտրում է սեփական երկիրն ու հարազատ ընտանիքը:

Նշված և այլ առասպելներում արտացոլված են հայ ժողովրդի հերոսական ոգին, նրա արդարասիրությունն ու պայքարելու կամքը:

Վահագն–Արտագնեսի արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկզբնավորվել հայկական մշակույթը:
2. Ի՞նչ են առասպելները:
3. Ի՞նչ զրույցներ էին պատմում մեր նախնիները Վահագն աստծո մասին:
4. Ներկայացրե՛ք «Հայկ և Բել» դիցավեպը:
5. Պատմե՛ք Արամի, Արա Գեղեցիկի և Տորք Անգեղի մասին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Խմբով քննարկե՛ք՝ հայկական ավանդազրույցների որ հերոսն է ձեզ առավել հոգեհարազատ: Նրանցից ո՞ւմ կուզեք նմանվել:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առասպել, վիպերգ, կրոնական հավատալիքներ, սովորույթներ, դիցաբանություն, ավանդապատում, Վահագն Վիշապաքաղ, «Հայկ և Բել», Հայոց բուն տոմար

ԺՈՒԿ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑԸ

(ըստ Գարեգին Սրվանձտյանցի գրառման)

Լույսի ու խավարի, ցերեկվա և գիշերվա իրար հաջորդելը կարգավորում է ժուկ ու ժամանակը: Նա ալեհեր ծերունի է՝ նստած մի բարձր սարի վրա: Ժուկ ու ժամանակը ձեռքին ունի երկու կծիկ, մեկը՝ սպիտակ, մյուսը՝ սև: Նա կծիկները հերթով սարից ցած է գլորում: Լեռան մեկ կողմից նա մի կծիկը ցած է գլորում, մինչդեռ լեռան հակառակ կողմից մյուսը կծկում է: Երբ սպիտակ կծիկն է քանդելով ցած գլորում՝ լուսանում է, արևը ծագում: Բայց երբ սպիտակ կծիկն է կծկում, իսկ սևը քանդելով՝ ցած գլորում, մթնում է, արևը մայր է մտնում:

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐԻ, ԴԱՇՏԵՐԻ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼԸ

(ըստ Արամ Ղանալանյանի գրառման)

Ասում են, թե հայոց լեռները շատ առաջ հաղթանդամ ու հսկա եղբայրներ են եղել: Ամեն օր՝ առավոտ վաղ, արթնանալով՝ նրանք սովորություն են ունեցել նախ կապել իրենց գոտիները, հետո միայն բարևել իրար: Ժամանակ անց, երբ եղբայրները ծերանում են, էլ չեն կարողանում վաղ վեր կենալ: Մի օր էլ, ուշ արթնանալով, նրանք մոռանում են կապել գոտիները և, հակառակ իրենց սովորության, բարևում են իրար առանց գոտիները կապելու: Աստված, տեսնելով այդ, պատժում է եղբայրներին, նրանք քարանալով լեռներ են դառնում, գոտիները՝ կանաչ դաշտեր, իսկ արցունքներն էլ՝ անմահական աղբյուրներ:

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԳԸ

Աշխարհաբար տարբերակը՝

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի,
Երկնում էր ծովում նաև
կարմրիկ եղեգնիկը:
Եղեգնի փողից ծուխ էր ելնում,
Եղեգնի փողից բոց էր ելնում
Եվ բոցի միջից վազում էր
խարտյաշ մի պատանեկիկ:
Նա հուր մազեր ուներ,
Ապա թե՝ բոց մորուք ուներ,
Եվ աչիկներն էին արեգակներ:

Գրաբար բնագիրը՝

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր և
զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ
պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՊԵՐԳԵՐԸ

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին

Հայկական վիպերգերը: Ի տարբերություն առասպելների՝ վեպերն ու վիպերգերը հիմնականում իրապատում են, այսինքն՝ հիմնված են պատմական հավաստի դեպքերի վրա: Դրանց հերոսները պատմական կերպարներ են:

Մեզ են հասել «Տիգրան և Աժդահակ», «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլ վիպերգերը, որոնք ևս գրի է առել պատմահայր Մովսես Խորենացին: Դրանցում մեծարվում և փառաբանվում են սիրված արքաներն ու հերոսները, որոնց ամենաբնորոշ գծերը բարեպաշտությունն ու հայրենապաշտությունն են:

«Տիգրան և Աժդահակ»: Այս վիպասքը նվիրված է Ք. ա. VI դարի պատմական իրադարձություններին: Հայոց արքա Տիգրան Երվանդյանը դաշնակցեց պարսից արքա Կյուրոս Մեծի հետ, և միասին տապալեցին Մարաստանի արքա Աժդահակին ու նրա տերությունը (այդ մասին դուք գիտեք անցած դասընթացից): Հատկանշական է Տիգրան արքայի բնորոշումը վիպերգում. *«Նա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և բոլոր նրանցից քաջ... Նա չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»:*

Արտաշեսի վիպաշարքը: Առավել սիրված է եղել Արտաշես Աշխարհակալը, որի կյանքի առանձին դրվագներ ներկայացվել

«Արտաշես և Սաթենիկ»
Հեղինակ՝ իտալացի նկարիչ
Ջ. Ֆուզարո

են վիպերգերի տեսքով: Արտաշես արքայի մանկության և գահակալության մասին է պատմում «Երվանդ և Արտաշես» վիպասքը, որում ներկայացվում է, թե շնորհիվ իր դայակ Սմբատ Բագրատունու ինչպես նա փրկվեց և հետագայում Երվանդ Վերջինից խլեց գահը: Վեպում Արտաշեսը ներկայանում է որպես երկիրը միավորող և շենացնող արքա: Նա պաշտպանում է Հայաստանի սահմանները թշնամիների հարձակումներից: Այդպիսի մի դրվագ է ներկայացնում «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը:

Հյուսիսից ալանները (ներկայիս օսերի նախնիները) արշավում են Հայաստան: Արտաշես արքան հաղթում է նրանց՝ գերի վերցնելով նաև ալանների արքայորդուն: Այդ ժամանակ ալանների արքայադուստր Սաթենիկը Կուր գետի հանդիպակաց ափից դիմում է Արտաշեսին՝ խնդրելով ազատել իր եղբորը.

Քեզ եմ ասում, քաջ դղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր ալանների քաջ ազգին,
Եկ համաձայնվիր ալանների գեղաչյա
դստեր՝ իմ խոսքերին,
Եվ դո՛ւր այդ պատանուն:
Քանզի վայել չէ, որ քենի համար դյուցազունները
Այլ դյուցազունների ժառանգների կյանքը վերացնեն
Կամ ծառա դարձնելով ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ ազգերի միջև
Հավիտենական թշնամություն հաստատեն:

Կանացի ապարանջան և ականջօղեր Ք. ա. I դարի Հայաստանի հնավայրերից

Արտաշեսը սիրահարվում է ալանաց հրաշագեղ արքայադստերն ու խնամախոս է ուղարկում նրա հայր–արքայի մոտ՝ խնդրելով Սաթենիկի ձեռքը: Ալանների արքան, սակայն, մերժում է՝ նշելով, որ Արտաշեսն ի վիճակի չի լինի վճարել այն մեծ գլխագինը, որն, ալանական սովորույթի համաձայն, պետք է վճարեր փեսան հարսի համար: Զայրացած նման պատասխանից՝ Արտաշեսը խնդիրը լուծում է քաջին վայել պատվախնդրությամբ.

Հեծավ արի արքա Արտաշեսը գեղեցիկ սև ձին,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Գցեց մեջքին ալանաց օրիորդի,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը՝
Արագ հասցնելով բանակն իր:

Հայոց արքան ամուսնանում է ալանաց արքայադստեր հետ: Տեղի է ունենում արքայական շքեղ հարսանիք, որի ժամանակ արքայի վրա ոսկի, իսկ հարսի վրա մարգարիտ էին շաղ տալիս: Այդ սովորությունը խորհրդանշել է բարեբերության մաղթանքը նորապսակներին:

Արտավազդը գահավիժում է Մասիսի խորխորատները

Արտաշեսն աննախադեպ ծաղկման հասցրեց երկիրը: Նրա օրոք Հայոց աշխարհում *«անմշակ հող չէր մնացել»:* Արտաշեսը մեռավ քառասունմեկ տարի իշխելուց հետո: Նրան թաղեցին ոսկյա դագաղով, իսկ թաղումը դարձավ համաժողովրդական սգո արարողություն:

Արտաշեսի վեպին հաջորդում է նրա որդու՝ Արտավազդի վիպասքը, որն ավելի շատ հագեցած է առասպելական տարրերով:

Առասպելներից և վիպասքերից բացի՝ ժողովրդի մեջ պատմվել և երգվել են բանավոր այլ ստեղծագործություններ (աշխատանքային, սիրային, սգո երգեր և այլն):

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայկական ի՞նչ վիպերգեր գիտեք:
2. Ներկայացրե՛ք «Տիգրան և Աժդահակ» վիպասքը:
3. Ի՞նչ զրույցներ էին պատմում մեր նախնիները Արտաշես արքայի մասին:
4. Պատմե՛ք «Արտաշես և Սաթենիկ» վիպերգի բովանդակությունը:
5. Ո՞ր վիպասքն է հաջորդում Արտաշեսի վեպին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տիգրան և Աժդահակ», «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ», հայրենասիրություն, վիպասք

§ 3. ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ

Վաղագույն հավատալիքները: Հնում մարդիկ պաշտում էին բազմաթիվ աստվածությունների: Դեռ անհիշելի ժամանակներում աստվածացվել և պաշտվում էին երկնային մարմինները երևույթները՝ արևը, լուսինը, աստղերը, կայծակը և այլն: Երկրպագում էին սրբազան համարվող լեռներն ու գետերը: Մարդիկ հավատում էին նաև, որ բնության մեջ կան անտեսանելի ուժեր՝ ոգիներ, որոնք ազդում են մարդկանց և շրջապատի վրա: Հնում հավատում էին, որ ոգիները լինում են բարի և չար:

Տիեզերքի մոդելը
Ք. ա. II հազարամյակ

Հայկական պետությունների դիցարանները: Երբ ցեղերը միավորվելով ստեղծեցին առաջին պետական կազմավորումները, նրանք «միավորեցին» նաև իրենց աստվածներին: Տվյալ պետության մեջ պաշտվող աստվածների ամբողջությունը կոչվում էր ***դիցարան*** (հին հայերենում «դիք» նշանակում էր «աստվածներ» իսկ «դից»՝ «աստվածների»):

Հայոց առաջին պետության՝ Արատտայի հովանավոր աստվածն էր Հայկը, որ համարվում էր արարչագործ Հայա աստծո որդին: Հայկի անունով էր կոչվում երկնքի ամենապայծառ համաստեղությունը՝ Օրիոնը: Հայկական ավանդազրույցի համաձայն՝ Հայկն իր որդիների ու դուստրերի անուններով է կոչել կենդանակերպի (զոդիակի) 12 համաստեղությունները: Բազմաստվածության դարաշրջանի ավարտից

Խալդի գերագույն աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի–Մուսասիրի տաճարը. վերակազմություն



Արամազդի արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

Մայր դիցուհու արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

հետո Հայկը մեծարվել է իբրև մեր ազգի նախնի–նահապետ և շատ սիրված է ու մեծարվում է մինչև այսօր:

Վանի թագավորության դիցարանն արձանագրված է Միհերի դռան վրա: Այն կազմված է եղել 35 աստվածներից և 35 դիցուհիներից: Դա ցույց է տալիս, որ հնագույն այդ ժամանակաշրջանում հայ իրականության մեջ ընդունված է եղել մենամուսնական ընտանիքի գաղափարը: Դիցարանը գլխավորում էին երեք գերագույն աստվածները: Աստվածների հայր Խալդին համարվում էր երկնքի ու երկրի, տիեզերքի արարիչը: Աստվածներից բացի՝ երկրպագվում էին շուրջ 30 սրբություններ:

Վանի թագավորությունից հետո ձևավորվում է նոր դիցարան: Քրիստոնեության ընդունման նախօրյակին հայոց դիցարանը ներկայանում է նոր տեսքով:

Դիցարանը ղեկավարում էր Արամազդը, որին պաշտում էին իբրև արարիչ երկրի և երկնքի, բարօրություն, լիություն, արիություն շնորհող: Չափազանց սիրված էր Մայր դիցուհի Անահիտը, որին մեծարում էին «Ոսկեմայր» տիտղոսով: Նա համարվում էր Հայոց աշխարհի փառքն ու սնուցողը, բոլոր բարիքների շնորհատուն, երկրի ու մայրաքաղաքի պահապան–հովանավորը: Ռազմի և քաջության աստվածն էր Վահագնը: Նրա կինը՝ Աստղիկ դիցուհին, երկնային լույսի, սիրո և գեղեցկության աստվածուհին էր, որին էլ նվիրված է Վարդավառի տոնը: Սիրված դիցուհի էր Նանեն՝ մայրության և ընտանեկան օջախի պա-

հապան–դիցուհին: Արեգ–Միհրը արեգակի, լույսի և արդարության աստվածն էր: Հայերը երկրպագում էին նաև Տիր աստծուն, որը գրի և գրականության, արվեստի ու գիտության հովանավորն էր: Հայերը հնուց աչքի են ընկել հյուրասիրությամբ: Մեր դիցարանում իր տեղն ուներ հյուրընկալության Վանատուր աստվածը:

Հելլենիզմի դարաշրջանում հայոց աստվածները համապատասխանեցվել են հունականների հետ (Արամազդ–Զևս, Անահիտ–Արտեմիս, Վահագն–Հերակլես, Աստղիկ–Ափրոդիտե, Արեգ–Միհր–Հելիոս, Տիր–Ապոլոն և այլն): Սակայն օտար աստվածների ո՛չ անունները, ո՛չ էլ պաշտամունքը չեն տարածվել մեր ժողովրդի մեջ:

Հայոց հին հավատքի ամենաբնորոշ գիծն այն է, որ մեր ժողովուրդը չի պաշտել չար կամ չարագործ աստվածների: Մեր նախնիները երկրպագել են միայն բարին, լուսավորը, ընտանեկան օջախը, գիտություններն ու այլ բարիքներ:

Արեգ–Միհրի արձանի գլուխը Նեմրութի սրբավայրում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք պաշտամունքի վաղագույն ձևերի մասին:
2. Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը:
3. Ներկայացրե՛ք Վանի թագավորության դիցարանը:
4. Ի՞նչ կազմ ուներ հայոց դիցարանը քրիստոնեության ընդունման նախօրյակին:
5. Բնութագրե՛ք հայոց հին հավատքի ամենաբնորոշ կողմը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ

(ըստ Անանիա Շիրակացու)

1. Արեգ
2. Հրանտ
3. Արամ
4. Մարգար
5. Ահրանք
6. Մազդեզ
7. Աստղիկ
8. Միհր
9. Ձոպաբեր
10. Մուրց
11. Երեզկան
12. Անի
13. Պարխար
14. Վանատուր
15. Արամազդ
16. Մանի
17. Ասակ
18. Մասիս
19. Անահիտ
20. Արազած
21. Գրգուռ
22. Կուրդուիք
23. Ծմակ
24. Լուսնակ
25. Ցրոն
26. Նպատ
27. Վահագն
28. Սիմ
29. Վարագ
30. Գիշերավար

Ուսուցչի օգնությամբ գտե՛ք այն օրանունները, որոնք կապվում են հայոց աստվածների, հերոսների և սրբազան վայրերի հետ: Ի՞նչ մանրամասներ գիտեք դրանց մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասպվածացնել, պաշտել, երկրպագել, ոգիներ, դիցարան, Հայկ, Օրիոն, 35 ասպվածներ և 35 դիցուհիներ, Խալդի, Արամազդ, մայր դիցուհի՝ Անահիտ, Նանե, Միհր

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՔԱՅԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՍԿԻԶԲԸ, ՈՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՒՄ ԵՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ
(ըստ Ագաթանգեղոսի)

Մեծ Հայքի արքայից՝
մեծամեծերին, իշխաններին, նախարարներին, գործակալներին և այլ մարդկանց, որոնք իմ իշխանության ներքո են գտնվում, ողջույն բոլորին միաժամանակ։

Թող ողջություն և խաղաղություն հասնի աստվածների օգնականությամբ, պարատ լիություն՝ Արի Արամազդից, խնամակալություն՝ Անահիտ տիկնոջից, քաջություն ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից...

§ 4. ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Պատմիչների տեղեկությունները նախաքրիստոնեական հայ գրի ու գրականության մասին: Բոլորին հայտնի է, որ հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը 405 թ. ստեղծել է հայկական այբուբենը: Բազմաթիվ պատմիչներ վկայում են, որ հայերը սեփական գիր և դպրություն են ունեցել դրանից շատ ավելի վաղ՝ նախաքրիստոնեական շրջանում (301 թ. առաջ): Այն, սակայն, արգելվել էր քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո:

Մեհենագիր արձանագրություններ Ցոլակերտից, Ք. ա. II–I հազ. սահմանագիծ

Հույն պատմիչ Փիլոստրատոսը վկայում է, որ հայոց Արշակ I արքայի (34–35 թթ.) ժամանակ օգտագործվել են հայկական գրեր: Մեկ այլ հույն պատմիչ՝ Հիպպոլիտիսը, 235 թ. գրված «Ժամանակագրություն» գրքում հայերին հիշատակում է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում: Ագաթանգեղոսը վկայում է ոչ միայն հայկական նշանագրերի, այլև նախաքրիստոնեական Հայաստանում դպրության Տիր աստծո պաշտամունքի մասին: Իսկ Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ II–III դարերում Բարձր Հայքի Անի ամրոցում պահվում էր մեհենական պատմագրության դիվանը (արխիվը): 301 թ. առաջ հայալեզու գրականության գոյության մասին է վկայում նաև Գևորգ Ասորի պատմիչը:

Վանի թագավորության ժամանակաշրջանի բրոնզե թիթեղ, Ք. ա. IX դ.: Պատկերված է Իշպուինի արքայի ընտանիքը՝ թագավորը, թագուհին, նրա հետևում կանգնած մանուկ արքայազն Մենուան և վերջինիս ուսուցիչը, որի ձեռքին կա գրելու սալիկ կամ պահարակ: Բոլորի անունները գրված են նրանց գլխավերում մեհենագրերով:

Նախաքրիստոնեական շրջանում մեր նախնիներն օգտագործել են ինչպես սեփական հայալեզու, այնպես էլ օտարալե-

Սեպագիր սալիկ Կարմիր բլուրից, Ք. ա. VII դ.

Լատիներեն արձանագրություն Վաղարշապատից՝ կանգնեցված Հռոմի կայսր Կոմոդոսի (180–192 թթ.) անունից

զու գրեր (այսօր մենք էլ հայերենին զուգահեռ գործածում ենք ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով գրականությունը):

Հայկական մեհենագրությունը: Հայաստանում հայտնաբերված նախաքրիստոնեական արձանագրությունների առաջին մեծ խումբը գրված է բնիկ հայկական մեհենագրով *(մեհյանների՝ տաճարների գիր):* Մեհենագրությունը մի քանի հարյուր նշաններից բաղկացած գրային համակարգ է: Այդ նշաններն ունեին պատկերների տեսք (ինչպես եգիպտական հիերոգլիֆները): Հայկական մեհենագրության ակունքները գալիս են Հայաստանի ժայռապատկերներից:

Հայկական մեհենագրությունը մեծ մասամբ դեռևս վերծանված չէ: Լավ ուսումնասիրված է միայն Վանի թագավորության շրջանի մեհենագրությունը (չշփոթել սեպագրի հետ): Այն բաղկացած է շուրջ 300 նշաններից, որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղություններով: Գրային համակարգի լեզուն եղել է հնագույն հայերենը:

Հայաստանում կիրառված օտար գրահամակարգերը: Նախաքրիստոնեական շրջանում մեր նախնիները ներմուծել և կիրառել են հինգ գրային համակարգեր: Դրանցից առաջինը խեթա–լուվիական հիերոգլիֆներ են, որոնք պատկերագրեր էին: Այնուհետև Վանի թագավորության շրջանում կիրառվել է ասուրա–բաբելական սեպագիրը: Այն Հայաստանում բարեփոխման է ենթարկվել, և ստեղծվել է տեղական (ուրարտական) սեպագիրը: Նախաք-

րիստոնեական Հայաստանում գործածվել է երկու այբուբեն՝ հունականը և արամեականը:

Նախաքրիստոնեական Հայաստանում ստեղծված գրավոր մշակույթն իր բարերար ազդեցությունն ունեցավ Մաշտոցյան դպրության վրա: Հազարամյակների ընթացքում ստեղծվեց հղկված և ճոխ մի լեզու, որի հիմքի վրա Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը ստեղծեցին հայոց դպրության Ոսկեդարը:

Ասորեստանի արքա Սալմանասար III–ի պատկերաքանդակն ու արձանագրությունը Քենք հնավայրում Եփրատի ափին

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տեղեկություններ են հաղորդում հույն պատմիչներ Փիլոստրատոսն ու Հիպպոլիտիսը:
2. Հայաստանի նախաքրիստոնեական դպրության մասին ինչ վկայություններ ունեն Ագաթանգեղոսն ու Մովսես Խորենացին:
3. Ինչ է մեհենագիրը:
4. Քանի՞ մեհենանշաններից էր բաղկացած Վանի թագավորության մեհենագրությունը և ինչ ուղղություններով էին դրանք գրվում:
5. Քրիստոնեության ընդունումից առաջ ինչ օտար գրահամակարգեր են կիրառվել Հայաստանում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեհենական գիր, մեհենական պատմագրության դիվան, նախաքրիստոնեական արձանագրություններ, խեթա–լուվիական հիերոգլիֆներ, պատկերագրեր, ասուրա–բաբելական սեպագիր

ՓԻԼՈՍՏՐԱՏՈՍԸ (II–III ԴԴ.) ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐՈՎ ՄԱՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն», այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այս Արշակն* այն ժամանակ Հայոց թագավորն էր և իր բռնած հովազը, այդ կենդանու մեծության պատճառով, նվիրել էր Դիոնիսոսին**:

** Խոսքը Մեծ Հայքի արքա Արշակ I–ի (34–35) մասին է:*

*** Դիոնիսոսը, ըստ հին հունական առասպելաբանության, համարվել է Զևսի որդին, խաղողագործության ասպվածը:*

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ԱՆԻԻ ՄԵՀԵՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ (ԱՐԽԻՎԻ) ՄԱՍԻՆ

Մեզ այս բաները պատմում է Բարդածանը*, որ Եդեսիայից էր... Որովհետև նա մեր կողմերն եկավ՝ հուսալով, թե կկարողանա որևէ հետևող գտնել վայրենի հեթանոսներիս մեջ, բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ՝ նաև թագավորների գործերը: Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանեց ասորերենի և ապա նրանից՝ հունարենի:

** Բարդածանը (154–223) ասորի հեղինակ է, համարվում է ասորական քրիստոնեական մատենագրության հիմնադիրներից մեկը:*

Լատիներեն արձանագրություն Արտաշատից՝ կանգնեցված Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսի (161–180 թթ.) անունից (լուսանկարը և գծանկարը՝ վերականգնումով)

§ 5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմագրությունը: Օտար աղբյուրներից տեղեկանում ենք, որ Հայաստանի վաղ պետական կազմավորումներն (Արատտա, Հայասա) ունեցել են արքունի գրագրություն, ինչպես նաև արքայական արխիվներ: Դրանք, սակայն, չեն պահպանվել: Հայաստանում գտնված պատմագիտական բնույթ ունեցող առաջին արձանագրությունները վերաբերում են Վանի թագավորության ժամանակաշրջանին:

Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Արամազդի պաշտամունքի կենտրոն Անի ամրոցում գոյություն է ունեցել մեհենական պատմագրության դիվան (արխիվ): Մեհենական պատմություններն ի մի են բերվել Մար Աբաս Կատինայի, Օղյումպ քրմի և այլոց երկերում:

Տիգրան Մեծի մասին երկեր են գրել հույն մատենագիրներ Մետրոդորոս Սկեփսացին և Ամֆիկատրես Աթենացին, որոնք, դժբախտաբար, մեզ չեն հասել:

Արտավազդ II արքան հիշատակվում է որպես ողբերգությունների, ճառերի և պատմական երկերի հեղինակ, որոնք հայտնի են եղել նաև Հռոմում: Իսկ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Հայկազունների արքայատոհմի մասին գրվել է 4 մասից բաղկացած «Հյուսումն Պիտոյից» չափածո երկը:

Պատմագիտական կարևոր տեղեկություններ են հաղորդում հայոց արքաների

Ասպղային երկնքի քարտեզ–ժայռապատկերներ Սև սարից. Գեղարքունիքի մարզ

Դպրության ասպված Տիր–Ապոլոնի պապիկերաքանդակը Նեմրութի սրբավայրում

0.5	10	100
1	11	200
2	12	300
3	20	1000
4	30	2000
5	50	10000
6	60	14000
7	70	22 000
8	80	1000000
9	90	...

Սեպագիր թվանշանների աղյուսակ

թողած հունարեն և արամեատառ արձանագրությունները և հատած դրամները:

Թվաբանությունը: Հին Հայաստանում գործածել են թվաբանական երեք տեսակի համակարգեր: Առաջինը մեհենականն էր, որոնցում թվերը նշվում էին կետերով, շրջանակներով ու պայմանական նշաններով: Երկրորդը սեպագիրն էր, որը թույլ էր տալիս գրել ցանկացած թիվ: Ք. ա. III դարից սկսած, ինչպես գիտենք, մեր նախնիները սկսել են կիրառել հունական և արամեական այբուբենները: Յուրաքանչյուր տառ ուներ նաև թվային արտահայտություն:

Տիեզերագիտությունը և օրացույցը: Աստղային երկնքին վերաբերող վաղագույն գիտելիքների մասին մենք տեղյակ ենք նախնադարի պատմության բաժնից: Հիշենք ժայռապատկեր–օրացույցները, Մեծամորի աստղադիտարանը:

Հին Հայաստանի գիտական մտքի մեծ նվաճումներից էր արեգակնային օրացույցը: Այն բաղկացած էր 365 օրից, ուներ 30–օրյա տասներկու և մեկ 5–օրյա (տոնական) ամիս: Հատուկ անուններ ունեին և՛ ամիսները, և՛ օրերը, և՛ օրվա 24 ժամերը: Հայոց Բուն տոմարը *սկզբնավորվել է Ք. ա. 2492 թվականի օգոստոսի 11–ին:* Ըստ ավանդության՝ դա այն օրն էր, երբ Հայկը կործանեց բռնակալ Բելին:

Հայոց օրացույցը բարեփոխվել և ճշգրտվել է Արտաշես I–ի օրոք:

Այլ գիտությունները: Հին Հայաստանում զարգացած էին նաև գիտության այլ ուղղությունները: Հիշենք, որ ըստ հույն

Թվեր	Հայկական մեհենանշաններ	Եգիպտական հիերոգլիֆներ	Սեպագիր նշաններ	Խեթա-լուվիական հիերոգլիֆներ
1	•, °	|	▼	|
3	∴, ⁝, ∴, ⁝, •••, °°°, ⁝	| | |	▼▼▼	| | |
5	⁝, ⁝, ⁝, ⁝, ⁝, ⁝, ⁝, ⁝	| | | | |	▼▼▼	| | | | |
10	⊙, ⌉	∩	‹	—
100	×, ◡	ⲣ	▼►	⊠

Թվանշանային համակարգերը Հին Արևելքի տարբեր երկրներում

պատմիչ Քսենոփոնի՝ Տիգրան Երվանդյանն աշակերտել էր մի փիլիսոփայի, և ինքն էլ հայտնի էր իր իմաստությամբ ու տաղանդով:

Արտաշես Ի–ի որդի Վրույրին Մովսես Խորենացին հիշատակում է իբրև ***«այր իմաստուն և բանաստեղծ»,*** սակայն չի նշում նրա ստեղծագործությունների մասին:

Քրիստոսից առաջ I դարում Լուկուլլոսի արշավանքի ժամանակ Հայաստանից Հռոմ գերի է տարվում գիտնական և հռետոր Տիրան Հայկազնը: Նա ***«իր գիտնականության շնորհիվ մեծ հարգանքի արժանացավ»*** Հռոմում, դարձավ Ցիցերոնի (Կիկերոնի) մտերիմներից մեկը և ղեկավարեց նրա հիմնած քերականության և ճարտասանության դպրոցը:

Արևի ժամացույց Զվարթնոցից: Ժամացուցների այս տեսակն առաջացել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր ժամանակաշրջանից են մեզ հասել պատմագիտական բնույթ ունեցող առաջին արձանագրությունները:
2. Ըստ Մովսես Խորենացու՝ որտեղ է գոյություն ունեցել մեհենական պատմագրության դիվան (արխիվ): Ովքե՞ր են ի մի բերել մեհենական պատմությունները:
3. Ո՞ր հեղինակներն են աշխատություններ գրել Տիգրան Մեծի մասին: Ի՞նչ գիտեք Արտավազդ II–ի ստեղծագործությունների մասին:
4. Հին Հայաստանում քանի տեսակի թվաբանական համակարգեր են գործածվել: Ներկայացրե՛ք դրանք:
5. Ներկայացրե՛ք հայկական արեգակնային օրացույցը:
6. Ո՞վ էր Տիրան Հայկազնը, պատմե՛ք նրա մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեհենական պարմություններ, Մար Աբաս Կատինա, Օղյումպ քուրմ, «Հյուսումն Պիտոյից», արեգակնային օրացույց, տիեզերագիտություն, հռետոր, քերականության և ճարտասանության դպրոց

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՕՂՅՈՒՄՊ ՔՐՄԻ ՄԱՍԻՆ

... Եվ սա մեզ հաստատապես պատմում է Անիի Օղյումպ քուրմը՝ գրողը մեհենական պատմությունների և բազում այլ գործերի, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև պարսից մատյանները և հայոց վիպասանների երգերը:

§ 6. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Ճարտարապետությունը: Նախնադարի բաժնում մենք արդեն ծանոթացել ենք համաշխարհային ճարտարապետության առաջին հուշարձաններին, որոնք ստեղծվել են Հայկական լեռնաշխարհի հարավում և Միջագետքի հյուսիսում: Ք. ա. III–II հազարամյակներում, ողջ Հայկական լեռնաշխարհում կառուցվում են ամրոցներ, տաճարներ, բնակարաններ, դամբարաններ և այլ շինություններ:

Հատված Տուշպա–Վանի բերդից

Վանի թագավորության շրջանից ևս մեզ հայտնի են մեծ թվով քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, դամբարաններ և այլ շինություններ:

Ք. ա. III դարից Հայաստանում սկսվում է հելլենիստական ժամանակաշրջանը: Այս շրջանում կառուցվեցին մեծ թվով նոր քաղաքներ ու ամրոցներ (Սամոսատ, Արշամաշատ, Երվանդաշատ, Բագարան, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ և այլն), պալատներ, տաճարներ, դամբարաններ, հասարակական և այլ շինություններ: Պահպանված պաշտամունքային կառույցներից հատկապես աչքի են ընկնում ***Նեմրութ լեռան սրբավայրը, Գառնիի տաճարը, Հին Արտաշատի*** շինությունները և այլն:

Երվանդաշատի միջնաբերդի ավերակները

Քանդակագործությունը: Նեմրութ լեռան սրբավայրում քանդակված են աստվածների 8–9 մետրանոց արձաններ, սրբավայրը կառուցող Անտիոքոս Երվանդունու և նրա նախնիների պատկերաքան-

Կոմմագենեի թագավորության մեծ սրբավայր Նեմրութի արևելյան հարթակը, Ք. ա. I դ., կառուցող՝ Անտիոքոս I Երվանդական

Անահիտ մայր դիցուհու բրոնզաձույլ արձանի գլուխը Փոքր Հայքից

Վանի թագավորության բրոնզե պատկերաքանդակ. ծիսական տեսարանում ներկայացված են երաժիշտներ ու դերասաններ

դակներ, թագավորության զինանշանները՝ առյուծ և արծիվ:

Իրենց բարձր արվեստով առանձնանում են Աստղիկ դիցուհու արձանը՝ գտնված Արտաշատից, մոր և մանկան արձանիկը՝ Արմավիրից, Անահիտ դիցուհու հայտնի բրոնզաձույլ արձանի գլուխը՝ Արևմտյան Հայաստանից, որն այժմ պահվում է Բրիտանական թանգարանում (Լոնդոն):

Արվեստի եզակի նմուշներ են Արտաշեսյան դարաշրջանի կախազարդերը: Արքայական շատ դրամներ արվեստի իսկական գործեր են հիշեցնում: Հատկապես առանձնանում են Տիգրան Մեծի և Արտավազդ II–ի դրամները: Դրանց վրա արքաների անուններից և տիտղոսներից բացի՝ պատկերված են աստվածներ, կենդանիներ և այլն:

Երաժշտությունը: Հին Հայաստանի երաժշտական մշակույթի մասին պատկերացում են տալիս հնագիտական իրերի վրա եղած պատկերները: Դրանց մեջ կան լարային, փողային, հարվածային գործիքներ, որոնցից մի քանիսն այսօր այլևս չեն գործածվում:

Թատրոնը: Թատրոնը Հայաստանում

սկզբնավորվել է դեռևս վաղնջական ժամանակներում: Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ հայկական հնագույն ասքերը մատուցվում էին բեմականացումների՝ *ցուցքերի* ու պարերի միջոցով:

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում հունալեզու թատրոններ են գործել վերնախավի համար: Նման թատրոններ կային Արտաշատում և Տիգրանակերտում: Դրանցում բեմականացվում էին ինչպես հույն, այնպես էլ հայ հեղինակների գործերը:

Թատերական կյանքի բացառիկ վկայություն է Բակուր արքայի (160–ական թթ.) արծաթյա թասը, որը հարուստ ձևավորված է թատերական տեսարաններով:

Երաժիշտ կնոջ քանդակ Էրեբունիից գտնված արծաթե գավաթի վրա Ք. ա. VI–V դդ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Նախորդ դասերից վերհիշեք հնագույն շրջանում հայկական ճարտարապետության մասին ձեր ունեցած գիտելիքները:
2. Ինչ նշանավոր քաղաքներ ու հուշարձաններ են ստեղծվել Հայաստանում հելլենիստական ժամանակաշրջանում:
3. Նախաքրիստոնեական Հայաստանում ստեղծված բարձրարվեստ քանդակագործական ինչ նմուշներ գիտեք:
4. Ինչ գիտեք Հին Հայաստանի երաժշտական մշակույթի մասին
5. Քանի՞ տեսակի թատրոն կար հին Հայաստանում: Ներկայացրե՛ք դրանք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք և լրացրե՛ք հին Հայաստանի մշակույթին վերաբերվող գծապատկեր՝ նշելով բնագավառները, նմուշները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճարտարապետություն, ամրոցներ, տաճարներ, դամբարաններ, հելլենիստական ժամանակաշրջան, Նեմրութի սրբավայր, բարձրաքանդակներ

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ք. ա. IX դարում առաջացավ համահայկական առաջին թագավորությունը: Հաջորդ դարում այն դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը: Այն կարևորագույն դեր է խաղացել Հայաստանի պատմության մեջ:

• Ի՞նչ անուններով է հայտնի համահայկական առաջին թագավորությունը: Թվարկե՛ք նրա հզոր արքաներին, ինչո՞վ են նրանք հայտնի: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր դրա անկման գլխավոր պատճառը:

2. Ք. ա. VII դարի վերջին Հայկական լեռնաշխարհի տարածքում սկզբնավորվեց երկրորդ համահայկական պետությունը, որը հայտնի է Հայկազունի Երվանդունիների թագավորություն անունով: Այն գոյություն ունեցավ մինչև Ք. ա. III դարի վերջը:

• Ո՞վ էր նրա հիմնադիր արքան, իսկ ո՞վ է նրա անվանադիր արքան: Ինչպե՞ս է բնութագրել Տիգրան Երվանդյանին Մ. Խորենացին: Ո՞ր տերության կազմում, ի՞նչ կարգավիճակով և որքա՞ն ժամանակ է գտնվել Հայաստանը Երվանդունիների օրոք: Պատմական ո՞ր իրադարձությունից հետո վերականգնվեցին Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները:

3. Ք. ա. II դարում Հայաստանում հաստատվում է նոր թագավորական հարստություն: Այս հարստության հիմնադիրը միավորեց Մեծ Հայքի հողերը, ամրապնդեց Հայոց թագավորությունը, բարձրացրեց նրա միջազգային հեղինակությունը:

• Ո՞ր արքայատոհմի մասին է խոսքը: Ո՞ր ճակատամարտից հետո հիմնադրվեց համահայկական երրորդ թագավորությունը: Ո՞վ սկսեց հայկական հողերի միավորումը: Պետությունը հզորացնելու նպատակով ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց նա: Վերհանե՛ք այդ բարեփոխումների նշանակությունը: Ի՞նչ պատվանուններով է նա հայտնի:

4. Ք. ա. I դարի առաջին կեսը հայոց պատմության ամենափառապանծ շրջանն է: Դա կապված է Տիգրան II Մեծի գործունեության հետ: Նա ստեղծեց աշխարհակալ տերություն, որը խոր հետք է թողել Հին աշխարհի պատմության մեջ:

• Ներկայացրե՛ք Տիգրան Մեծի աշխարհակալ տերության ստեղծման նախադրյալները: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք նրա տերության սահմանները, նորակառույց մայրաքաղաքը: Ճի՞շտ վարվեց արդյոք Տիգրան Մեծը՝ կնքելով Արտաշատի պայմանագիրը: Վերհանե՛ք Տիգրան Մեծի կերպարը:

5. Տիգրան Մեծից հետո Հայաստանում շարունակում էր իշխել Արտաշե-

սյան արքայատոհմը: Առաջավոր Ասիայում իշխանության համար մրցակցություն էր ծավալվել ժամանակի երեք մեծ պետությունների միջև: Այդ պայքարի արդյունքում Արտաշեսյան արքայատոհմը անկում ապրեց:

• Ո՞վ հաջորդեց Տիգրան Մեծին, ինչո՞վ է նա հայտնի: Փորձե՛ք պարզաբանել Արտաշեսյան արքայատոհմի անկման պատճառները:

6. I դարի առաջին կեսին Հայաստանում գահակալության պայքար էր ծավալվել: Գահին մեկը մյուսին հաջորդում էին դրածո թագավորները: Ի վերջո, հայ նախարարական դասի և ժողովրդի համաձայնությամբ հայոց գահին բազմեցին Պարթև Արշակունիները:

• Ո՞ր տերություններն էին միջամտում հայոց գահի համար պայքարին: Արշակունիների գահակալությունը ե՞րբ դարձավ ժառանգական: III դարի սկզբներին ինչո՞ւ սրվեցին հայ–պարսկական հարաբերությունները: Նույն դարավերջին ինչո՞վ ավարտվեց ռազմաքաղաքական պայքարը մեր տարածաշրջանում: Տրդատ III–ը ե՞րբ վերջնականապես հաստատվեց հայոց գահին:

7. I դարում Պաղեստինում հիմնադրվեց համաշխարհային միաստվածային նոր կրոն՝ քրիստոնեությունը: Այն աստիճանաբար տարածվեց, և քրիստոնեական համայնքներ ու եկեղեցիներ հիմնվեցին Հայաստանում:

• Վերհիշե՛ք քրիստոնեության տարածման ընթացքը Հայաստանում: Ովքե՞ր էին Հայ առաքելական եկեղեցու հիմնադիրները: Ներկայացրե՛ք Գրիգոր Լուսավորչի գործունեությունը:

8. Համահայկական թագավորությունները նոր փուլ արձանագրեցին հայոց պետականության զարգացման գործում: Նրանք ունեին միանման պետական կառավարման համակարգ: Անցումը համադաշնությունից կենտրոնացված պետության տեղի ունեցավ Վանի թագավորության օրոք և որոշակի փոփոխություններով պահպանվեց մինչև հայոց պատմության հին շրջանի ավարտը:

• Վանի ո՞ր թագավորը ստեղծեց կենտրոնացված պետության կառավարման համակարգ: Գծակարգի տեսքով ներկայացրե՛ք Հին հայաստանի պետական կառավարման համակարգը: Ի՞նչ դեր էր խաղում բանակը: Թվարկե՛ք հայոց բանակի տարած փառավոր հաղթանակներից մի քանիսը:

9. Հայաստանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են եղել տնտեսության զարգացման համար: Հողագործության զարգացման նպատակով կառուցվել են ոռոգման համակարգեր: Հաստատվել էին տնտեսական սերտ կապեր հարևան և հեռավոր երկրների հետ:

• Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Հին Հայաստանում: Հիմնականում ո՞ր երկրների հետ էին առևտուր անում: Նշանավոր ի՞նչ ջրանցքներ են կառուցվել:

10. Հին Հայաստանի հասարակությունը համահայկական թագավորու-

թյունների օրոք ձեռք բերեց որոշակի սոցիալական կառուցվածք: Հատկապես հելլենիզմի ժամանակաշրջանում հիմնվեցին բազմաթիվ նոր քաղաքներ, ավելացավ քաղաքային բնակչության թիվը:

• Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք հին հայկական հասարակության սոցիալական կառուցվածքը: Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք հիմնադրված քաղաքները, ո՞ւմ օրոք և ե՞րբ են կառուցվել: Ներկայացրե՛ք գյուղական համայնքի բնութագիրը: Ո՞ր խավն էր կազմում հիմնական աշխատող ուժը Հին Հայաստանում:

11. Հին Հայաստանում բարձր զարգացման էր հասել մշակույթը: Ստեղծվել են ազգային և համամարդկային նշանակության արժեքներ: Զարգացած էին գիտությունը, գիրն ու գրականությունը, ժողովրդական բանահյուսությունը, արվեստի տարբեր ճյուղերը՝ ճարտարապետությունը, քանդակագործությունը, թատրոնը, երաժշտությունը:

• Հնագույն շրջանից մշակույթի ի՞նչ նմուշներ են մեզ հասել: Ո՞ւմ շնորհիվ են մեզ հասել հայկական առասպելների մեծ մասը: Թվարկե՛ք ձեզ հայտնի առասպելները: Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք հին հայկական դիցարանը և հելլենիզմի շրջանում դրանում կատարված փոփոխությունները: Գրային ի՞նչ համակարգեր են օգտագործվել Հին Հայաստանում: Ո՞ր պատմիչներն են տեղեկություններ հաղորդել հայկական գրերի և գրականության մասին: Գիտության ո՞ր ճյուղերն էին զարգացած:

Հայոց պատմության մասին նյութեր պարունակող համացանցային կայքէջեր
Խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ կայքէջերից.

armhistory.ru/
www.findarmenia.com/arm/history/
hy.wikipedia.org/wiki/
freebooks.do.am
armenianhouse.org/armenian-history-am.html
dasatu.ru
giteliq.am
www.encyclopedia.am
www.e-armenians.com

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ա. 2 մլն – մոտ Ք.ա. XII հազարամյակ — Հին քարի դարը (պալեոլիթ) Հայաստանի տարածքում

Մոտ Ք.ա. XII – X հազարամյակներ — Միջին քարի դար (մեզոլիթ)

Ք.ա. X–VII հազարամյակի կեսեր — Նոր քարի դար (նեոլիթ)

Ք.ա. VI հազարամյակի կեսերից -V հազարամյակի կեսեր — Պղնձի–քարի դար (էնեոլիթ)

Ք.ա. IV–III հազարամյակներ — Բրոնզի դար

Ք.ա. XXVIII–XXVII դդ. — Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորման՝ Արատտայի մասին հիշատակությունները

Ք.ա. XXIV–XXIII դդ. — Հայա, Սուբուր, Արմանի վաղ պետական կազմավորումների հիշատակությունը արձանագրություններում

Ք.ա. XXII դ. — Կուտիական աշխարհակալությունը

Ք.ա. XV–XIII դդ. — Հայասա թագավորությունը

Ք.ա. XXIII–IX դդ. — Նաիրի երկիրը

Ք.ա. 859 թ. — Ուրարտուի առաջին արքա Արամուի անվան հիշատակությունը ասորեստանյան արձանագրություններում

Ք.ա. մոտ 835–825 թթ. — Սարդուրի I–ի գահակալումը

Ք.ա. մոտ 830–ական թթ. — Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնադրումը

Ք.ա. մոտ 810–786 թթ. — Մենուայի գահակալումը

Ք.ա. 786–764 թթ. — Արգիշտի I–ի գահակալումը

Ք.ա. 782 թ. — Էրեբունի ամրոցի հիմնադրումը

Ք.ա. 776 թ. — Արգիշտիխինիլի քաղաք–ամրոցի հիմնադրումը

Ք.ա. 764–735 թթ. — Սարդուրի II–ի գահակալումը

Ք.ա. 685–645 թթ. — Ռուսա II–ի գահակալումը

Ք.ա. 612 թ. — Պարույրի գլխավորությամբ Հայկազունների թագավորության վերականգնումը

Ք.ա. 521–331 թթ. — Հայկազունի–Երվանդականների՝ որպես սատրապների իշխանությունը Հայաստանում

Ք.ա. 331 թ. հոկտեմբերի 1 — Գավգամելայի ճակատամարտը և Հայաստանի անկախության վերականգնումը

Ք.ա. մոտ 260–240 թթ. — Շամ (Սամոս) Երվանդականի գահակալումը. Սամոսատի հիմնադրումը

Ք.ա. մոտ 220–201 թթ. — Երվանդ IV–ի գահակալումը

Ք.ա. 201 թ. — Մեծ Հայքում Երվանդական ճյուղի իշխանության ավարտը

Ք.ա. 190 թ. — Մագնեսիայի ճակատամարտը

Ք.ա. 189–163 թթ. — Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմմագենեի անկախացումը
Ք.ա. 189–մոտ 160 թթ. — Արտաշես I–ի գահակալումը
Ք.ա. 185 թ. — Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրամը
Ք.ա. 160–115 թթ. — Արտավազդ I–ի գահակալումը
Ք.ա. 115–95 թթ. — Տիգրան I–ի գահակալումը
Ք.ա. 95–55 թթ. — Տիգրան II–ի գահակալումը
Ք.ա. 94 թ. — Ծոփքի և Կորդուքի միացումը Մեծ Հայքին
Ք.ա. 94 թ. — Հայ–պոնտական դաշինքի կնքումը
Ք.ա. 87 թ. — Հայ–պարթևական հաշտության պայմանագրի կնքումը
Ք.ա. 84 թ. — Տիգրան Մեծի բազմելը Սելևկյանների գահին
Ք.ա. 80–70–ական թթ. — Տիգրանակերտի կառուցումը
Ք.ա. 69 թ. գարուն — Հայ–հռոմեական պատերազմի սկիզբը
Ք.ա. 69 թ. հոկտեմբեր — Տիգրանակերտի ճակատամարտը
Ք.ա. 68 թ. սեպտեմբեր — Արածանիի ճակատամարտը
Ք.ա. 66 թ. — Արտաշատի պայմանագրի կնքումը
Ք.ա. 55–34 թթ. — Արտավազդ II–ի գահակալումը
Ք.ա. 53 թ. — Խառանի ճակատամարտը
Ք.ա. 30–20 թթ. — Արտաշես II–ի գահակալումը
Ք.ա. 20–8 թթ. – Տիգրան III–ի գահակալումը
Ք.ա. 8–5 թթ. — Տիգրան IV–ի գահակալումը
Ք.ա. 2–1 թթ. — Տիգրան IV–ի և Էրատոյի գահակալումը
1 թ. — Արտաշեսյան թագավորության ավարտը
18–34 թթ. — Զենոն–Արտաշեսի գահակալումը
52 թ. — Վաղարշի և Տրդատի գլխավորությամբ պարթևական զորքի մուտքը Հայաստան
62 թ. գարուն — Հռանդեայի ճակատամարտը
65 թ. — Տրդատի մեկնումը Հռոմ
66–88 թթ. — Տրդատ I–ի գահակալումը
88–110 թթ. — Սանատրուկ II–ի գահակալումը
117–140 թթ. — Վաղարշ I–ի գահակալումը. Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը
185–198 թթ. — Վաղարշ II–ի գահակալումը
198–215 թթ. — Խոսրով I–ի գահակալումը
216–252 թթ. — Տրդատ II–ի գահակալումը
287–330 թթ. — Տրդատ III–ի գահակալումը
298 թ. — Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագրի կնքումը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ
§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԼՃԵՐԸ, ԳԵՏԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆՕՐԱՆ

§ 1. ՆԱԽՆԱԴԱՐԻ ՊԱՐԲԵՐԱՅՈՒՄՆ ՈՒ ՎԱՂ ՓՈՒԼԵՐԸ
§ 2. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
§ 3. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 3. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

§ 1. ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ
§ 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՆԱԻՐԻ, ԲԻԱՅՆԻԼԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ԱՐԱՐԱՏ)

§ 1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ՏՈՒՇՊԱ–ՎԱՆԸ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ
§ 2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ
§ 3. ՎԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
§ 4. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ
§ 5. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Ք. Ա. VII–VI ԴԱՐԵՐՈՒՄ
§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ
§ 3. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ
§ 4. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք. Ա. III ԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
§ 2. ԱՐՏԱՇԵՍ I–Ի ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

§ 1. ՏԻԳՐԱՆ II–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ: ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ
§ 2. ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ
§ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ
§ 4. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
§ 5. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ
§ 6. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՎԱՋԴ II–Ի ՕՐՈՔ
§ 7. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I–III ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
§ 2. ՏՐԴԱՏ I–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
§ 3. ՎԱՂԱՐԱՇ I: ՎԱՂԱՐՇ II–Ը
§ 4. «ԺԱՄԱՆԱԿ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»
§ 5. ՏՐԴԱՏ III–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 6. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ
§ 2. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ
§ 3. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
§ 4. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ԳԼՈՒԽ 7. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ
§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՊԵՐԳԵՐԸ
§ 3. ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ
§ 4. ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ
§ 5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
§ 6. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ